

Գ. ԼԵՒՈՆԵԱՆ



ՀԱՅ ԱԶՈՒՂՆԵՐ




Handwritten text at the top of the page, possibly a title or header, written in a cursive script.

III

IV

Small handwritten text or markings near the bottom center of the page.

Small handwritten mark or symbol at the bottom right corner.





ՀՐԵՏԵՐԵԿՈՒԹԻՒՆ „ՇԻՐԵԿ“ ԳՐԵՎԸՃԸՌՈՒՆՈՑԻ.

№ 1

# ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ



ԱՇԽԱՏ.

Գ. Զ. ԼԵՒՈՆԵՆ.



Ասի՛ աշնդ, առ չունդուրդ,  
Մեզ բան ասան սրտալի,  
Կարօտ ենք քու անուշ ձէնին,  
Մի բան ասան սրտալի. . .

Յով. Յովհաննիսէան.



ԱԼԷԿՍԱՆԴՐՈՍ.

ՏՊԱՐԱՆ ԳԵՈՐԳ Ս. ՍԱՆՈՑԵԱՆՑԻ:

1892

824

Дозволено цензурою. Тифлисъ, 9-го Января 1892 года.

Типографія К. С. Саноявца, Александрополь,  
Бебутовская ул., соб. д.

Մ Ն Ա Յ Ր Ի Կ Ի Ս

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Կ Ա Ն Ե Ր Գ Ի Չ

Ա Շ Ո Ւ Ղ Զ Ի Ի Ա Ն Ո Ւ Ն

*որդիական ջերմ սիրով*

Ն Ո Ւ Ի Բ Ո Ւ Մ Ե Մ

Գ Ր Ք Ո Յ Կ Ս.

Քո՛ւ և քո արհեստակիցների եռանդալից և զգայուն ջանքերը աչքի առաջ ունենալով, վճռեցի Ձեր կեանքից և Ձեզ վերաբերեալ մի տեսոր հրատարակելու. վերջապէս յաջողուեց դժբոյկիս լոյս տեսնելը: Այժմ, հայրիկ, որ չեմ կարող Ձեր դէպի ինձ հասցրած բարիքների փոխարէնը լիովին հատուցանել, գոնէ խնդրում եմ ընդունեցէք Ձեր անդրանիկ որդու այս փոքր աշխատութիւնը:

Ձեր երախտագէտ որդի Գարեգին.

Խոզիս Յոզի մայրամիտը

Մ Յ Մ Ա Ս Դ Դ Զ

Մ Ր Յ Ո Ղ Գ Բ



Մ Ի Ք Ա Ն Ի Խ Օ Ս Ք .

Տեսնելով որ աշուղներն էլ մեր ժողովրդի մէջ քիչ շատ հաշակ են ունեցել, գիտենալով որ աշուղներն էլ իւրեանց ածելով և երգելով բաւականին մխիթարել են ազգին, շարունակ ման դալով և մտնելով ժողովրդի ամեն դասակարգի խաւերի մէջ՝ և բաց անելով իւրեանց պարզ սիրտը հասարակութեան առաջ, երգելով իւրեանց կամ մի որ և է բանաստեղծի յօրինած մեղամաղձոտ երգերը՝ որ յիշեցնում են իւրեանց հայրենակիցների փառաւոր անցեալը և արծարծում նրանց մէջ քաջութեան տաք արիւն և հայրենասիրական ջերմ ոյժ, մենք չ' ուզեցինք որ բուն աշուղների յիշատակները կորցուի, այլ կամեցանք հաւաքել և բոլորը միասին մի ամփոփ գիրք կազմել, կարծելով որ հետաքրքրուողներ շատ կ' լինին:

Ահա պէտք է ասել, որ այս դարում մեր ժողովրդի մեծամասնութիւնը, մանաւանդ գիւղացիները դեռ մնում են նահապետական դրութեան մէջ՝ և այդ ստուար բազմութեանը, այդ ահագին հասարակութեանը, հաւատացէք որ մեծամեծ մարդկանց նկատողութիւնները և նրանց գրուածքները այն ազդեցութիւնը, այն դրդումը չեն ունենալ նրանց վերայ, (որովհետեւ չեն հասկանում) որքան հասարակ աշուղների ժողովրդական պարզ երգերն ու պատմութիւնները:

Յիշեալ աշուղներին և նրանց երգերին մեր ընթերցող հասարակութեանը ծանօթացնելու համար, հարկաւոր համարեցինք որքան կարելի է աշխատել, աւելի բազմակողմանի նիւթեր հաւաքելու:

Թէև մենք շատ կ' ցանկանայինք որ մեր այս ձեռնարկութիւնը պատկերազարդ հրատարակէինք, բայց բացի այն որ թանգ կ' նստէին, որ մեր ժողովրդին մատչելի չէր լինի, և էլ ռոտեղից կարողէինք նրանց պատկերները ձեռք բերել, քանի որ նրանց շատերի ժամանակներում դեռ լուսանկար չ' կար իսկական նկարը հանելու:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]*

# ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

Ա.

«ԱՇՈՒՂ» ԲԱՌԸ ԻՒՐ ԲՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ.

Ամեն աշուղ երգիչ է. ամեն երգիչ աշուղ չէ՛:

Գրքոյկիս վերնագիրը Հայ աշուղներ զնելով՝ անհրաժեշտ ենք համարում նախ յայտնել մեր ընթերցողներին՝ թէ ի՞նչ է կամ ո՞վ է աշուղը:

Պարսկերէն Աշգ կամ Աշգ բառը, որ կ' նշանակէ առաջինը «սիրահարութիւն» և երկրորդը նոյնպէս «սիրահար», մեր ժողովուրդը այդ բառը հայերէն հնչիւնին մօտ Աշուղ բառնէ արտասանում. թէև իսկ հայերէն չէ: Աշուղ բառը որ մենք ինչ մտքով ենք հասկանում, հայերէն կարելի է ասել մի քանի բառերով. օրինակ գուսան, երգիչ, նուագաճու, երաժիշտ, բայց մենք բուն աշուղ պէտք է հասկանանք նրան, որ բանաստեղծ է տճկ. «շիր» և երաժիշտ-երգիչ: Այդ թողնենք, որ Աշուղ բառը մեզանում ծանօթ է դրա համար մենք ընդունեցինք այդ բառը մեր գրքոյկի վերնագիրը զնելու. հիմա դանք այն հարցին, թէ ինչու ժողովուրդը երաժիշտ երգիչներին «աշուղ» կամ «աշղ» է ասում: Արովհետև Տաճկաստանում և Պարսկաստանում հին աշուղներից շատերը սիրահարուած մարդիկ են եղել, ժողովուրդը նրանց ասելիս է եղել «աշգ երգիչներ, այսինքն սիրահար երգիչներ. յետոյ ամբոխը կարծելով թէ «աշգ երգիչ է նշանակում, մինչև հիմայ էլ երաժիշտ երգիչներին աշղ կամ աշուղ են ասում:

Բայց պէտք է ասել որ ամեն բանաստեղծ-երգիչ և երա-  
ժիշտ աշուղ չէ: Օրինակ՝ մէկ մարդ լաւ երգում է, ունի գրած  
երգեր, ոտանաւորներ, և գիտէ մի որ և է երաժշտական գործիքի  
վրայ ածել. այդպիսի դէպքերում դրան չէ կարելի աշուղ հա-  
մարել: Աշուղութիւնը մի առանձին արհեստ է\*): Կան և եղել  
են վարպետներ, և նոր սովորողներ, մեզանում գուցէ եղել են  
և այնպիսիները, որոնք յայտնի չեն մեզ:

Կան և մի տեսակ բանաստեղծներ, որ աշուղական արհես-  
տին լաւ տեղեակ են. ունին յօրինած երգեր աշուղական ձևերով,  
բայց ածել չ' գիտեն. կամ եթէ գիտեն էլ մասնաւոր. և ոչ մի ժա-  
մանակ աշուղութեամբ չեն պարապել: Դրանց ասում են «ղէկէմ-  
շուկէրէսի» ներ այսինքն գրչով բանաստեղծներ. օրինակ Գիւրջի-  
Նաւէն, Քեանհանը, և այլն: Բայց մեր ծրագրից դուրս լինելով՝  
աւելորդ համարեցինք դրանց էլ աշուղական ցանկի մէջ մտցնել:

## Բ.

### Ա Շ Ո Ւ Ղ Ի Կ Ե Ա Ն Ք Ը.

Աշուղների կեանքի հետ մենք բաւականին ծանօթ լինելով,  
կարող ենք խօսել նրանց բնաւորութեան վերայ:

Մենք նկատել ենք այժմեան աշուղների մէջ, և հին ա-  
շուղների մասին էլ լսել ենք և նրանց երգերից էլ հասկանալի է որ  
աշուղը առհասարակ լինում է խոնարհ, սրամիտ, և վառվառն  
մարդ. (կ' պատահի բացառութիւններ) այդ յիշեալ ածականները  
յայտնի երևում են հետևեալ դէպքերում:

Խոնարհ են՝ որովհետև խնջոյքներում կամ մի որ և է մար-  
դաշատ տեղերում համեստ՝ քաղցրաբարոյ, և համբերող կ' լինեն,  
միշտ չեզոք մնալով: Սրամիտ են՝ որովհետև մի մասնաւոր մարդ  
կամ մի այլ աշուղ երբ ոտանաւորով մի հարց է առաջարկում,  
նա անմիջապէս պատասխանում է նոյն ոտանաւորով. կարդացա-

\*) Այդ արհեստի մասին տեղեկութիւն Գ. դէտում:

Տը կամ մի տեղից բան լսածը մտքի մէջ պահելու էլ առանձին ընդունակութիւն ունին:

Վառվռուն են՝ որովհետեւ նրանք շատ ժամանակ պատահելով ուրախութիւնների (քէֆերի) մէջ կամ հարսանիքներում և հրաւերներում, մեծ մասամբ նրանց կ' տեսնենք ուրախ տրամադրութեան տակ, և ծիծաղ դէմքով: Մենք պատահել ենք մի քանիսին, որ շտապով մի տեղ գործի գնալիս՝ մի ինչ որ եղանակ մտքի մէջ դունդունալով (մեղմ ձայնով) երգում է: Աշուղ Շիրինի համար պատմում են թէ՛ դեռ պատանի ժամանակ այնպէս վառվռուն այնպէս կրակոտ է եղել, որ ածելու կամ երգելու ժամանակ նստած տեղից օրօրուելով հեռանում էր. և հայրը կամ ուրիշ մարդիկ նորից բերում էին իւր տեղը նստեցնում. ու դարձեալ նա եռանդուն երգելու ժամանակ երեք չորս քայլաչափ հեռանում էր:

Հայ աշուղներից փոքր մասը ունենալով ապրուստի ուրիշ աղբիւրներ, (օր. դերձակ, ոսկերիչ և այլն) կարօտ չեն դէս ու դէն թափառելու ոմանք էլ իւրեանց տանը նստած կամ գրում են հեքեաթներ և երգեր, կամ շինում նորոգում են երաժշտական գործիքներ և այլն: Իսկ դրանց հակառակ, կան և թափառական աշուղներ, որոնք չ'ունենալով ապրուստի ուրիշ եկամուտ, ստիպուած են ման գալ գիւղից-գիւղ կամ երբեմն էլ քաղաք, որ փող աշխատեն իւրեանց ընտանիքը կառավարելու: Նրանք մեծ մասամբ լինում են գիւղացիներ: Մեզ շատ են պատահում Ալէքսանդրապոլում Զանգեզուրի կողմերից մանաւանդ Խնձորիկ գիւղից եկած թափառական աշուղներ, որոնք զոյգ-զոյգ կամ մենակ ման են գալիս փողոցներում:

Անցեալ 1890 թուականի Սեպտեմբեր ամսին Ս. Էջմիածնում Ս. Միւռոնի օժման հանդիսի օրն էր, որ պատահեցինք մի խումբ աշուղների, որոնք նստած հրապարակի վրայ ժողովրդի բազմութեան մէջ պատմում և երգում էին Աշուղ Ապրիլի հայերէն հեքեաթը. այնտեղ հետաքրքրուողներ շատ կային մենք էլ կանգնեցինք և լսում էինք. մի քիչ մնալուց յետոյ հեռեցանք:

(Դրանք նոյնպէս Զանգեազուրցի էին):

Պէտք է ասել որ լաւ աշուղները որոնք հմուտ և բանիմաց մարդիկ են, մեզանում բաւականաչափ պատիւ են վայելում թէ բարձր դասակարգից թէ հասարակութիւնից, մանաւանդ գիւղացիներից: Տեսնում ես գիւղացի աշուղը գիւղում մի տան մէջ նստած սեղանի գլխում, բիսհանայի հանգէպ երգում է. նա քիչ է պատահում որ ազգային նիւթերից մի բան երգէ, նրա պատմած և երգածը լինում են հեքեաթներ, աւանդութիւններ և առասպելական բաներ (մեր խօսքը ամենի համար չէ):

Աշուղների կեանքի և բնաւորութեան վերաբերեալ այս չափը գրելով կանգ ենք առնում. մեր ընթերցողները աւելի լաւ կ' ծանօթանան աշուղների կեանքի հետ, երբ բոլորը վերջացնեն կարդալուց:

## Գ.

ԱՇՈՒՂՆԵՐԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Մեր նոր աշուղները աւելի շատ Ալէքսանդրապոլի կողմերում միմեանց հետ մի գաղտնի բանի վրայ խօսելիս, խօսում են «թարս» լեզուով. «թարս» լեզուն կամ հակառակ լեզուն որ ասում է և աշուղական լեզու, ուրիշ բան չէ եթէ ոչ հայերէն, բայց բռները դարձուած հակառակ կերպով. բայց ոչ թէ տառ առ տառ հակառակ ինչպէս գրիչ բռնին «չիրգ» ասելով, այլ գրիչ ասելիս, ասում են «րգիչ» բազմաձևակ բռները այդպէս, իսկ միաձևակ բռները բոլորովին հակառակ են դարձնում. օրինակ փող ասելիս, ասում են «ղոփ» խօսակիցը ամենաշուտ հասկանում և պատասխանում է. այս «թարս» լեզուն մեր աշուղներին շատ կ' հարկաւորուի հարսանիքատներում կամ ուրիշ տեղերում. ժողովրդի մէջ նրանք ծածուկ բաների վրայ խօսելիս, եթէ օտար լեզու գիտենան էլ, չեն կարող խօսել բանի որ ժողովրդից էլ հասկացողներ կ' լինեն:

Օրինակ աշուղներից մինը հարցնում է իւր աւագ ընկերոջը թէ «չի՞ն տիպի լաչենք» այսինքն «ի՞նչ պիտի չալենք (ածենք)»: Նա պատասխանում է «ղտերք թէ յգունի շարմը տապրատոցեվէք լաչելու» այսինքն «տղերք Ձէյթունի մարշը պատրաստուեցէք չալելու»:

Մենք անձամբ պատահել ենք երկու աշուղների որոնք այնպէս արագ խօսում էին միմեանց հետ «թարս» լեզուն, որ մարդ դժուար թէ կարողանայ ուղիղ կերպով այդպէս խօսել:

Այս լեզուն հին աշուղները չ' գիտէին, սա նորերն են հրնարել, թէև յայտնի չէ իսկական հնարողը, բայց յայտնի է որ Աշղ-Շիրինի ժամանակներին է բերուած Ալէքսանդրապոլի կողմերը:

Մի աշուղ երբ նամակ է գրում իւր մտերիմ բարեկամներին մանաւանդ իւր արհեստակիցներից մինին, քիչ է պատահում որ նա արձակ ձևով գրէ. այլ գրում է ոտանաւորով, և պատասխանը ստանում է վերջինիցս դարձեալ նոյն տեսակ:

## Դ.

### ԱՇՈՒՂՆԵՐԻ ՄՐՅՈՒՄԸ ՄԻՄԵԱՆՑ ՀԵՏ:

Մրցումը լինում է աշուղների մէջ հետևեալ կերպով. մի որ և իցէ աշուղ երբ պատահում է մի անծանօթ աշուղի, նրանք ծանօթանալուց յետոյ սկսում են միմեանց հետ փորձուել թէ ո՞րը աւելի գիտութիւնով կ' յաղթէ միւսին: Առնում են սաղերը և միմեանց հանդէպ նստելով «թ է ք է լ լ է ւ մ» (բանակցութիւն խօսակցութիւն գրոյց) անել, երգելով և ածելով: Նրանցից մինը առաջարկում է ոտանաւորով մի հարց, միւսը նոյն ձևով պատասխանում է. այդպէս սկսում են նրանք երգի և երաժշտութեան հետ խօսքերով էլ վիճել միմեանց հետ և ծաղրելով, «դիպչելով» մինը միւսի վրայ, զուարճացնում են ունկնդիր ժողովրդին: Նրանք այնպէս ըստէարար պատրաստում և երգում

են որ մարդ զարմանում է. բայց դժուարն այն է որ նրանց ասածների ամենավերջին մասնիկները միատեսակ պիտի լինեն (տես «Նոր-Դար» № 15. 1890 թ. նամակ Ալեքսանդրապոլիցը): Այդ երկու հակառակորդներից մինը՝ հարցերին պատասխանողը եթէ մի քիչ ուշանում է՝ չի կարողանում շուտով պատրաստել և երգել, կամ այնպէս յարմար մասնիկ չի կարողանում գտնել, (որովհետեւ մի անգամ ասուածը, չի կարելի կրկնել) իսկոյն միւսը սրա ձեռից սազը խլում է և նրան յաղթած համարում. յաղթողը տեսնելով որ իւր ակոյեանը խոնարհում է, վերադարձնում է նրա սազը և սպանում թէ զնա՝ չափդ ճանաչիր, միւս անգամ քեզանից բարձրի հետ չ' մրցես:

Աշուղական մրցումը աւելի պարզ է հասկացւում «միւս-ամմա» (առակ. հանելուկ) կախ արած ժամանակ: Հանելուկի գրողը որ սովորաբար լինում է վարպետ աշուղներից մինը, որ առաջ գրում պատրաստում է, և կպցնելով մի շալի վրայ կախում է պատից: Հանելուկը լինում է բաւական դժուար կազմուած և խրթին ձևով, միայն տակը գրուած է լինում հանելուկի բացադրութեան քանի վանկ քանի տառ լինելը և տառերի բոլոր հաշուի գումարը: Օրինակ հանելուկի բացադրութիւնն է «մարդ» բառը. վանկ 1. տառ 4. հաշիւը 5205:

Քաղաքի մէջ հանելուկ կախ արած ժամանակ երբ լսում են միւս աշուղները, սազերով զնում են այնտեղ, ուրտեղ հանելուկը կախուած է լինում. երբ նրանք բոլորն արդէն հաւաքուած են լինում, հանելուկ գրողը վար է առնում իւր գրածը և բարձր ձայնով սկսում է կարդալ: Թէ աշուղները, և թէ այնտեղի հաւաքուած ժողովուրդը ուշադրութեամբ լսում են որ գուցէ կարողանան գտնել (լուծել): Նրբ վերջացւում է կարդալը, կրկին կախում են իւր տեղը և սկսում են երգել: Ամենից առաջ մի ոտանաւոր երգում է այն աշուղը, որ նրանց մէջ մեծ վարպետ է ճանաչուած. յետոյ հերթով երգում են բոլորը: Նրանց երգածները անպատրաստ բաներ են լինում և զանազան նիւթերի վրայ յօրինուած. ամեն մինը մինչև իւր հերթը հաս-



ները պատրաստում է մի տուն և ասում է (երգում է\*): պատահում է որ նրանք մինչև 10—15 հոգի են լինում:

Շատ կ' ցանկայի մի բանի օրինակներ բերել այստեղ, անցեալ 1890 թուականին Ալէքսանդրապոլում աշուղների մէջ տեղի ունեցած «հանելուկից», բայց մենք այն ժամանակ դեռ դիտաւորութիւն չունէինք ներկայ գրքոյկիս հրատարակութեանը որ մի բանի լաւ կտորներ հաւաքէինք: Պէտք է ասել որ այդ միմեանց հետ արած մրցումը շատ հեշտ բան չէ՝ համարեայ աշուղական արհեստի մէջ ամենադժուար կէտերից մինն է. ինչպէս լսել ենք մի աշուղի բերանից թէ «շնհորքը հանելուկի մեկները չէ, այլ նրա տակ նստած մրցելն է», և ուղիղ որ այդպէս է: Ժողովրդից էլ պատահում են հանելուկը լուծողներ, բայց նրանցից ոչ մինը ի հարկէ չի կարողանում ինչպէս ասում են «գիտութեան կրկէս» դուրս գալ:

Ինչպէս ասացինք նրանց բոլորի երգածների վերջաւորութիւնները պիտի միակերպ և համապատասխան լինեն: Բայց ամենադժուարն այն է որ, հանդիսականների խնդրանօք երգում են այնպիսի ձևերով, ինչպէս անուանում են «տօտաղդեկմէզ» այսինքն ասելու ժամանակ «չրթունքները չըղիպչող» (տես «Սոխակ Հայաստանի» հատ. գ. եր. - 39) կամ «դիլ-թարփամազ» այսինքն ասելու ժամանակ «լեզուն չ' շարժուող» (տես Ա. Ս. Ղայանի «Սրութիւն և Մանուէլ» բ. գրքոյկ եր. - 81) Այդ միջոցներին էլ երբ տեղի են ունենում «տօտախ դեկմէզներ» և «դիլ թարփամազներ», 10—15 հոգուց մնում են 5—6 հոգի, ով չի կարողանում դուրս է գալիս ասպարէզից:

Երբ այդպիսի դժուար ոտանաւորներից երկու երեք շրջան երգում են, յետոյ սկսում են «հանելուկի» մասին երգել սկզբում հանելուկի տէրը (հեղինակը) երգով առաջարկում է հանելուկից «մի կտոր» կամ հանելուկին յարմար մի բան, թէ իմ հա-

\*) Ասել, երգել, միւսն ոչն նշանակութիւնն ունի աշուղների մէջ: Լաւ մ ու խ է ն մ ա ղ է ասում, աչսինքն երգում. աչս ինչ բանը ո՞ր աշուղի ասածն է, աչսինքն չորինած կամ երգածն է:

Ներուկը այս բանին շատ նման է կամ այս ինչ բանին շատ մօտ է: (պատահում է որ հանելուկի առաջարկողը դիտմամբ ուրիշ բաների վրայ է խօսում, նրանց շփոթեցնելու համար, նրանց ամեն մի ասածին «մօտ ես» կամ «մօտեցար» ասելով: ) Յետոյ միւսները հերթով երգում և յայտնում են իւրեանց կարծիքները, թէ «այս ինչ» բանն է, բայց նրանցից մինը եթէ մի մասնիկ է գտնում և մի տուն երգ է պատրաստում ասելու, յանկարծ իւր հերթը չ' հասած, ընկերը իւր երգի մէջ ասում է այն բառը որը պիտի ինքն ասէր: Ի հարկէ մի բառը փոխուելով կորցնում է ամբողջ տան նշանակութիւնը. և այդպէս առաջինը ստիպուած է լինում նորից շուտով մի տուն երգ պատրաստելու ուրիշ մասնիկով (որ դեռ բոլորովին չէ ասուած) որ հերթը գալիս երգէ:

Այսպէս շարունակաբար նրանք մի բանի օր գալիս հաւաքուում են այստեղ \*) և նոյն տեսակ երգում և ուշ գիշերին ցրւում են: Մուացանք ասելու որ հանդիսականներից ստացած ընծաները բոլորը կպցնում են հանելուկի շուրջը շալի վրայ և ով որ հանելուկը լուծեց, (թէկուզ հանդիսականներից) ընծաները կխսում է հանելուկի հեղինակի հետ: Բայց երբ որ լրանում է մի քանի օր ժամանակամիջոցը և դեռ չեն կարողանում հանելուկը մեկնել, այն ժամանակ հեղինակը ինքը երգով բացատրում է իւր պահուստը և ընծաները լիովին ստանում է: Պատահում է որ հէնց հանելուկը կախ արած օրը լուծու մեն, բայց հրապարակաւ չեն ասում այլ իւրեանց կարծիքը գրելով մի թղթի վրայ, կնքում և տալիս են պահելու այնտեղ ծանօթ մի յայտնի և հաւատարիմ մարդու. ուշ ասելու օգուտը նրանումն է որ ընծաները կ' շատանան: Հարկաւոր է ասել որ ամեն աշուղ ընծայ ստանալու կամ հանելուկը լուծելու իսկական նպատակով չի գնում այլ երբ չ' գնայ նա համոզուած է որ իւր անուանը պակասութիւն կ' վերաբերէ, և աշուղները կասեն թէ «չի կարող գալ»:

\*) Մեծ մասամբ լինում է սրճատներում:

## Ե.

ՄԻ ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (չալղը).

Մեր գրքոյկի մէջ յիշած բոլոր աշուղները, ածել են միայն չորս երաժշտական գործիքների վրայ:

Ա. — Ս ա գ. (Տաւիղ) Սաղի մեծ տեսակը որի վրայ 10 սիմեր են պարկած, մեր հին աշուղների մեծամասնութիւնը սրա վրայ են ածել: Սաղի փոքր տեսակը կայ, որ ասուում է չունգուր կամ բաղլամայ (ջուռայ): Սրանց երկուսն էլ շինում են մասնաւոր վարպետներ: Սաղի մեծութիւնն է—երկայն. 1—2 արշին, լայնութ. 4—5 վերշոկ:

Բ. — Ք ե ա մ ա ն չ ա կամ քեամանի, (ջութակ, ջնառ.) հին ձևի ջութակներն էլ նման են այժմեան եւրոպական «կրիպիտներին» միայն քիչ մեծ, աշտախ, մեծութեամբ պարանոցը ծուռ և երկար, իւր վրայ կրում էր 12 թել, որոնց 6-ը լարեր էին վրայից, իսկ 6-ը սաղի սիմեր ներքի կողմից: Վերջինները մի այնպիսի հարկաւորութիւն չեն ունեցել, եթէ ոչ միայն արձագանք տալու համար: Կայ ևս սրա մի ուրիշ տեսակը փոքր և միայն 3 լար ունեցող:

Ջութակները շինում են թէ յայտնի գործարաններում, և թէ մասնաւոր արհեստանոցներում: Մեծութիւնն է — երկայնութիւնը 1 արշին 4 վերշոկ, լայնութ. 5 վերշոկ:

Գ. — Թ ա ռ, սա որ պարսկական հին գործիք է, իւր վրայ կրում է 6—12 սիմեր: Թառը նշանաւոր գործարաններից չի գուրս գալիս, այլ շինւում է հասարակ արհեստանոցներում. Մեծութիւնն է—մօտաւորապէս երկայնութիւնը 1 արշին 5 վերշոկ, լայնութիւնը 4—5 վերշոկ:

Դ. — Ս ա ն թ ու ռ. (քնար, տասնաղի, բամբիռ) նման եւրոպական շեքրա-ին. իւր վրայ կրում է 150 սիմեր, 30 ձայնի: Մեր հին աշուղները բոլորովին անձանօթ էին այս գործիքին,

սա վերջերս բերուեց Տաճկաստանից: Մեծութիւնն է. երկայնութիւնը է 1 արշին, լայնութիւնը  $\frac{3}{4}$  արշին:

## 2.

### ԱՇՈՒՂՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԵՐԳԵՐԸ:

Արի քո քերեկանութիւն, ճարտասանութիւն ծալիւր զբաղ դեր, ու մէկ աշուղ էլ դու դան. Բնչ կըլի կըլի. խանչալիդ քարը հօ վեր չի ընկնիլ, զառ վարաղդ հօ չի գընալ:

«Վերք Հայաստանի»

Խաչ. Աբով:

Չբաւականալով աշուղների լոկ կենսագրութեամբ, որն էլ որ այնքան բաւականացուցիչ չէ, առաջ ենք բերում և նրանց երգերից մի մի հատ որպէս նմուշ, ճանաչելու թէ նրանք ի՞նչ ոճով ու բարբառով են գրելիս եղել. մենք թէև աշխատեցանք որքան կարելի է անտիպ և հայերէն երգեր ժողովել, բայց հակառակ մեր ցանկութեան չ'կարողացանք բոլորը անտիպ գրուածքներ ձեռք բերել. իսկ ինչ վերաբերում է լեզուին, այնպիսի աշուղներ են եղել, որ հայերէն երգեր բոլորովին չեն ունեցել: Կենսագրութիւններն էլ աւելի դժուար է ձեռք բերում քան երգերը:

Երգերից ոմանք արտատպել ենք զանազան ժողովածուներից, մեծ մասամբ Բաղուեցի բարեկրօն Գրիգոր քահանայ Գրիգորեանի «Սոխակ» ներից:

1. Մայեար-նովայ (սլ\*) (Որսորդ-համբաւ կամ համբաւաւոր որսորդ) իսկական անունը Արութիւն (Յարութիւն) ծընուած թուականը իսկապէս յայտնի չէ բայց եղել է 1710-նական

\*) (սլ) նշանակում է սլարսիերէն:

Թուականներին: Սայեաթ-Նովէն կարելի է հայ աշուղների նահապետը համարել որովհետև նրանից առաջ այնպէս մի հայ աշուղի անուն յայտնի չէ: \*)

Ծնուել է Թիֆլիսի Հաւարար Թաղում: Արուժիւնի հայրը բնիկ եղել է Հալէպցի. դեռ Արուժիւնի փոքր ժամանակից, տալիս են ջուհլակութեան (կտաւագործ). նա իւր արհեստի հետ սովորում է ջութակ և չունգուր ածելը և բանաստեղծական շնորհք ունենալով, սկսում է գրել ոտանաւորներ: Նա շատ առաջ է գնացել աշուղութիւնով և մինչև այժմ մենք նրան ճանաչում ենք ոչ թէ կտաւագործ, այլ աշուղ: Նա երգել է Վրացերէն և Թուրքերէն և յետոյ էլ սկսել է Հայերէն ասել: Վերջերս թուլնելով նա աշխարհային վայելչութիւնները, ինչպէս ինքն ասել է «կու հազնեմ մազեղէն կու հազնեմ շալն, կերթամ ու ման գութամ վանքերն մէ մէկ»: Թողնելով երեխայոցը Թիֆլիս, (այդ ժամանակ կինը մեռած է լինում) գնում է Հաղպատ, Ս. Նշանի վանքը, և ձեռնադրում է արեղայ:

Երբ լսում է Աղա Մահմետ Խանի հեծերազօրքի Վրաստանի Սահմանին մտնելը, միտն է բերում իւր զաւակներին, գալիս է Թիֆլիս և նրանց ուղարկում է Մոզդոկ: Երբ Պարսից զօրքը մտնում է Թիֆլիս, (1795 թուակ. սեպտեմ.) Սայեաթ-Նովէն այն ժամանակ եկեղեցում աղօթելիս է եղել. խուժանը ներս է լցւում եկեղեցի և հրամայում է Սայեաթ-Նովուն դուրս գնալու. բայց նա իւր հոգին աւանդում է Պարսից թրերի տակ ասելով:


«Չխմանամ քիլիսատան, դօմանամ Իսատան»

(Եկեղեցուց չեմ դուրս գալ, չեմ ուրանալ Յիսուսին)

Ե Ր Գ Ը.

Ամեն սաղի մէջն գոված դուն թամամ դասնիս բամանչա. Նարբաղ մարթ քիզ չի կանա տեսնի, դուն նրա պասնիս բամանչա.

\*) Թէև մենք մինչև 1400 թուականների բանաստեղծներին, չե՛լեւէնք, բայց նրանք հաստատ չաչանի չէին թիւարեմ թուրքերէն նախութեամբ աշուղներն եղել, թէ միայն բանաստեղծներ:



Ղատար արա էլ լաւ օրերուն էտիվըն հասնիս քամանչա,  
Քիզ ինձանից ով կանա խլի՝ աշուղի բասնիս քամանչա:

Անկաճդ էրծաթէն պիտի գլուխդ ջաւահիր քարած,  
Կութդ շիրմայէմէն պիտի փուրըդ սատափով նաշիս արած.  
Սիմդ օսկէն քաշած պիտի, էրկաթդ փանջարա արած,  
Օչ ով ղիմէթըդ չի գիտի լալ ու ալմասնիս քամանչա:

Ճիպուտդ վարաղնած պիտի թահր ունենայ հազար ուանգով  
Ձարդ ուաշի կուդէն պիտի փուր դուն խօսիս քաղցր հանգով.  
Շատին զարթուն կու լուսացնիս շատին կու քնեցնիս բանգով,  
Անուշահամ գինով լիքն՝ դուն օսկի թասն իս քամանչա:

Ածողիդ էրկու կու շինիս առաջ չայի զափա գուզիս,  
Կու մէծըրուես այիվնումն պարապ վախտի լափա գուզիս.  
Նփ վէր գուքաս մէջլիսումն քաղցր զօղ ու սափա գուզիս,  
Բողորիդ գօզալներ շարած մէջլիսի կէսն իս քամանչա:

Շատ տխուր սիրդ կու խնդացնիս, կու կտրիս հիւանդի դուղն  
Նփ քաղցր ձայնդ վիր կօնիս, բաց կուլի հետդ խաղողն.  
Խալխին էս իթիմազն արա ասին «ապրի քու ածողն»  
Քանի սաղ է Սայեաթ-Նովէն շատ բան կու տեսնիս քամանչա:

«Սայեաթ-Նովայ»

(Գ. Ախվերդեան)

\*

\* \*

2. **Դոստի** կամ Տոսթի (Տ\*) (բարեկամ, ընկեր, սրտակից, ընտանի) իսկական անուր յայտնի չէ. ծնուած և վաղձանուած թուերը դարձեալ յայտնի չեն: Դոստին եղել է Սայեաթ-Նովի ժամանակներում որ ինչպէս ասել է Պ. Գէորգ Ախվերդեանը «Սայեաթ-Նովայ» գրքի մէջ, Սայեաթ-Նովէն յիշել է իւր գափտարու (տետրակ մատեան) նշանաւ որ աշուղ «Դոստի» ին. Միայն այս

\*) (տ) նշանակուած է Տաճկերէն:

է յայտնում Պ. Գ. Ախախերդեանը իւր գրքում, որ Գոստին թաղուած է Թիֆլիսում Խօջի-վանքի գերեզմանոցում: Սրա երգերից ոչ մի հատ չեն հասել մեզ:

\*

\* \*

3. **Ծառուր** ճնուելը յայտնի չէ որ թուականին է. մեռել է 1721 թուականին: Եղել է Մուշ գաւառի Քրզի գիւղից: Աշըղ Ծառուր-օղլու հայրն է. ածել է ջութակի վրայ: Իւր թուրքերէն յօրինած երգերով, զարմացրել է Օսմանեան նախարարներին և կղերականներին, իւր Աստուածաբան նուագներով. երգը մենք չենք կարողացել ձեռք բերել:

«Փ - - Ն ջ Ը. 2246

\*

\* \*

4. **Ծառուր-օղլի** (Ծառուրի որդի) Եղել է Մշեցի, Աշըղ Ծառուրի որդին. կոյր է եղել և սազի վրայ ածող: Կենսագրական մանրամասն տեղեկութիւններ յայտնի չեն:

Ե Ր Գ Ը.

Շատ երկիր ժուռ էկայ շատ աշխարհ տեսայ,  
Չ'կար նմանակդ Մայր Աստուածածին.  
Թողութիւն շնորհեց դաս մեղաւորաց,  
Մեղաց փարատող էս Մայր Աստուածածին:

Ոսկէ սափորն առար ջուրը գնացիր,  
Գաբրիէլ ողջոյն տուեց ողբալով լացիր.  
Տասնըչորս տարի դու մաքուր մնացիր,  
Մեղա՛ բեզի մեղա՛ Մայր Աստուածածին:

Լեզուդ էր մաղզուան բերանդ էր սկիհ,  
Սիրուն Սուրբ Յովհաննէս քո Որտիդ գրկի.

Շատ մեղաւոր կանչէ մեղաց կ'փրկի,  
Մեղաց փարատող ես Մայր Աստուածածին:

Ծառուր-օղլին քեզի գովար դանաղան,  
Արևելք արևմուտք չ'կայ քեզ նման,  
Դատաստանին շես ինձի անարժան,  
Մեղա՛ քեզի մեղա՛ Մայր Աստուածածին:

(անտիպ)

✓ 51 Շամշի-Մելքո <sup>Մահ-9-13</sup> (Շամշի կամ Դամասկոսցի Մելքոն)  
բնակում էր Թիլֆիսում 1740-ական թուականներին: Ման-  
րամասնութիւնը դարձեալ յայտնի չէ:

Ե Ր Գ Ը.

Խարազ Չալի իմ մէ շահին ի՛նչ արիւր.  
Ճրագուն կերար իմ թանջիրէն ի՛նչ արիւր.

Փողոցումն ման ես դալի դիւի թաքուն,  
Ինչ սահաթ ինձ ուստ եկար անարգ շուն.  
Մումը հալեցիր կուլ տուիր ճրագուն,  
Մուզգտ կերար բաս քո մայէն ի՛նչ արիւր:

Առաւօտենց գնացի դուքանի դուն,  
Պարտատէրերն կտրել էին չորս կուն.  
Նրկու շահի հանեց դրեց իմ բուն,  
Ինձ խափեցիր էն մի հային ի՛նչ արիւր:

Գանդատելով պօլիցէքն իմաց արի,  
Դեսեղնիկ բերի դուքանը բաց արի.  
Բան չի գտայ գլխիս տուի լաց արի,  
Շամշի-Մելքո էն դալմաղալն ի՛նչ արիւր:

«Նոր հնար»

Ոսկ. Տէր-Յով. կռձ. 2 տ:



6. **Թուջար** (առևտրական) իսկական անունը Յովհաննէս. ծնունդ է 1760ական թուականներին Ղարս քաղաքի Ղանի զիւղում. սա կոյր լինելով, մանկութիւնից սէր է ունեցել աշուղութեան. ծնողները տունը են սրան երևելի Աշող Կեարկեաճու մօտ և այդպէս էլ վերջը յայտնի աշուղներից մինն է եղել: Շատ սիրելի է դարձել փաշաներին, բէկերին, նրանց միշտ պատմելով տուփական հեքեաթներ, առասպելական զրոյցներ և այլն:

Մի օր փաշան Թուջարից պահանջում է մի նոր բոլորովին չպատմած հեքեաթ: Նա խնդրում է երկու օր ժամանակ և իւր աշակերտի հետ հնարում է մի նոր հեքեաթ, «Աշրաֆ և Ձէօհրէ» վերնադրով: Նրբ այդ հեքեաթը պատմում են փաշայի մօտ, նա լաց է լինում. փաշայի հետ լախտէ և Թուջարի աշակերտը. մի բիշ յետոյ Թուջարն էլ է լաց լինում: Թուջարի աշակերտը զարմանալով, ասում է վարպետին:—Չէ որ այս հեքեաթը մենք ենք յօրինել սուտ է. դու ինչու ես լաց լինում:—Նս լաց եմ լինում ոչ թէ հեքեաթի ազդեցութիւնից, այլ այն թէ ի՞նչպէս պիտի վերջացնեմ. պատասխանում է Թուջարը:

Թուջարը թէև հայ էր, բայց ինչպէս ասում են տաճիկների կողմն էր տաշում. երբ իւր հայ արհեստակիցները մրցում էին թուրք աշուղների հետ, սա վերջինների կողմն էր պահում և ձգտում էր որ հայերին խեղձացնէ:

Մի անգամ Թուջարի մօտ գալիս է մի մօլլա (ճաճկաստանում մինչև հիմա էլ սովորութիւն կայ, որ երբ մի տեղ վարպետ աշուղները երգում են, մոլլաներից ով որ ուզում է երգել և մրցել նրանց հետ, ծպտեալ գնումէ) և ուզում է երգել. բայց այնպէս է լինում, որ իրար հետ հակառակում են: Թուջարը սազը վարէ դնում, ձեռքերով բռնում է մօլլայի բերանը և այնպէս ուժով քաշում է, որ վիրաւորում է: Մօլլան ուղղակի գնումէ փաշային գանդատ. փաշան կանչումէ Թուջարին: Թուջար բարայ այդ ի՞նչ ես արել, չէ որ դու մեծ մարդ ես ինչու ես մօլլային անպատուել: Նս չ գիտէի թէ նա մօլլ-

լա էր ապա ինչո՞ւ էր եկել աշուղների մէջ նստել պատասխանումէ աշուղը:

Թուջջարը իւր կեանքում ամենեւին օղի չէ գործածել: Նա երգել է միշտ Թուրքերէն, կրօնական բովանդակութեամբ. «Մովսէս»ներով ու «Դաւիթ»ներով լի: Աճել է սաղի վրայ: Մեռել է 1840-ական թուականներին:

## Ե Ր Գ Ը.

Իբի նողտայ իւշիւրուֆտըրը հէսապ էտգամ խամայի  
Ղալամի օլմիան քեաթիպ նէճա՞ եազար նամայի.  
էյլա բիր ասիրա եթըգ լաղբատ ջահիլտատըր  
Ալեֆի բէյի բիլմիան բակեանմազ ուլամայի:

Ջամանի ինսան օղլունտայ բէյ ու բազար ղալմատի  
Հափրսի իւզա գիւլիւճի սեօզնա էր ղալմատի.  
Ալլահ իչուն սօեյլամիա պիր էխտիար ղալմատի,  
Նալանչի շահիտլար թաճիս էդտլար մախքեամայի:

Բու Թուջջարի դէօրդ նէսնատան Նարատան սանտան մէտէտ  
Ալամն ըզղի վերըճի եա Սուփհան սանտան մէտէտ,  
Ղամ տուտթի կիրիպանմտան էյ Նզդան սանտան մէտէտ  
Դարդա դէրման վէրան սան սին նեյնարամ հիւքէմայի:

(անպիտ.)

\*  
\* \* \*

7. **Չերքեզ-օղլի** (Չերքեզի որդի) իսկական անունը Մկրտիչ. ծնուել է Աստարիսանում 1763—64 թուականներին: Պարապում է եղել քնարների շինելով և նորոգելով: Ասում են որ բացի այդ արհեստից նա պարապել է և հիւանդների համար գիր անելով: Պսակուել է 1811 թուակ. օր. Գայեանէ Ստեփանեանի հետ և ունեցել է մի դուստր: Չերքեզ-օղլին աշուղութիւնը սկսել է 30 տարեկան ժամանակից. երևում է իւր սիրահարում

միջոցին: Ածել է սազի վրայ: Մեռել է 1845 թուականին,  
 թաղուած է Աստարիսանի գերեզմանոցում:

«Սոխակ» գ. երես 224.

### Ե Ր Գ Ը.

Մենք խօզող ենք անում մեզ համար դամով  
 թող աղուքն մնայ իւր դարդ ու դամով.  
 Ախթար եմ բաց արա դու իմ նեղ սամով  
 Երբ համբուրամ բերնէդ համ առայ հոգի:

Մարիամայ ծաղիկ ես գոյնով սպիտակ  
 Երեսդ լուսնիակ շողքդ արեգակ.  
 Աչքերդ կ'վառի փայլուն ես լուսնակ  
 Ունքերդ գեղեցիկ կամար ա հոգի:

Չէրքէզ-օղլին ասաց նազանի հուրի  
 Իմ ջիւան աղբէրս մի թող բընարի.  
 Էս քու սաստիկ սէրդ սիրտս կը վառի,  
 Մի վառի կեանքս քեզ համար ա հոգի:

«Սոխակ» գ. երես 69

\*

\* \*

8. **Թուրիւնջ** պ.) (մի տեսակ գոյնէ) իսկական անունը Թորոս. ծնուել է 1790 թուականին Նամախու Քարքանջ գիւղում. սրա հայր ոսկերիչ Օհանը և իւր կինը դեռ Թորոսի մանկութեան ժամանակ մեռնում են: Թորոսը իւր մասնաւոր ուսումն ստացել է Տէր Պետրոս քահանայի մօտ. մի քանի ժամանակից յետոյ Թորոսը թողել է հայրենիքն ու գնացել է Աստարիսան և այնտեղ ամուսնացել է: Թուրիւնջը պարապել է տապանագրեր գրելով. սրա համար պատմում են որ շատ ծաղրածու և զուարճախօս մարդ է եղել: Ածել է սազի վրայ և գրելէ շատ եր-

գեր քանասանդու թիւներ և այլն: Մեծ մասամբ տպուած են  
«Սոխակի» գ. հատորում: Մեռել է 85 տարեկան հասակում,  
թաղուած է Աստարիանում:

«Սոխակ» գ.

### Ե Ր Գ Ը.

Սիրելի ճշմարիտ շատ գեղեցիկ ես,  
Ձեմ խապար մարդ ես թէ հրեշտակ ես.  
Աշխարհս քեզանով լուսաւորուել ա,  
Ձեմ խապար լուսին ես թէ արեգակ ես:

Երկրային հողայինք քեզի չ'հաս են  
Չիլնի՞ զուգա եկար հրեշտակաց դասէն.  
Ելած ա մէկ Յովսէփ գեղեցիկ կասեն  
Ձեմ խապար ինքդ ես, թէ նմանակ ես:

Դուն մին ճրագկալ ես լաւ ոսկեզօծած,  
Քարակ ճիւղներ ունիս դէս ու դէն ծռած.  
Իստակ մոմեր վառած մէջլիսում դրած,  
Ձեմ խապար դու ջահ ես թէ աշտանակ ես:

Դուն մին ջափահիր ես բու գինորդ թանդ ա,  
Քանի սառափ վրէդ մաթալ ա լանդ ա.  
Ետղութ թրաշ քարդ ռանդ ռանդ ա,  
Ձեմ խաբար սոստակ ես թէ դահանակ ես:

Ղալամքեար արխալուխ մէջքմդ քամար,  
Դուն հոտով ծաղիկ ես Թուրինջի համար,  
Յողացող բացուած ես ձմեռ ու ամառ,  
Ձեմ խապար դու վարդ ես թէ մանուշակ ես:

«Սոխակ» գ. երես 40.

9. **Խան** (Յուլհաննէս) ծնուել է 1800 թուականին Աստարիսանում: Նա պարսպել է ներկարարութեամբ: Ամուսնացել է Աստարիսանում և թողել է տղերք և աղջկերք: Աշուղութիւնը ըսկսել է 40 տարեկան հասակում և ածել է սալի վրայ: Նա ոչինչ ուսում չէ ունեցել: Բայց շատ բարի մարդ է եղել. նրան ճանաչողները մեծ յարգանքով են յիշում նրան: Մեռել է 64—65 տարեկան հասակում. թաղուած է Աստարիսանի գերեզմանոցում, «Սոխաչ» գ. երես 225.

### Ե Ր Գ Ը.

Սրտիս դարդերիցն դու խաբար չունես

Աշխարհի մեջիցն ծնուածն կորաւ,

Թէ Սողոմոն իմաստունիցն հարցանես,

Երանի մեռնողին ծնածն կորաւ:

Աշխարհս եկաւ ինկաւ Քիւր ու դարդերին,

Ըռաստ եկաւ չար սատանի Քանտերին.

Վայ պատել է ինձ պէս խեղճ ու անտէրին,

Օրէնք պատուիրանքով ասածն կորաւ:

Պահապան հրեշտակն միշտ ասի ա քաշում,

Հողիս էս չարչարանքն նահախ ա քաշում.

Մարմինս մահիցն միշտ վախ ա քաշում,

Աւաղանի միջից հազածն կորաւ:

Խեղճ Իւանի լեզուն վերջը կը լռուի

Չար գործերն հանդէպումն կ' շարուի.

Թէ ողորմես Փրկիչ իսկոյն կը հալուի,

Էլ չեմ ասել կրկին մեռածն կորաւ:

«Սոխաչ» գ. երես 102

10. **Քեչիշ-օղլի** (քահանայի որդի) իսկական անունը **Դաւիթ**. ծնունդէ 1804 թուականին, Թիֆլիսի նահանգում Բորչալիի Նամշուլտա գիւղում: Նա դեռ երկու տարեկան հասակում կուրացել է: Դաւիթի հայրը քահանան, մեռնելուց յետոյ, մայրը որ Նուշաւերի մօտ Կարմեճի (Սշքեօրփի) գիւղից էր, Դաւիթին առած զնացել է իւր հօր տունը: Մի քանի տարուց յետոյ Դաւիթի մայրն էլ է մեռել: Քեչիշ-օղլի Դաւիթը որ մանկութիւնից շատ սիրել է աշուղութիւնը, 9 տարեկան հասակում, նրա խնամատարները նրան տուել են Սշըղ-Սէյրանու մօտ աշակերտ. հետզհետէ Դաւիթը առաջադիմութիւն է ցոյց տուել աշուղութեան մէջ և վերջը ամենալաւ սազ ածողներից մինն է եղել. այնպէս որ առանց «Փարտի»\*) ածել է զանազան եղանակներ:

Քեչիշ-օղլին երբ եղել է 20—22 տարեկան, ինչպէս ամէն աշուղի ցանկութիւնն է որ գնան մուրազատու Ս. Կարատետի գերեզմանը համբուրելու, զնացել է դէպի Մուշ. Ղարսում պատահել է Սշըղ-Թուջջարին, նրա հետ մրցելով յաղթել է: Թուջջարը տեսնելով Քեչիշ-օղլի Դաւիթի այդ Ասաուածանից ստացած շնորհքը, նրան շատ սրտանց յարգել է: Քեչիշ-օղլին հասել է էրզրում այնտեղ էլ մենամարտելով մի քանի հայ և թուրք աշուղների, որոնց թւումն էր և նշանաւոր Սշըղ-Քաղո-Ալլահվերտին յաղթել է և այդպիսով նրա հռչակը տարածուել է ամեն կողմ: Այդ ժամանակին նրան անուանել են «Ջարուրի» — (պիտանացու) Դաւիթը (Քեչիշ-օղլի Ջարուրին.) Մուշ հասնելով և իւր մուրազատու Ս. Կարապետի գերեզմանը համբուրելով, զնացել է Ջմիւռնիա և այնտեղից էլ Կ. Պոլիս: Քեչիշ-օղլու բախտը այնտեղ ևս իրանից չէ հեռացել. մի տաճիկ բէյ որ վաղուց արդէն լսել էր Քեչիշ-օղլու անունը, որ ինքն էլ շատ հետաքրքիր է եղել աշուղներով, երբ տեսնում է նրան շատ մտերմանում է նրա հետ և մի օր էլ ներկայացնում է Սուլթանին:

\*) «Փարտա» ասում են այն լարերը, որ աստիճանաբար կապուած են լինում սազի կամ թառի սլաքանոցին, որոնք ծառայում են ածելու ժամանակ:

Քեշիշ-օղլուն երբ որ հրամայել են ածել և երգել, նա թուրքերէն լեզուով գովել է պալատը և նրա բնակիչները: Սուլթանը տեսնելով որ հաստատ լաւ բանիմաց աշուղ է, նրա անունը դրել է Շաւղի (لشاه توتوغ): Քեշիշ-օղլին եղել է նշանաւոր հայ աշուղներից մինը. ծանօթ է մեր հասարակութեանը իւր մի քանի անուններով. բայց ափսոս որ հայերէն ոչ մի երգ չէ ունեցել: Սիրելի է դարձել հայ մեծամեծներին, էֆէնդիներին, մանաւանդ Յարութիւն Պեզճեանին, որի մահուան վրայ ասել է մի թուրքերէն երգ: Քեշիշ-օղլին ազգային գաղափար չէ ունեցել այլ միշտ երգել է կրօնական և սիրահարական, մեծ մասամբ Աստուածաշունչից, այնպէս որ մատչելի լինէր թէ տաճիկ և թէ հայ ժողովրդին: Քեշիշ-օղլին մեռել է Կ. Պոլսում, իւր տունը, փողերը, կտակելով Գում-Գափուի հայոց եկեղեցուն:

### Ե Ր Գ Ը.

Ղամ չաքմա ղամ եմա դիւանա գէօնուլ  
Սանա պուլանմիան պինճա եար օլսուն.  
Պիզտան իւզ շաւուլմիշ հարջայի դիլպար,  
Թազատան եար սաւմիշ, մութերէկ օլսուն:

Չխիմ սահրալարա ղլայիմ գարի,  
Թախաթըն քեսարլտի սօյլեյիմ բարի  
Բէնի էօզ ջաննտան սէւմիան եարի  
Դահի բան սաւմանամ թէպալար օլսուն:

Սան Քեշիշ-օղլի չաքտն տարայա  
Շինտի մինախուփլար գեչմիշ արայա  
Սանի թափշուլմիշամ Փարուարտիկեարա  
Հիւզիլը մանշար գիւնի երըն նար օլսուն:

(Անտիպ)

✓ 11. **Քեամիլի** Տ) (լրութիւնն առած, շնորհալի) իսկական անունը Բաղդասար. ծնուել է 1803 թուականին, Ղարս քաղաքում: Մանկութեան օրերում նա սովորել է մասնաւոր ուսումնարանում: 12 տարեկան հասակում հայրը տուել է Բաղդասարին պայտառի մօտ աշակերտ: Նա ինքնուս կերպով սովորել է սաղ ածել, և մի բան նրան դրդել է բանաստեղծութիւններ գրելու. այն՝ որ Բաղդասարը սիրահարուել է մի յայտնի մարդու աղջկայ վրայ և հետզհետէ թէ երգելու և թէ ածելու մէջ առաջ է եկել: Բաղդասարը իւր անունը դրել է Քեամիլի. նա առաջ թուրքերէն է գրել իւր երգերը, բայց յետոյ իւր սիրուհու թախանձանօք սկսել է հայերէն էլ գրել: Նրա երգերը մեծ մասամբ սիրահարական և կեանքի կողմից զանգատներ են եղել:

Քեամիլին վերջապէս հասել է իւր նպատակին. պսակուելով իւր սիրած աղջկայ հետ. գործն էլ կանոնաւրապէս կարգի բերելով, սիրելի է դարձել ոչ թէ միայն ժողովրդին, այլ և տեղական փաշային և բոլոր մեծամեծներին: Քեամիլի արհեստակից մոլեռանդ թուրքերը նախանձուելով նրա գործի յաջողութեանը, սկսել են զանազան զրպարտութիւններ բարդել խեղճի վրայ: Բաղդասարը տեսնելով որ այլ ևս դժուար է Ղարսում ապրելը, թողել է Ղարսը և իւր ընտանիքն առած գաղթել է Նրևան: Այդ ժամանակ նա ունեցել է շորս որդի. երկու աղջիկ և երկու տղայ:

Նրևանի շոգ կլիմային չի կարողացել Ղարսեցի Քեամիլին երկար դիմանալ. նա համարեայ իւր գալած երկրորդ տարին սկսել է հիւանդանալ. և օրից օր մաշուելով, 1832 թուականին մեռել է Նրևանում, թողնելով իւր գերդաստանը անտէր: Քեամիլի որդիքը գաղթել են Ալէքսանդրապոլ, որ և Յովհաննէս որդու զաւակն է այժմեան Աշըղ-Չամալին:

Ե Ր Գ Ը.

✓ Ետտ մի բացուիր նազելի դիլբար դիպնի կը նազար քեզի, են զտար կայնար դիմացս, էրիր գիրիֆտար ինձի.



Ղուսուր չունիս հէջ մէկ տեղիդ ամենքի մօտ տեղեակես,  
Աստուածութիւն ամեն դիմաց, տուեր է հունար քեզի:

Մազերդ թուխ գեօքսդ ճերմակ ձեռներդ հինայել ես,  
Աստուածութեան իւր զալամով, սև խալերդ գրել ես.  
Աստըծու դէրկեահի գունէն եար շնորհքդ առել ես,  
Ման եկայ արարոց աշխարհ չ' գտայ ույար քեզի:

Քեամիլն ընկաւ զաւղ էներու չ' գտաւ դարտին դարման,  
Ելլիմ էլ թամ Լոխմանու քով, ոտքերէս չունիմ գիւման.  
Քանի՞ մէկ հասարթդ քաշեմ եար իսկի չունիս իման,  
Քցել ես վառման կրակը գուզես հողիս առ քեզի:

(Անտիպ)

\*  
\* \* \*

12. **Օվչի-նաւասի** պ.) (որսորդի որդի. կամ նուագող  
որսորդ) իսկական անունը Խաչատուր. ծնուել է 1810 թուակա-  
նին Շամախու Մատրասա գիւղում: Սա մի առաքինի և ճրջմար-  
տախօս անձն է եղել և մեր յայտնի աշուղներից մինը: Ասում են  
թէ երբ գիւղում երկու մարդու մէջ անբաւականութիւն էր  
յայտնւում, իսկոյն շտապում էին մահտեսի Խաչատուրի (Օվչի-նա-  
ւասու) մօտ, նա վերջ էր տալիս այդպիսի վէճերին: Օվչի-նա-  
ւասին երգել է հայերէն լեզուով. շատ երգեր ունի Նրուսաղեմի և  
այլ ուխտաւորների վրայ ասած: Օվչի-նաւասին մեռել է 70 տա-  
րեկան հասակում:

«Սոխակ» գ. երես 119.

Սրա երգերից ոչ մինը չ'կարողացանք ձեռք բերել:

\*  
\* \* \*

13. **Միսկին-բուրջի** (անուշահոտ-բուրջի կամ «ծաղիկ») Իսկական անունը յայտնի չէ. ծնունել է Քանաձակում 1810-ական թուականներին: Սրան Միսկին-Ալլահալերդի էլ էին ասում: Նոյնպէս և յայտնի չէ թէ ինչ գործիքի վրայ է ածել:

### Ե Ր Գ Ը.

Էշխիցդ ջունուն դառած, գիշեր ցերեկ հաղ եմ ասում.  
Ոչ թէ երեկ ու այսօր կարելի է վաղ եմ ասում,  
Յոցինդ չեմ ճանաչում մանիշակի թաղ եմ ասում.  
Երեօիդ երկու պաչին ինձ արա ղոնաղ եմ ասում,  
Անուտել անխմել իմ քէֆս արա չաղ եմ ասում:

Էդ քու սէրդ դառել ա իմ ջանումս փուշի նման  
Էնդուր որ էլ չեմ ճարում քու լալաղար թուշի նման,  
Խօսալդ բիւլբիւլի պէս կերպդ թովուս ղուշի նման,  
Ամեն թահրդ տեսնելուս, դառնում եմ աշխուժի նման,  
Արի՛ր սրտիս միջին էլ քարին դիպած շուշի նման,  
Զահա արա կոտրածները կոծկի շինի սաղ եմ ասում:

Ինձ ումուտ ունի որ իմ արգէս անց կենայ քարումը,  
Ի՞նչ կանես ղըփլբանդ ա ընկել բէմուրվաթ եարումը,  
Ոչ նա ռահմ է անում ոչ ծախում են բազարումը,  
Ես ինչպէս այսուհետև ուրախանամ աշխարհումը,  
Թուին հազար ութն հարիւր երեսուն երեք տարումը,  
Քեանջեցի Միսկին-Բուրջին ես խօսքս Ղարաղաղ եմ ասում:

«Նոր հոսր»

Ոսկ. Կէր-Յուլ. կռձ. 2 տ.

\*

\* \*

14. **Նիտաշի** ա.) (ձայնաւոր) Իսկական անունը Խաչատուր. ծնունել է 1810-ական թուականներին Տաճկաստանում,

Երգըումի Հինձ գիւղում: Մանկութիւնից սովորում է սազ ածելը և երբ խելահաս է դառնում, սկսում է գրել բանասերդութիւններ և պարապել աշուղութեամբ: Նա գիւղից գաղթում է Երզրում, որտեղ ամուսնանալով ընտանեաց տէր է դառնում: Շատ չանցած մի գաւակ է ունենում, որի անունը դնում են Խահակ:

Նիտային շատ էր սիրում իւր որդուն և շատ անգամ մի տեղ գնալիս նրան հետը տանում էր:

Նիտային մեծ հռչակ է ունեցել. համարեայ Տաճկաստանի մեծ մասը նրա անունը տարածուել էր. նա գրում էր Թուրքերէն, բայց շատ կոկ լեզուով: Սիրելի է եղել թէ հայ և թէ տաճիկ հասարակութեանը:

Մի անգամ Նիտայուն մի քանի մեծամեծ մարդիկ կանչում են և խնդրում են նրան որ մի հանելուկ կախ անէ: Նիտային մի հանելուկ է պատրաստում այնպիսի հոգով, որ թէ հայերին և թէ տաճիկներին յարմար է եղել: Շուտով հաւաքւում են հայ և տաճիկ նշանաւոր վարպետ աշուղներ, որ Նիտայու հանելուկի տակ երգեն:

Նիտայու Խահակ որդին որ մեծ վարպետ էր, տապանազրեր փորագրելու մէջ, շատ էլ փափակ է ունեցել աշղութեան և հօրից ծածուկ սկսել էր սովորել սազ ածելը:

Մի քանի մարդիկ Խահակին խոստանում են թէ երբ որ դու բո հօրը կարողացար յաղթել, մենք քեզ լաւ կ'վարձադրենք: Նա էլ առանց երկար մտածելու թէ ում հետ պէտք է դործ ունենայ, համաձայնութիւն է տալիս և սազն առած ծպտեալ մտնում է հէնց այնտեղ, որտեղ հանելուկն է լինում կախած: Խահակը մի երկու աշուղ հեռու է նստում հօրից, և մի հարցասական «դիւանի» է ասում այն ձևով որ «էվէլ-ախր», «զինջիլմայ» և «դիլ-թափրամագ» է լինում: Հայրը քիչ դժուարանում է պատասխանելու. բայց երբ իմանում է որ իւր որդին է, յարձակւում է նրա վրայ ծեծելու. որդին փախչում է տուն և մօրը պատմում ամեն բան. մայրը թէև մի քիչ բարկանում է

որդու վրայ, բայց պահում է նրան տան մի անկիւնում, թէ մի գուցէ ամուսինը բարկացած տուն գայ և պատժէ նրան: Բայց որքան սխալ լինում նրա կարծիքը. երբ Նիտային տուն է գալիս, որդուն չ'տեսնելով ասում է «ուր է Դսահակը» մայրը վախեցած պատասխանում է որ տանը չէ: Նիտային պատմում է կնոջը թէ գիտես մեր Դսահակը շատ լաւ հասունացել է և առաջ է եկել. վախենում եմ թէ մեր մօտ չ' մնայ: Մայրը տեսնելով որ իւր ամուսնի տրամադրութիւնը մեղմ է, խոստովանում է որ պահել է որդուն: Դսահակը գալիս ներողութիւն է խնդրում հօրից և նրա ձեռքը համբուրում է ասելով, թէ գիտես հայր որ ես աշուղութիւն չեմ անելու. այլ երբեմն երբեմն ածում և երգում եմ պարապ ժամանակներս:

Մի անգամ Նիտային քաղաքից բացակայ էր. այդ ժամանակ որ կառավարութիւնից հրամայուած էր, երգումից տանում էին 20—22 տարեկան երիտասարդներին Պոլսի մետաքսագործարանը (իփլիկխանայ) ձրի բանեցնելու. ի թիւս շատ երիտասարդների տանում են և Նիտայու որդի Դսահակին: Երբ Նիտային վերադառնում է երգում, լսելով որ իւր որդուն էլ են տարել, երկու երեք ժամ մնալով, ճանապարհ է ընկնում Կ. Պոլիս, ներկայանում է իւր ծանօթ Միւխլիս փաշային որը Բ. Դռան Սպարբոս էր. փաշան երբ տեսնում է որ Նիտային շատ տխուր է, հարցնում է պատճառը:

— Ձերդ գերազանցութիւն. շատ ապրի Սուլթանը, Աստուած տայ նրան երկար կեանք. իմ միակ որդուս է բերել տուած «իփլիկխանայում» աշխատելու ինչպէս անեմ որ կարողանամ Օգոստափառ Սուլթանից որդիս խնդրել:

Միւխլիս փաշան այս բանը լսելով, յարմար առիթ էր որոնում որ Նիտայուն անձամբ ներկայացնէ Սուլթանին. կանխաւ յայտնելով որ մի շատ վարպետ աշուղ է եկել, որը պատուական գիտէ Տաճկերէն լեզուն և լաւ երգում է:

Սուլթանը հրամայում է կանչել այդ աշուղին և ինքը թաղուհու հետ վարագոյրի ետևում պատրաստում է լսելու:

Նիտային երբ մտնում է պալատ, այնպէս յուզուած և տը-  
խուր գրութեան մէջ է լինում որ, երբ մօտենում է Սուլթանի  
գահին, չոքում է և այնպէս մի ցաւալի երգ է երգում, որ Սուլ-  
թանը հրամայում է իւրայիններին որ ոչ միայն այդ աշուղի որ-  
դուն, այլ և բոլոր հայ երիտասարդներին արձակեն: Նիտային ու-  
րախութեամբ լցուած, գոհութիւն է տալիս Սուլթանին և որ-  
դու հետ ճանապարհ է ընկնում Էրզրում:

1830-ական թուականներին գրաֆ Պասկելիչի ժամանակ  
Նիտային գաղթում է ընտանիքով Ռուսաստան. 4—5 տարի մը-  
նալով Ախլցխա քաղաքում, կրկին վերադառնում է Կարին:  
Մեռել է 1856 թուականին:

### Ե Ր Գ Ը.

Հէր սույի քիշվերտէ բէնամ էֆէնդամ,  
Թախտի միւձէլէ Սուլթանի սէն սըն.  
Մարրի մալահատ տէ շահի լէվէնդըմ,  
Սալթանաթտա Եռսուֆ բեանհանի սէն սըն:

Իիր թանա պուլամամ օլամ միւրաձա,  
Տէսէմ ճիսմի տէրդամ ըավամի ըավա.  
Լէպէն շէրպէթիտր հէր տէր տէտիվա  
Դիլի պիչարանըն Լօխամանի սէն սըն:

Մէյ շիւշատան սիւզէր ըույնուտա քիալ  
Վ էջհին իւչրէ տանէ տանէ հինտու խալ.  
Պաղ իձինան իչրէ թէօհֆէ նէվնիալ  
Վէսմի հիւրիլէրն զլմանի սէն սըն:

Նիտայինըն զեքրի սէն լէպի սիւքքէր,  
Ճէպինհինտէն տողտի նուրի միւնէվիլէր  
Պիր երէ ճէմ օլսա սէթ հէպէր դիլպար  
Ճիւմլէ դիլպարլարն խուպանի սէն սըն:

(անարիւղ)

15. **Բաղալ** ծնուել է հին-Նախիջևանից դէպի արևելա-հիւսիսային կողմը մօտ 40 վերստ հեռաւորութեամբ գտնուող Նորս գիւղում, 1810-ական թուականներին: Նրա ծնողները գաղթած են եղել Պարսկաստանից:

Բաղալը մանկութեան հասակում ծաղիկ հիւանդութիւնից զրկւում է իւր աչքերից. ծնողները տալիս են նրան մի աշուղի մօտ աշակերտ, որի մօտ սովորում է սազ ածելը և պարապում է աշըղութեամբ:

Մի քանի ժամանակից յետոյ Բաղալը գաղթում է Ղարաբաղ (Շուշի). երիտասարդ աշուղը այնտեղ սկսում է առաջադիմութիւն ցոյց տալ և հետզհետէ հռչակ է տարածում շրջակայքը. շատ աշուղների գալիս են Բաղալի հետ մրցելու, բայց յաղթուած յետ են դառնում:

Աշըղ-Բաղալը երգել է միշտ թուրքերէն և իւր անգրագետ լինելու պատճառով նրա երգերը կորչել են. բայց դեռ մինչև հիմա զանազան աշուղներ երգում են Աշըղ-Բաղալի երգերը:

Բաղալը մեռել է 1850-ական թուականներին Նորս գիւղում:

### Ե Ր Գ Ը.

Ազալ ալիֆ բէյ եազմիշամ բէյբուբանդար եասինա,  
Ազբարմ դիլամ լիթվմնան թէյթալը բամ եասինա,  
Աղլամախտան վով վաշիթաք սէյսըզլդար եասինա,  
Աալի դէյմազ ջիմ ջհանդա հէյ հա թութար եասինա,  
Աջալ կեալսա նուն նա բախար օմուր ետտի եասինա:

Ազալննան բէյլա կեօրտում հէյ հա սզլար բուխարա,  
Արզ էյլիլիմ վասմի հալմ միմ մուջարաթ բու եարա,  
Ավլան ավլան խէյ խառա դէյլամ լալա թակ բու եարա,  
Արար բայկու քեաֆքեամթար դիդալ դախլդի բու եարա,  
Ահուլարդա զալզալմտի ոէյ ոաստ եասինա:

Ալազեոզլի սաթ սովորուզում իւզտա սախլա հայեատա,  
 Աշըղ օլտում թէյ թարսայեա սըռ վերմանամ հանատա,  
 Ալ գեթութուրդում զաթ զհարտա դահի սալամ հայեատա  
 Աշըղ-Բադալ զէյ զարուրի ազբար օլտուր հանատա,  
 Ալահ չաղը ամանաթաթի թաաւարինջա եասինա:

(անտիպ)

\*  
\* \*

16. Ագրար-Ադամ տ. (ազբար կ'նշանակէ մտքի մէջ պահող.) ծնուել է 1816 թուականին, Երևան նահանգի Փարաքար գիւղում: Մանկութեան հասակում Ադամը ուսանում էր կարդալ և գրել, յետոյ սկսեց կօշկակարի արհեստ ուսանել: Վերջը իւր համար կօշկակարի կրպակ բաց արեց և ընտրուեց ուստապաշի. այսինքն Երևանի կօշկակար արհեստաւորաց գլուխ: Ադամը իւր ազատ միջոցներին պարապում էր բանաստեղծութեամբ Հայերէն Պարսկերէն և Թաթարաց լեզուով (մեծ մասամբ տպուած են «Քնար Հայկականի» մէջ): Ժողովուրդը շատ էր պատում Ադամի բանքարը. նրան հրաւիրում էին հարսանիքներում երգելու. նա ածում էր սազ: Վաղձանուել է 1844 թուականին:

«Քնար Հայկական»

## Ե Ր Գ Ը.

Ես մի սիրեկան կուզեմ դարդից խարարդար ընի,  
 Համ խելօք համ դանանայ. ոչ թէ խելագար ընի.  
 Կեանքիս հետ կեանք ունենայ ահլի բաժնարար ընի,  
 Մեր երկրսիս պայմանը էս թաւուր իգլար ընի:

Ամեն փուչ սիրեկանի համար մի ջիւան պրտի,  
 Հաւատարիմ սիրելոյ փիանդալու ջան պրտի.  
 Ճամփումը դուրբան անես օմրոզ բերդան պրտի,

Քաղցր խօսալ ունենայ անուշ սիրեկան պրտի,  
Սրտով սիրի սիրելոյս սիրով սիրահար ընի:

Մի խօսքը ստահ հար կուզեմ որ աշխարհքս հաւանին,  
Իմանաս էլ ի՞նչ պէտք ա բաժալու սիրեկանին,  
Իէմքդ փիանդաղ անենս քո ջանդ զուրբան ջանին  
Որ հոգի տաս չի կորած էս թաւուր գովականին,  
Թէ դրուստ միտք ունենայ քեզ հետ մուղարար ընի:

Փուչ սիրեկանի համար պէտք է ախ ու վայ չանես,  
Ընկած տեղը ամեն վախտ ուղիղ սրտով սայ չանես,  
Հաւատարիմ սիրելոյ դռնաղի հետ թայ չանես.  
Անձար Ազբար-Ադամի աշխատանքը զայ չանես,  
Չեմ հաւատալ աշխարհս թէ քեզ բարերար ընի:

«Քնար Հայկական» եր. 401. կռճ. 1տ:

\*  
\* \* \*

17. **Մելքիսեք** իսկական անունը Աղէքսանդր. ծնուել է  
1817 թուականին մարտի 9-ին Աստարխանում, նրա հայրը  
Ազուլեցի սառաֆ Ստեփանի որդի Աուկասը ունեցել է հինգ որ-  
դիք որոնցից ամենափոքրը եղել է Մելքիսէթը (Աղէքսանդր):  
Հանգուցեալ Աուկասը մեծ նեղութիւններ է տարել, բայց երբէք  
չէ մոռացել իւր պարքտը որդոց դաստիարակութեան վերաբեր-  
մամբ: Նա միշտ ասելիս է եղել. «Որդիք դուք հոգս մի արէք ես  
բանի կենդանի եմ ողորմութիւն կու հաւաքեմ բայց ձեզ առանց  
ուսումի չեմ թողնել» և կատարել է իւր խօսքը նայելով իր կա-  
րողութեան և ժամանակին: Մելքիսէթը ամենից առաջ կար-  
գացել է տէր Խաչատուր Ալամդարեանի յետոյ տէր Մելքիսէդէք  
Բզրաշեանի մօտ. վերջինի մահից յետոյ տէր Գաբրիէլ Պատկա-  
նեանի մօտ. դժբախտաբար վերջինս Աստարխանից հեռանալով  
Մելքիսէթը չի կարողանում շարունակել իւր ուսումը: Մի քանի  
ժամանակից յետոյ մտնում է գիմնազիա և այնտեղ մտնւմ է



վեց տարու չափ: Մեղքիսէթը մեծ ընդունակութիւն է ունեցել  
Վրացերէն լեզուի, գուցէ և այդ իսկ զարթեցրել է նրա մէջ ա-  
շուղութեան սէրը: \*) Այդ ժամանակ մեռնում է նրա հայրը և  
նա դուրս է գալիս գիմնադիպից, առանց վերջացնելու սահմա-  
նեալ ուսումը: Մտնում է վաճառականի մօտ ծառայութեան և  
չորս տարուց յետոյ նա գործակատար է դառնում Ազլարցոց  
համար և ամբողջ 10 տարի պարապում է այդ գործով: Երե-  
ում է որ այդ ժամանակ ամուսնացել է: (Շարունակութիւնը  
մեզ յայտնի չէ:)

«Սոխոկ» գ. եր. 225

### Ե Ր Գ Ը.

Յայտնի ա որ վաղն ինձ մօտ ես գալու,  
Մութնով արի ոտիդ մատների վերայ,  
Հիմիկուայ մարդիկը չորս ականջ ունին,  
Հազարով էլ կախեն պատերի վերայ:

Բամբասելով ջանի աղար կու շինեն,  
Լեզուները օձի պաշար կու շինեն.  
Թէ մին բան էլ անենք հազար կու շինեն,  
Խօսում են մեզնից լաւ շատերի վերայ:

Ինչպէս եկար մօտս կասենք կու լսենք,  
Ու ամեն բան իրա կարգով կ'սկսենք.  
Մեր խորհելու բանը շատ չի վսվսենք,  
Պատճառ շատ ենք խօսել վատերի վերայ:

Քեզնից ի՞նչ ա պակաս թէ լաւ Ֆիքր անես,  
Էս մեծ լաւութիւնը հետդ կ' տանես,  
Թշնամու աչքն էնպէս բանով կ' հանես,  
Թող բարեկամք խնդին եատերի վերայ:

\*) Մթթէ վրացերէն լեզուն աշուղութեան հետ կապ ունի:  
(Աշխատ)

Էսքան ասելով գլուխս դանգ էլաւ  
 էշխիցդ հալս սարխոշ ու բանգ էլաւ.  
 Հ. տառով քու անունդ չորս վանկ էլաւ,  
 Մէլքիսէթը գրաւ քո զաղերի վերայ:  
 «Սոխակ» գ. երես 150.

\*  
 \* \*

18. **Բունիսար-օղլի** տ. (Բունիաթեանցի օրդի) իսկա-  
 կան անունը Օհանջան ծնուել է 1818 թուականին, Պարսկաս-  
 տանի Խոյ քաղաքում: 1828 թուականին Գեներալ Պասկևիչի  
 ժամանակ Ներսէս Կաթուղիկոս Աշտարակեցին (դեռ եպիսկոպոս)  
 երբ պարսկաստանի հայերը բերում է Ռուսաստան, դրանց թը-  
 ւումն է լինում և Խոյեցի Բունիաթը, (Օհանջանի հայրը) իւր  
 ընտանիքով: Ռուսաստանի մէջ նրանք բնակութիւն են հաստա-  
 տում Լոռի գաւառում: Օհանջանը մանկութիւնից մեծացել է  
 գինեգործութեան մէջ և դրա հետ էլ սովորել է գրել կար-  
 դալը: Նա 40 տարեկան ժամանակից սկսել է սովորել չունգուր  
 ածելը և յորինել Թուրքերէն և Հայերէն երգեր. այդ ժամա-  
 նակից նա իւր անունը նշանակում է Բունիաթ-օղլի:

1845 թուականին նա դալիս է Ալէքսանդրապոլ և մինչև  
 վերջին տարիներս պարապում էր գինեվաճառութեամբ. քաղա-  
 քացիք նրան ճանաչում են ոչ իբր Բունիաթ-օղլի, այլ իբր «բի-  
 ձա» որ նշանակում է պապի կամ հօրեղբայր: Ահա մի քանի  
 տարի է որ Ալէքսանդրապոլից հեռացել է. այժմ նա Վաղար-  
 շապատի Թալն գիւղում պարապում է գինեգործութեամբ: Ունի  
 երկու որդի մեծը Աւագը պարապում է գրագրութեամբ, իսկ  
 փոքրը լուսանկարչութեամբ (Խաչատուր Բունիաթեանց):

Ե Ր Գ Ը.

Էսօր առաւօտից մէկ դեօզալ տեսայ,  
 (տասն) Մազերը շարուել էր տալ գեարտանին հետ

Նրանի էնտուր որ ինչ քեզ եար կլնի,  
Քեզ դակեար դեօղալին անմանին հետ:

Քու թայնա խօսքերէն սիրտս խոցուել ա,  
Բաղուփն կրակուել ա բացուել ա.

Ակեար ծոցիդ միջին թազա բացուել ա,  
Վարդն ու մանուշակը եասամանին հետ:

Ով քեզ տենայ կերթա դին ու իմանը,  
Ոչ ով չի դիտենալ մեր սրտի բանը.  
Արի թաքլիֆ անենք իմ ազիզ ջանը,  
Պիտի տանես դնես եար քո ջանին հետ:

Եարիցս ջոկել էք ինձ ո՞ւր էք տանում,  
Մակեար դուք քեաֆու՞ւր էք դարդ չէք իմանում.  
Մեր էրկուսին դրէք մէկ խուլֆաթ խանում,  
Խղճուկ Բունիաթ-օղլուս էն էղսանին հետ:

(անպիսի)

\*

\* \*

19. **Զահրի** պ.) (Թոյնաւոր) իսկական անունը Վարապետ ծնուել է 1818 թուականին Յուլիս ամսին, Տաճկաստանի Վան քաղաքից ոչ հեռու Վեմ գիւղում: Վարապետը երիտասարդ հասակում ինչպէս սովորութիւն է եղել այնտեղի հասարակ դասակարգի երիտասարդներին Վ. Պոլիս մի գործի լինելու: Նրա բարեկամները տեսնելով Վարապետի յաջողակ ձայն ունենալը և բանաստեղծական շնորհքը, յանձնում են նրան տաճիկ Աշըղ-Նէջմիին, որ սովորացնէ Վարապետին աշուղական արհեստի բոլոր բաները: Վարապետն Աշըղ-Նէջմիի մօտ աւարտելով աշուղական կուրսը, դուրս է գալիս արդէն սովորելով լաւ սաղ ածել: Վարապետ աշուղները տեսնելով Վարապետի սուր և ազդու ձայնը նրան Զահրի մականունն են տալիս: Զահրին մինչև իւր 30

տարեկան դառնալը մնում է Կ. Պոլսում: Բաւականին համակրութիւն է վայելում թէ հայ թէ տաճիկ հասարակ ժողովրդից: Թուրք բէկերն, աշուղները, նախանձում էին որ այդպիսի մի շքնոհար մարդ քրիստոնեայ է եղել, ուստի նրանք վճռում են որ այդ «գեաւուրին» Իսլամական կրօնն ընդունել տան: Զահրին իմանալով այդ, թողնում է Կ. Պոլիսը և փախչում է Ռուսաստան: Նրա վերջին կայարանը լինում Ալէքսանդրապոլ, որտեղ ամուսնանում է և դառնում ընտանեաց տէր: 1870-ական թուականներին երբ Ալէքսանդրապոլում յայտնւում են բուն Հայերէն երգող աշուղներ, Զահրին էլ չէ զլացել իւր կողմից ինքն էլ յորինել մի քանի Հայերէն երգեր. բայց նրա անգրագէտ լինելու համար ոչ մի հատ չէ մնացել մինչև այժմ. թէ և տեղացի մի քանի մարդկանց բերանում կայ նրա երգերը, բայց բոլորովին աղաւաղած: Հազիւ կարողացանք ձեռք բերել նրա որդի Աշղ-Խայաթու մօտից մի Հայերէն երգ, որը մենք առաջ ենք բերում: Զահրին մեռել է 1888 թուականին յունվարի 19-ին Ալէքսանդրապոլում: Երգելիս է եղել աւելի Թուրքերէն քան թէ Հայերէն:

### Ե Ր Գ Ը.

Խնդիրս առ իմ սիրեկան հոգի ջան,  
 Սիրոյդ, դառել եմ սիրաբան հոգի ջան.  
 Սէրդ զրաւեց ինձ անսահման հոգի ջան,  
 Մի սաստկանար ազնուական հոգի ջան,  
 Ծառաւալիս ջուր տես արժան հոգի ջան:

Հուրիդ սիրով մօմի նման հալում եմ,  
 Փոխան սիրոյդ բոլոր կեանքս մաշում եմ,  
 Միշտ բարութեան ճամբիցը սխալում եմ,  
 Մորմոքում եմ աղերսում եմ խնդրում եմ,  
 Միթէ չունիս դու խղճմտանք հոգի ջան:

Օր ըստ օրէ հալ ու մաշ արիր ջանս,  
 Ի՞նչ պատճառ է չես լսեր աղաչանս.  
 Վայ սիրահար վայ իմ անբաղդութեանս,  
 Քաջ սիրովդ ծառաւել է արեանս,  
 Ձեռ կարծում թէ կայ դատաստան հողի ջան:

Վ արդուհի մէկ ականջ արա դանգատիս,  
 Փարատիչ դեղ շնորհէ անփարատիս.

Հաստատութիւն կամեցիր անհաստատիս,

Զահրի կարապետ խղճալի աղքատիս.

Մէկ պուշտի տուր արմաղան հողի ջան:

(Սնտիպ)

\*

\* \*

20. **Չահեղ-օղան.** տ. (պատանի-տղայ) իսկական անու-  
 նը Յարութիւն. ծնուել է Աստարխանում 1820 թուականին:  
 Յայտնի է թէ ուրիշ ինչ գործով է պարապել. իւր կեանքի  
 միջոցում երկար սիրահարութիւններ է քաշել և այդ իսկ ժա-  
 մանակ սկսել է աշուղութիւնը: Մեռել է 30 տարեկան հասակում  
 և թաղուած է Աստարխանի գերեզմաննոցում:

«Ստիպ» գ. երես 225.

### Ե Ր Գ Ը.

Ե՛կ մուլրաթ արա բէբաՓա դիւբար,

Հերիք չէ՛ ինձ էշխիդ դարդն չարչարի.

Մակեամք քեզ յայտնի չէ՛ ես ինչ եմ քաշում,

Ինչպէս որ բիւլբիւլին վարդն չարչարի:

Միրվաթ արա մին տես իմ քաշած հալս,

Գիշեր ցերեկ էշխիդ արին ողբալս.

Ամեն սօնա բոյիդ իմ մաքին գալս,

Մեր արած իղբարին շարթն չարչարի:

Գովասանքդ կանեմ քանի կենդան եմ,  
 ե՛կ մուրվաթ արա ես էլ մին ջան եմ:  
 Առլ խօմ չ'ելամ ես մին Ջահէլ-օղլան եմ,  
 Քաղցր խօսքդ սրտիս դառն չարաչարի:

«Սոխաէ» գ. երես 103

\*

\* \*

21. **Նիրանի** ա. (կրակոտ) իսկական անունը Յովհաննէս. ծնունդ է Վաղարշապատում 1822 թուականին. նա սկսել է ուսանել Պ. Մալինցովից. յետոյ ականաւոր Հայագէտ Մեսրոպ Թաղիաթեանից, որը և գիտէր Թաթարերէն Պարսկերէն և Անգլիերէն: Վերջը պատուական խոհեմ և աշխատասէր Յովհաննէս Նահիաթունեան արք-եպիսկոպոսի մօտ: Նիրանին լաւ ոսկերիչ էր և բացի այդ 1835 թուականին առանց վարպետ ուսաւ սաղ ածելը: 1840 թուականին սովորեց չունգուր ածելը և բանարտեղծում էր Հայերէն և Թուրքերէն: 1842-ին մականուանեցաւ «Նահիրի» (բանաստեղծ). իսկ 1849 թուականին «Նիրանի» տես Րусскій инвалидъ 1857 г. № 28

«Նոր Դար»

### Ե Ր Գ Ը.

Ասում ես խեղճ ման գալով բոլորն ինձ արդար են ասում,  
 Ձեւ գիտում վատ համբաւդ ուրիշ տեղ հազար են ասում.  
 Աեզուդ չի պահպանելով բնութիւնդ չար են ասում,  
 Հէնց գիտես շատ խօսացող մարդերին ճարտար են ասում.  
 Ծաղը են անում խնդում են անմիտ խելագար են ասում:

Այլոց լաւ սենեակիցն քո փոքր տունն է գովելի,  
 Աշխատիր վատ չի լինիս մարդու անունն է գովելի  
 Ոչ ով քեզ գրօշ չի տալ թէ ունիս՝ բունն է գովելի.

Անզգամ կնոջ մէնէն տիրասէր շունն է գովելի,  
Որքան թակես չի փախնիր նրան հաւատար են ասում:

Շնորհակալութիւնը ըսկի մարդու տուն չի շինիլ,  
Գու դրան հաւանելով քեզ սեփական կայք մի անիլ  
Հազար բեռ էլ ունենաս ոսկի ու արծաթ չի լինիլ.  
Նիրանի դուն փող մի տալ էդպէս դադարկ բաներ գնիլ,  
Էդպէս բանին հաւատող մարդերին յիմար են ասում:

«Քնար Հայհիան»

եր. 571 կռճ. 2.

\*  
\* \*

22. Մալիւ. ա. (խեղճ տխուր) իսկական անունը Գալուստ. ծնուել է Ղարսում 1823 թուականին: Սրա հայր Սարգիսը բնիկ Ղարսեցի է եղել. ինչ հանգամանքներով գալիս է Ալէքսանդրապոլի Ղանլիճա գիւղը յայտնի չէ. նա հետը բերում է իւր որդի Գալուստին: Գալուստը գիւղի մէջ համարեայ եօթը տարու չափ մնալով պարապում է ջուհլակութեամբ (կտաւ գործող) և դրա հետ էլ սովորում է ջութակ ածելը (երեք թելի): 1833 թուականին Սարգիսը ընտանիքով տեղափոխւում է քաղաք (Ալէքսանդրապոլ) հետզհետէ Գալուստը Ալէքսանդրապոլում իւր ասելով Սուրբ գրոց հետեւելով գրում է բանաստեղծութիւններ «ղոշմայ»-ներ և այլն: Եւ աշուղական սովորութեամբ նա իւր անունը կնքում է Մալիւ:

Կարճ ժամանակից յետոյ նա թողնում է ջուհլակութիւնը և պարապում է պարտիզպանութեամբ և աշուղութեամբ: Նա հիմա ծերացել է. թողել է աշուղութիւնը և օրերն ինչպէս ասում են մթնեցնում է իւր պարտիզում:

Ե Ր Գ Ը.

Սիրտս նուաղել է հոգիս մաշել է,  
Էդ քու գաղտնի այրող կրակդ աշխարհ.

Տաշել է իմ կենաց ծառը տաշել է,  
Քու մահերով սրու սծ դանակդ աշխարհ:

Ըստ գրոց հին մեղքով չարերով լցուած,  
Հազարաւոր թուով դարերով լցուած.  
Լցուած ես անհամար օրերով լցուած,  
Աւաղ դեռ տղայ է հասակդ աշխարհ:

Քու տարիքդ բեղի պարծանք չի լինիր,  
Քանզը էժան էժանը թանգ չի լինիր.  
Քեզ սիրողը կենաց ժառանգ չի լինիր,  
Որովհետեւ մահ է փափակդ աշխարհ:

Եղբայր թող մարմնեղէն միտքդ ու լսէ,  
Սուրբ հոգիէն եկ նորոգիչ սկսէ.  
Վերջը քու տիրոջդ գալուն սպասէ,  
Կաղաչէ քու Մալիւ մշակդ աշխարհ:  
(Անտիոյ) կոճ- 16 տ.

\*  
\* \*

23. **Էյրաթի.** (անհիմն խախուտ) իսկական անունը Ելբակ.  
Ծնուել է 1825 թուականին Տաճկաստանի Հասան-Ղալա բեր-  
դաբաղաբում:

1830-ական թուականներին գաղթել է Ռուսաստան և բը-  
նակութիւնը հաստատել է Ալէքսանդրապոլում:

Մեծ մասամբ նա պարապում էր որմնադիրութեամբ մի-  
այն մասնաւորապէս սովորել էր սազ ածել և իւր անունը նը-  
շանակել էր էյրաթի:

**Ե Ր Գ Ը.**

Բաւական է ուսում ես էս աշխարհին,  
Մնամ առանց զխջում լեռ քարի լման.



Հրեղէն սուսերով զինւորների պէս,  
Զէնեցին քեռթեցին խեղճ գառի լման:

Գիշերը չի տանի ախբրտի քունը,  
Եւ օր միտը գոյնի իւր խեղճութիւնը.  
Հաստատութիւն չունի բնակութիւնը,  
Օղերէն ցրուած չատրի լման:

Էյրաթինեմ կտրաւ իղբալիս ազը,  
Մէկ օր նոր չ'տեսայ էս իմ գտակը.  
Գիշեր ու ցերեկ մեղքիս տոպրակը,  
Ումուզիս եմ առե ուրարի լման:

(Ա. Ն. Կ. Կ.)

\*  
\* \* \*

24. **Մայիֆ.** պ. (կոյր) իսկական անունը Յարութիւն. ծնուել է 1825 թուականին Պարսկաստանում, Թէյրանի Ղարաղան գիւղում. նրա հայր Ղազարը որ նոյնպէս եղած է աշուղ, ածելիս է եղել սազ: Դեռ Յարութիւնի մի տարեկան ժամանակ, հայրը մեռնում է և նրա հօրեղբայրը Յարութիւնին և բրոջը հետն առած դալիս է Շամախի: 1842 թուականին թէև Շամախում Յարութիւնը փոքր ինչ կարդում է, բայց միջոց չունենալով երկար շարունակելու, սկսում է այնտեղի նորաշէն եկեղեցու վրայ մշակութիւն անել և աշխատած փողերով ընթերցանութեան գրքեր առնել: Նա մի քանի շաբաթ այդ ծանրակիր մշակութիւնն անելով, նրա աչքերը վնասւում են և շատ չանցած կուրնում են: Այդ իսկ օրը նա իւր անունը դնում է Մայիֆ: Պարուստի միակ միջոց ձեռք բերելու համար նա սովորում է սազ ածելը և պարապում է աշուղութեամբ:

«Սոխաէ» դ. երես. 20

## Ե Ր Գ Ը.

Մայրաքաղաք՝ ես դու ազնիւ Հաշտարխան,  
 Քո գեղեցկութեանդ գովասանք կուտան.  
 Քեզանում ճարում է ամեն տեսակ բան,  
 Առնողն թող առնի կարում է որքան.  
 Հազար հազարներով թէ կուզի մարդ գան,  
 Մայրաքաղաք ես դու ազնիւ Հաշտարխան:

Կանայքը դուրս են գամ ման գալի հովում,  
 Ամենքը զուգուած են թանգագին մովում.  
 Վարդերի պէս բացուած սրտերի պովում,  
 Կանաֆի ափերը գարուն է թւում.  
 Կարետով Ֆայտօնով դրօշկով կը գան,  
 Մայրաքաղաք ես դու ազնիւ Հաշտարխան:

Մայիֆ Յարութիւն այդ յիշատակն հին ա,  
 Դու Հաշտարխանին նոր ընծայ տու գնա.  
 Պատճառ ազնիւ քաղաք ա թանգագին ա,  
 Թէ կ' ընդունեն այս աշխատանքս մնայ.  
 Տէրի տուած պարգև ինձ ունեմ այսքան,  
 Մայրաքաղաք ես դու ազնիւ Հաշտարխան:

«Սոխաէ» Դ. եր. 166 կռճ. 8 տ.

\*

\* \*

25. **Շիրին** պ. (քաղսր անուշ) իսկական անունը Յովհաննէս Տնուել է 1827-ին Կողբ գիւղում (Նրեանեան նահանգ) սա իւր երկու տարեկան հասակում ծաղկացաւի պատճառով զըրկուումէ իւր աչքերից:

Որովհետեւ մանուկ Յովհաննէսը լաւ ձայն է ունեցել, իւր հօր կարգապիտանութեամբ ուղարկում են Ալէքսանդրասպոլ, որ այնտեղ երգիչ Բաւէլի մօտ՝ որը լաւ սաղ էր ածում, աշկերտ լինի:

Յովհաննէսը որ իւր ձայնի քաղցրութեան համար ստացել էր Շիրին աշուղական անունը, մի քանի տարի մնալով այդ ալէ քսանդրապոլսի երաժիշտ վարպետի մօտ, լաւ սովորում է սազ ածելը: Յետոյ անցնում է Տաճկաստան. Վարնի մէջ պատահում է տաճիկ աշուղ Ասպի-էֆէնտուն: Մի քանի ամսից յետոյ վերադառնում է Վողբ և այնտեղից էլ գնում է Վաղարշապատ: Շիրինը սկզբում երգում էր Քաթար լեզուով, բայց յետոյ մի քանի բարի մարդկանց խորհրդով սկսեց երգել Հայերէն: (տես Русскій инвалидъ 1857 № 28.)

### Ե Ր Գ Ը.

Դուշա ջան, քու ցանկալի գեղեցկութիւնդ է գովելի,  
Քաղաքավարութիւնդ, խելքդ ու անունդ է գովելի.  
Մանաւանդ ազնիւ ու հանդարդ բնութիւնդ է գովելի,  
Դու հարազատ ազգէ ես ընտիր արիւնդ է գովելի:

Գիտում եմ որ սիրելի ուրիշի սէր տալ չ'գիտես,  
Չափազանց վարդարւելովդ տեղեց տեղ մանգալ չ'գիտես.  
Քաղցր ու պարկեշտ հոգի ես աւել ղալմաղալ չ' գիտես,  
Մէկ ծառ ես Նդեմական բարի արիւնդ է գովելի:

Գիտում եմ որ լաւութեանս փոխարէն չար չես անիլ,  
Աղաղակս լսելու համար սիրտդ քար չես անիլ,  
Քու սէրիդ աղեղովը ինձի նետահար չես անիլ.  
Չուր մի մաշուիլ սննեակս եկ ասութիւնդ է գովելի:

Չեմ սխալուել եթէ քեզ գեղեցկութեան արքայ ասեմ,  
Նեղութեանս աւետիք, կենդանութեան ըծայ ասեմ.  
Նսթերին համանման ես հիմայ քեզ ներկայ ասեմ,  
Մարդաշահ խաղաղարար խօսակցութիւնդ է գովելի:

Քեզանից քիչ վախում եմ, գէշ հարեաներ շատ ունիս,  
Անունդ ստոր քցելու վատարերաններ շատ ունիս.

Վարք ու բարքդ մի փոխիլ, դու գովասաններ շատ ունիս.  
Շիրինի մօտ քու կատարեալ կեցութիւնդ է գովելի:  
«Նոր քնար» երես 25

\*

\* \*

✓ 26. \*) **Լարայ.** պ. (աննման) կամ (դաստիարակ). իսկական  
անունը Կարապետ. ծնուել է Ստտարխանում, բայց յայտնի չէ որ  
թուականին: Իսկ այժմ էլ ինչպէս գրել է «Սոխակը» այնտեղ  
պարապում է առևտուրով:

### Ե Ր Գ Ը.

Ազապ տղան աշխարհումս ինչպէս մին բիւլբիւլ բաղի մէջ,  
Հէնց որ ամուսնացաւ ընկնում է հոգս ու դարդի մէջ.  
Թէ լաւին ուստ եկաւ քոլ ցաւերն անըմա հէջ,  
Թէ բնութիւնն վատ է խայտառակում է ազգի մէջ,  
Նամուսու խեղդըւում, է երբ կ' լինի իմ վերջ:

Աղջկերբ միտք են անում մենք խօ էսպէս չենք մնալու,  
Ժամանակն որ կ'գայ մենք էլ մարդի ենք գնալու.  
Կարծում են իրանց մտքով երջանկութիւն են գնալու,  
Չեն խաբար որ չար մտքով կորչելու են մեղքերու մէջ:

Թէ գրեմ կանանց բաներն կը լցուի քանի երես,  
Նարադրանք կասեն քեզի պիտի լսես ու համբերես.  
Եդ շարադրանքը բազարից յետ գալիս պիտի բերես,  
Թէ չ'բերես ի՞նչ աչքունք կ'հանդիպես և ի՞նչ երես,  
Տէր դու ինձի ուստ չ'բերես էնպէսին չ'ընկնեմ դարդի մէջ:  
«Սոխակ» գ. եր. 177.

\*) Մենք կ' ցանկացինք որ մինչև վերջը ժամանակագրական  
կարգով գրէինք բայց հիմազ որ մի քանիսի ժամանակները չաչտ-  
նի չեն, դրա համար էլ այդ չաչտնի չեղածները մէջ տեղը թո-  
ղնիք:

27. **Ղազազ-Օսեփ.** Արա մասին ոչ մի բան յայտնի չէ:

\*  
\* \*

28. **Երիւմ-Օդրան.** ա. (որք տղայ) իսկական անունը յայտնի չէ և բացի այդ՝ հակառակ մեր ցանկութեան չ'կարողացանք սրա մասին կենսագրական տեղեկութիւններ հաւաքել. միայն այսչափ բան են ասում սրա մասին, իբր թէ թիֆլիսեցի է եղել:

### Ե Ր Գ Ը.

Գեղեցկութիւնիդ վրէն ես մայիլ իլամ,  
Համեմատդ չիլիս աշխարհիս վրէն.  
Ես աշուղ իլամ քո սիրոյդ վրէն,  
Եշխիդ խելքս թռած համար իս իլամ:

Կանաչած բաղ ես անուշ հոտերով,  
Ի՞նչպէս դիմանամ քեզի գովելով.  
Մի թող աւարայ դու ինձի լալով,  
Խօսքերս կասեմ հարիւր հազարով:

Ի՞նչ արել եմ ես քեզ թողար էդ հալով,  
Էլի չեմ դիմանալ նամուս անելով.  
Եթիւմ-օղլին կասի փիքը անելով,  
Բէլքի մին ճար ըննի արա դթալով:

«Սոխուկ» գ. եր. 130

\*  
\* \*

29. **Ղարա.** ա. (սև գեղեցիկ) սրա ով լինելը մեզ չէ յայտնած:

## Ե Ր Գ Ը.

Աշխարհիս լաւութիւն արա,  
Գանգատ չունիմ զայն ի՞նչ անեմ.  
Ժամանակով քեզ ճար արա,  
Զի լինիլ իխտիար հալ ի՞նչ անեմ:

Շատ է մեր սաղմոսի զօրքը,  
Պատիւ անենք պահենք փառքը.  
Պէտքը կ'գայ էն աշխարքը,  
Իուր ջաւահիր ան ի՞նչ անեմ:

Մտտ բաներին մի կաց վկայ,  
Արդարներին տանջանք չ'կայ.  
Վաստու մարդ կայ տուրքն չի տայ.  
Ոսկի արծաթ մայն ի՞նչ անեմ:

Ուղիղ սրտով ժամ գնալով,  
Գնանք ճանապարհին լալով.  
Ձեռնով ողորմութիւն տալով,  
Սրտէս չի գալ տանն ի՞նչ անեմ:

Մի թողար մեղ քդ շատանայ,  
Քեզ կ'խաբի չար սատանայ.  
Մէջ գերեզման չես գինջանայ,  
Վերադ քաշած սայն ի՞նչ անեմ:

Ես մեղաւոր Աշուղ-Ղարա,  
Գործած մեղքիս՝ Տէր ճար արա.  
Մեղաւորին չիլնել չարա,  
Հագուած շիրմայ շայն ի՞նչ անեմ:

«Սոխակ» դ. երես 28.

\*  
\* \*

30. **Խարագ-օղլան.** տ. (կոշկակար տղայ) իսկական ա-  
նունը յայտնի չէ. որտեղ և երբ է ծնունդ դարձեալ յայտնի չէ:

Ե Ր Գ Ը.

Սրտիս կրակն վառ վառ ա,  
Կրակուիս դու բարով դիլբար.  
Մալուկ մուշկուկ թողար ինձի,  
Մոլորուիս դու սարով դիլբար:

Էշխիցդ նարա քաշեցիր,  
Ձեռքիցդ եկածն արեցիր.  
Արդար եղի պէս հալեցիր,  
Տապակուես եղովդ դիլբար:

Խարագ-օղլանն եմ թաւատր,  
Ընդունեմ Հայոց հաւատր.  
Սազի երեսի սաւատր,  
Սազի պէս չորանաս դիլբար:

«Սոխա՛» գ. եր. 175 կռճ. 2 տ.

\* \*

31. **Հայաթի.** ա. (կենսատու կենսաբաշխ) իսկական ա-  
նունը Միքայէլ. ծնունդ է Մուշ քաղաքի Բլուր գիւղում, յայտնի  
չէ թէ որ թուականին: Սուլթան Մահմետի ժամանակներին,  
եղել է նրա մօտ երգող և նուագող: Սրա յորինած երգերը բո-  
լորը թուրքերէն են: Ածելիս է եղել սազի վրայ. երգերից ոչ մի  
հատ չեն հասել մեզ:

«Փ - ն ջ ը ը. 2246

\* \*

32. **Բաղդասար** եղել է մշեցի. առաջ պարապել է աշուղութիւնով. լաւ էլ սիրելի է եղել հասարակութեանը. յետոյ ձեռնադրուել է քահանայ. Բայց նա չէ դադարել բանաստեղծութիւններ գրելուց: Ծնուած է վաղճանուած թուականները յայտնի չեն:

## Ե Ր Գ Ը.

Յիրեք բանը զօռ է յաշխարհի միջէն,  
Մէկ սէրը մէկ սաւղէն, մէկ աղ բատութիւն.  
Քաշող մարդուն կանցնէ էնթիիւ գեշէն,  
Մէկ սէրը, մէկ սաւղէն, մէկ աղ բատութիւն:

Շատի աչքի արտրսունքը չայ էրաւ,  
Շատերուն էլ դէօյուլութները փայ էրաւ.  
Քանի՛ քանի տղամարդիկ զայ էրաւ,  
Մէկ սէրը, մէկ սաւղէն, մէկ աղ բատութիւն:

Ծարագի ես յիրեքն ըսի պատիժը վեց է.  
Գնա գիտցիր խաղիս ըսողն էրեց է.  
Քաղդասարին յիրեք բանը կերեցէ  
Մէկ սէրը, մէկ սաւղէն, մէկ աղ բատութիւն:

(անսխալ)

33. **Ղարիբ-օղլան** (օտար տղայ) իսկական անունը և ով լինելը յայտնի չէ, միայն ասում են որ թիֆլիսեցի է եղել:

## Ե Ր Գ Ը.

Դրացի՞ դու ի՞նչ ես նստել. արի փոքր խօսի ինձ հետ  
Ինձի ու քեզ չէ միայն ամեքին է կպել այս նետ:



Այդպէս խորին՝ զգացմունքով ի՞նչի վերայ ես մտածում,  
 Քաղաքս ողջ փչացել է մարդ չի մնացել այս քանդումս:  
 Տորոնչիքը խարարներին տիկինի տեղ են պար ածում:  
 Այսպիսի դժբաղդութիւնն ողջ չի տեսած ստեղծուածում,  
 Սորանից պրծում չունինք գերեզման կ'տանինք մեզ հետ:

Փուշ փուշ համբաւներ լսելով ականջներս էլ խուլացաւ,  
 Ով այսօր հաստատ խօսեց, տեսնում ես վաղն թուլացաւ,  
 Ինքներս հոգսի ընկանք առուտուրներս ծուլացաւ,  
 Տորոնն մեզ լաւ դմակ էր վերջն ամօթներս բացաւ,  
 Ել չենք տեսնիլ այն օրերը թողեց մեզի գնաց անհետ:

Տորնի վերայ խօսողներից դու էիր պակաս Ղարիպ-տղայ  
 Խօսքումդ էլ սխալ չկայ որ փոշմանես ասես մեղայ:  
 Ինչ է դիփ արդար ես ասել ով լէ կասէ սարսաղ ա  
 Բայց դու մոռացել ես ասել թէ տորոնն ի՞նչի դեղ ա  
 Եթէ ներկես քեաֆտառներին, փոխար կ'ընկնին մէյմունի հետ:

«Սոխակ» դ. եր. 66 կոճ. 10 տ.

\*

\* \*

34. **Բարուիկ** սրա անունը ինչպէս երևում է «բիւլբիւլ» բա-  
 ռից է, այսինքն սոխակիկ. ոչ իսկական անունը ոչ էլ ով լինելը  
 յայտնի չէ. միայն Բլբուլիկի մի երգը առաջ ենք բերում այստեղ:

**Ե Ր Գ Ը՝**

Երանի կտամ էն երեկոյին,

Որ իմ դէմ ու դէմ նստած էիր դու:

Մտիկ կտայի քո սե աչքերին,

Կարծում էի թէ լաւնիակ ես դու,

Սոր հրաշք ես դու:

Անմեղու թիւոր ճակատիդ վրան  
 Փայլում էր որպէս ժպիտ շրթունքիդ,  
 Մազերիդ հիւսերն քնքուշ ու երկան,  
 Լար խեղժուելու ինձ թէ կատես դու,  
 Ո՛հ սիրես ինձ դու:

Սրայտակ ատամներիդ վարդ սուօշներիդ,  
 Կէս լուսին ճակատդ հոգի են հանում.  
 Բայց անուշ ձայնդ գրաւիչ հայացքդ,  
 Սիրտ է կազդուրում. թէ հրեշտակ ես դու,  
 Իսկ իմ կեանքս ես դու:

Մոռացայ հանգիստ մոռացայ և բուն,  
 Դառն է իմ կերածն ըմպածն ամեն օր,  
 Առանց քեզ ինչ կեանք ինչ հանգստութիւն  
 Կեանքիս միակ բաղդն ու զարդն ես դու,  
 Ցաւ ու դարդն ես դու:

Ասա սիրուհի մի ծածկիր ինձնից.  
 Ծանօթ են քեզի վարդն ու սոխակը.  
 Հանաք մի անիր՝ խոցս է արնալից,  
 Բեր Բլբուլիկիդ, ցաւին մի ճար դու,  
 Ո՛հ հոգիս առ դու:

«Սոխակ» գ. եր. 179.

35. **Սարի-օղլան.** (չէկ տղայ) իսկական անունը յայտնի չէ. ծնուած թիւն էլ յայտնի չէ, բայց եղել է զարսեցի: Պատանի ժամանակ աշակերտել է ենիչերիների մեծաւոր Աբէ-աղայի մօտ որ միաժամանակ բերանով սանտր, \*) ձեռքերով սազ, ոտքերով սանթուր է ածելիս եղել: Գեներալ Պասկեւիչի ժամանակ, Սարի-օղլանը իւր համագիւղացիների հետ, գաղթում է Ալէքսանդրա-

\*) Սանտրը մի երաժշտական գործիք չէ, այլ հասարակ սանտրն ատամներին կպցնում են բարակ թուղթ, և բերանով ածում են:

պոլ, և բնակութիւն է հաստատում նոյն գաւառի Եկեանլար  
գիւղում: Թէև Աբէ-աղայի սրտովը չէ եղել Սարի-օղլանի հե-  
ռանալը որովհետև վերջինս շատ զուարճախօս և ծաղրածու  
մարդ է եղել:

Սարի-օղլանը այդ գիւղի մէջ ամուսնացել է և այդ տեղ  
պարապել է աշուղութեամբ. երգել է միշտ թուլփերէն լեզուով,  
և ածել է սագի վրայ:

Մի քանի տարուց յետոյ գիւղի հասարակութիւնը խնդ-  
րել է Սարի-օղլանին որ թոյլ տայ աշուղութիւնը, և լինի գիւղի  
տանուտէր. նա էլ չէ մերժել իւր սիրելի ժողովրդի խնդիրը.  
անձն է առել տանուտէր լինելու: Համարեայ 15 տարի տա-  
նուտէր լինելով, վերջերս մեռել է. թողնելով երկու որդի Վար-  
դան և Գրիգոր:

### Ե Ր Գ Ը.

Դունեայ բանա օլտուն արագ,

Եխըլարան բատան դիւնեայ.

Մանինան դուշմիսան զարագ,

Շարուսզ խիլաֆ սաթան դիւնեայ:

Նեչայ Սուլթան նեչայ խաննան,

Նեչայ թախտի Սուլէյմաննան

Բիլգամ ալ չաքմասան մաննան,

Նէտիտ եախամ տութան դիւնեայ:

Սարի պու սէօզի դիասըն,

Եախասզ քօյնակ դիասն.

Մանիտա եսան տօյմասըն,

Պիր գեանտընտան ութան դիւնեայ:

(անպիտոյ •)

\*

\* \*

36. **Բանգի.** (պիսակաւոր) եղել է Ալէքսանդրապոլի Համամլի գիւղից. իւր շրջակայ ժողովրդի մէջ լաւ անուն է ունեցել. շատ պատմել է Թուրքերէն հեքեաթներ: Բանգին ինքը կոյր է եղել և մի կոյր աղջիկ էլ առել է իրան կնութեան, որ չ' լինի թէ կինը իրան անհաւատարիմ և դաւաճան դուրս գայ: Սրա երգերից ոչ մէկը մեզ չէ հասած:

37. **Դօնի.** եղել է նուխեցի, բայց ոչ երգն է մեզ յայտնի, ոչ կենսագրութիւնը:

38. **Ալուան-օղան** (ներկարար տղայ) անունը Գասպար. կենսագրութիւնից ոչ մի բան մեզ յայտնի չէ, միայն սրա երգերից հետեւեալ չորս տողը կարողացանք գտնել:

Էրկու եարի մէջնն թէ նընգիլ է սէր,  
Օվ օր աստրծասէր է պէտք է խօսի խէր.  
Մէկ մէկումէն չ'ըլին չը մնան անտէր,  
Լաւ օրն անց կու կենայ դիւի ախ ու վա՛շ վա՛շ:

«Սայաթ-Նուայ» երես 20:

39. **Օքսուզ-օղան.** (որք տղայ) սրա մասին կենսագրական տեղեկութիւններ չեն հասել մեզ:

(Ես) քիզ հետ շատ բան ունիմ  
Չարթնի ձուրտերուն օխտը խան ունիմ

«Սայաթ-Նուայ» երես 41.

Օքսուզ-օղլանն ձեր թարիփն անելիս,  
 Հարփի հարփի վրէն, մէ մէկ դարսելիս,  
 Ձեզ երկուսիդ տեսնեմ մէկդի խօսելիս,  
 Գու որ կուում ըլիք ես խօմ հազ կօնիմ:

«Սայեալ-Նուլա» երես. 121

\*

\* \*

40. **Լեզզար-օղլան.** ա.) (համով ճաշակով տղայ) սրա մասին կենսագրական տեղեկութիւններ չեն հասել մեզ. միայն սրա երգերից յայտնի է հետեւեալ կտորը:

Մեռնելու օրն քիզ գուզիմ վրէս քար ածես ինձ ամա.

«Սայեալ-Նուլա» երես 47.

\*

\* \*

41. **Նամիյի.** պ.) (անուանի) իսկական անունը Յակովբ. որտեղ և որ թուականին է ծնուել յայտնի չէ. միայն Սուլթան-Աբդիւլ-Ազիզի ժամանակներում նա Պոլսում մեծ համակրանք էր վայելում թուրք իշխաններից և մեծերից: Տաճկերեն լեզուն լազիտեցել է գրել կարդալ և այնպէս «կոկիկ» երգեր է ունեցել, որ մինչև անգամ տաճիկները զարմացել են նրա շնորհալի տաղանդի վրայ:

Ե Ր Գ Ը.

Աթտը վասլըն օլ հիլալ էպրու եէնի այ պաշընա,  
 Տէօնտի պարի հիճրիլէ զատտիմ խէմիտէ զաշընա.

Պիր Ֆէլէկ մէշրէտ օ մէհրուլիմ կիպի կեօրմիւշ միսին.  
 Թա կէլիճէ էյ սիրիհրի բիրէզէն պու եաշընա:

Կեօղաէ թիմսալին միւճէսէմ կեօսթէրիր ինսան իւշ այն,

Աֆէրիմ օլտուն նիկեարամ նագշիտէն նագգաշընա.  
 Յէրէ կէշմիշ շէրմ իլէ էյ տիւրրէի նայապընապ,  
 Բէշք իտուպ քեանի պէտէ խշան լալի կէվճէր բաշընա:

Իքի չէշմին նամիյա այնի սատաֆ տէրեասըտըր,  
 Լուլույի լալա տիսէմ տէ եարաշըր կեօզ եաշընա:

Մ. Արտադաճէան Կ. Պոլիս.

\*

\* \*

✓ 42. **Խոյի-Վարդան.** Եղել է Պարսկաստանի Խոյ քա-  
 ղաքից. բայց թէ ուր թուականին է եղել մեզ չէ յայտնած:  
 Ածել է սազի վրայ, երգել է միշտ Թուքերէն:

\*

\* \*

✓ 43. **Ռուստամ.** Եղել է յայտնի աշուղ, բայց բացի ան-  
 ուանից ուրիշ ոչ մի բան մեզ յայտնի չէ: Միայն սրա մի երգը  
 կարողացանք գտնել.

Ե Ր Գ Ը.

Ո՛վ սիրելի մի պաչ տուր՝ ինձ մի թողուլ հասրաթ,  
 Աստուած սիրես մօտ արի, ռահմ արա բի մուրուաթ.

Բեչարա Մաջնունի պէս եղել եմ ջամալիդ մաթ,  
 Գեղեցիկ ես զանազան, դու ես մէկ գիւրջի թաւաթ,  
 Կուռս ճիտովտ քցեմ, ես դու անենք եխտիլաթ,  
 Ստեղծողէն ճար անի սէրն ունի շատ լազզաթ:

Անկայ սիրոյդ կրակն, կորաւ խելք ու բեամալս,  
 Զորացած վարդի նման սհմիշ էլաւ ջամալս.  
 Ի՞նչ կուլի ռահմ անես հարցանես արդ ու հալս,

Մտրաւ եւմ ջուր եւմ ուզում պոնկներիցդ տուր շարաթ:

Էյ Նազանի ինձ ղոնաղ տար բո տունը մեհման արա  
Գուլար շաղ տուր մազերիդ հոտով ուէյհան արա.

Սէրդ ինձի սախաթել ա դարդերիս դարման արա,

Եթէ դարման չես անիլ ել գնանք շար ու շարեաթ:

Բոյըդ ինձ լոյս կ'տայ նոր շամ չրաղի պէս,

Միծերդ վարդի կոկում ծոցդ բաղչա բաղի պէս.

Բէշարա Ռուստամին պահել ես տուտսաղի պէս,

Իմ սիրելի սաղ ընես, չեմ ուզիլ մալ ու դովլաթ:

«Նոր շնար»

Ոսկ. Յովանիսեան.

\*

✦ ✦

44. **Նաշխունով.** (Նաշխունեանց) իսկական անունը Ասատուր բնակում է Թիֆլիսի հաւարար թաղում. նա մինչև այժմ էլ դեռ Թիֆլիսումն է. գրում է հայերէն կրդեր:

Ե Ր Գ Ը.

Նազանի բարի հաւէս արի գուղիմ քեզ ճարի,

Խնդիր ունիմ մօտս արի մի շարչարի մի բերի զարի.

Զարի բերելով ինձ էրէլով շատ զայ իս արի,

Ինձ զայ անելով թշնամանելով ի՞նչ պիտիս ճարի

Գիտեմ ճար չունիս իմըն դուն իս շուտ ուայի արի:

Էշխէդ իս հալի միշտ իմ լալի սիրտս ունիմ եարօ,

Իմ եարա ջանիս մէ ոահմ անիս ոահմդ ինձ ճար ա.

Ռահմ չիս անում, կամք չիս անում ի՞նչպէս ջիկար ա,

Ջիկարս է եարա, փարա-փարա կանչում եմ հարա,

Հարա կանչելով քեզ ման գալով էկա բեզարի:

Անմահական ծառ իս անուշ բարիս թաղա նուբար իս

Կուս անգին բար իս շատ պայծառ իս խնդրեմ զարդարիս.  
 Ինձ քիզ տերացնիս ուրախացնիս էլ չ'չարչարիս,  
 Իմ եարա ջանիս դարման անիս կամքս կատարիս,  
 Դարմանս դուն ես ջուռաթ չունիս իղըար տաս արի:

Եար քու գուն իմ ես բիւլբիւլ իմ ջունուն իմ դառի,  
 Քիզմէն ջան չունիմ էլ հայ չունիմ էշխէդ ես վառի,  
 էշխէդ վառիլ եմ աւրուել եմ խաստայ իմ դառի.  
 Միտքս ցրուել է մոլորուել է խելքս իս առի,  
 Խելքս առած ջանիս մէ ճար անիս խօսք ասիս բարի:

Եաղութ եաման իս լալ մերձան իս շատ աննման իս  
 Աննմանութենէդ բարկութենէդ ինձի զայ ջանինս.  
 Ինձ Նաշխունովս էշխով գովս թաք հետդ տանիս,  
 Կամ չոքիս ջանիս, հոգիս հանիս թաք ինձ բանդ ջանիս,  
 Ինչ կուզէ անես թէ կուզ սպանես կամիմ քեզ ճարի:

«Սարու-Լի-ն է-Մանու-էլ»

\*

\* \*

45. **Անտոն-օղի.** (Անտոնի որդի) ոչ իսկական անունն է  
 մեզ յայտնի և ոչ որտեղացի լինելը. երգում էր Թուրքերէն:

\*

\* \*

46. **Քիւյիկ-նովալ.** (փոքրիկ կամ կարծի սերունդ) սը-  
 լա' մասին ոչ մի տեղեկութիւն չենք կարողացել գտնել:

Ե Ր Գ Ը.

Չհալ եքեան ջաննաթ թափտրմ ջաննաթ թաջ,  
 Ջան գեալտի օ սահաթտա եասար աջ.

Ջուլթաթ ովէդանտրմ ջանդա չաքտրմ ջաննաթ թաջ,



Զիաթ օլղում ջամալընդա եաս արաջ:

Չանըմտա վար ջիւքեամ չոխ վար խանար գիւջ,

Ջամ ջափա աթէշտայ չոխ վար եանար գիւջ:

Ջաննաթ գեազար Քիւչիկ-նափա եանար գիւջ:

Ջամէյաղըմ փէշամ օլղի եա սարաջ:

«Արու-Բիւն և Մանու-էլ.»

\*

\* \*

47. **Սարդարի** սրա մասին ոչ մի տեղեկութիւն չէ հասցրած մեզ:

### Ե Ր Գ Ը.

Անգութ մահը ինձի վերայ դատ բացեց,

Իմ ծառը կտրելու տապար ցոյց տուեց.

Իւր բերանը ինձի վերայ վատ բացեց,

Աշխարհից զատուելու խաբար ցոյց տուեց:

Բարէլոնեան հնոցի պէս բոցոտեց,

Թունաւորած օձերի պէս օձոտեց.

Արիւնարբու զինւորի պէս խոցոտեց,

Վիրաւորուած սրտիս կապար ցոյց տուեց:

Այս անիրաւ մահն է կարծես կռապաշտ,

Երբէք չի խօսում մարդկանց հետը հաշտ.

Ստէպ ստէպ ինձ կանչում է կռուի դաշտ,

Խեղճ Սարդարիս զէնք ու տապար ցոյց տուեց:

(Ա. Նարեկ)

\* \* \*

48. **Ղարամ-օղլի.** (գրչի որդի) ուզում է ասել բանաստեղծի որդի: Սրա մասին ոչ մի կենսագրական տեղեկութիւններ չեն հասել մեզ:

### Ե Ր Գ Ը.

Էյ աղալար՝ մէկ դրզում չորս վանք տեսայ.  
Մէկն Հոռոմսիմա Շողոկաթ խանա  
Ասին ուռումէլէն խարաճ կու կիտեն,  
Մէկն Լուսաւորիչ մէկն Գեարեանա:

Հային զուլուղ կանէ յիտուն օր պասին,  
Լուսն ա՛ կամար կապեր քու բեմի դասին.  
Գիւլափաթ վարագուր քաշած յէրեսին,  
Հոգևոր Տէրն պիտի սուրաթն բանա:

Առաւօտից անուշ կու գայ պաշտումի մառը  
Հինգ հարուր լիւլայ ա մէկ ոսկէ ճառը.  
Անկրակ մեռոնը մատաղհաս գառը,  
Կերթայ արև, լուսահոգին բաթանա:

Պատերը անգին քար շարած մարդարիտ,  
Շատ մարդ զուլուղ կանէ քու մարմար քարիդ.  
Զարն խափանեցիր առաջն բարիդ,  
Խաչուառ ջաւահիր էր մահուդ անդանա.

Խաչուառ ջաւահիր էր ինչ կնոջ մերձան,  
Գուներն էր ոսկեծեծ ինչ Ֆռանկի բան.  
Փուրվառն էր անգին քար դրախտի նման,  
Ղարամ-օղլին տեսաւ զալ եանա եանա:

(Անարդ)

\*

\* \*

49. **Սէյրան-օղլի** (Սէյրանու որդի) իսկական անունը Սարգիս: Եղել է Աշըղ-Սէյրանու որդին. ածել է սանթուրի վրայ:

## Ե Ր Գ Ը.

Էշխ ու հաւաս ունիմ որ ժամը խօսամ,  
Վարպետից եմ առել դա այբ սէ.  
Տէր իմ մեղքս շատ է թողութիւն արա,  
Արժանացոյ առնեմ մեն այբ սէ:

Անցաւոր աշխարհքը մարդու կ'շահէ,  
Պատուիրան պահողը զաթի անահ է.  
Այլի մարդը պէտք է պատուիրան պահէ.  
Որ լինի Աստըծուս խէ այբ սէ:

Սէյրան-օղլի Սարգիս մեղացէն դառնա,  
Թէ բարութիւն գործէ չարութիւն մոռանայ.  
Վատէն թամամել է քօչը կ'բառնայ,  
Գերեզմանիս վերայ գիմ այբ սէ:

(Անպիպ)

\*

\* \*

50. **Սեֆիլ-գեօֆրարի** (խեղձ խօսուն) իսկական անունը Խաչատուր. ծնուել է Ալէքսանդրապոլի Ղազանչի գիւղում, սաղ ածող.

## Ե Ր Գ Ը.

Հինգ բարա ծաղիկ ես դու նազանի եար,  
Վանաչ կարմիր սիպտակ գիւղեազ ալի հեւ.  
Անուշաֆոտ վարդ ես դրախտի նուպար,  
Բլբուլ եմ շատ հասրաթ ես քու տալի հեւ:

Ծոցումդ պահել ես էրկու անգին բար,  
 Բարակ մեջքիդ ինչ կ'սազի կապես եար.  
 էրկու տուտն ալմաստով մարգարտեշար,  
 Զաւահիրով շարուած խառն լալի հետ:

Մինաղաշ քեամարդ դուռ չամ չրաղով,  
 Զառ զարբար մունթանէդ ոսկէ վարաղով.  
 Ղօշա չարղաթ քցի գլխիդ նաւրաղով,  
 Գիւուազը գիւուազի, ալը ալի հետ:

Յուշըդ միտքդ խելքդ քեամալի բիթուն,  
 էս Սեֆիլ-Գէօֆթարի ասածն ես դուն  
 Մարգարտով շարուած ծամերդ ա ոյղուն,  
 Միպտակ բոխաղ կարմիր թուշդ խալի հետ:

«Հանդէս գրական. եւ պատմ.» գիրք դ.

\*

\* \*

51. **Քեամալի** ա ) (խելօք շնորհքով) սրա մասին չ'կարողացանք կենսագրական տեղեկութիւններ հաւաքել:

Քեամալին ունեցել է և տպած երգարան, բայց չ'կարողացանք գտնել որ գոնէ նրա երգերից մինը այստեղ առաջ բերէինք:

\*

\* \*

52. **Աբէլ-օղլի** (Աբէլի որդի): Եղել է Ալեքսանդրապոլի մեծ-Քեթի գիւղից, բայց թէ երբ է եղել մեզ յայտնի չէ: Ածել է սազի վրայ: Առաջ ենք բերում Աբէլ-օղլու մի երգը, որ ինչպէս լսել ենք ասել է աշուղների հետ մրցելու ժամանակ:

## Ե Ր Գ Ը.

Զօշ եմ տալի տալղա տալղա քուռ եմ առաջէս փախի,  
 Կարծիք չանես սախլա սախլա. ջուր եմ առաջէս փախի.  
 Հէնց կարծում ես սիլահ չունեմ մերկ առաջիդ կանգնած եմ  
 Շապկիս տակին զոխեր ունեմ, հուր եմ առաջէս փախի:

Մէկ պողանի քեարկատան եմ հասածի պէս սոչում եմ  
 Շատ աշուղներ իմ ձեռքիցս անկեալլամիշ վռչում եմ.  
 Քեաքեալ քեռքեազ երկնքումը ման եմ դալի թռչում եմ,  
 Այնազումս դիփմիշ կանեմ ուրտի ես ուրա փախի:

Արէլ-օղլին դիւռղ եմ դալի էս դիւռղերին դիմացի,  
 Նախավկայ Ստեփանի ճնունդն էլ իմացի.

Թէ բան չիտես սազդ տուր ինձ ըստեղ նստի ու լացի.

Ձեռք մի քցէ փանչայ ունեմ, թուր եմ առաջես փախի:

(անսխիտ)

\* \* \*

53. Քիւղիք-օղան. (կարծ տղայ) սրա մասին չ' կարողա-  
 ցանք ոչ մի բան իմանալ՝ ոչ իսկական անունը ոչ որտեղացի լի-  
 նելը:

## Ե Ր Գ Ը.

Տեսէք ինչ բարկութիւն է Աստուածանից կամով քաղաքիս  
 Ուղիղ սրտով խնդրեցէք կու փրկէ զամով քաղաքիս,  
 Զանազան հարարտութիւն յայտնի է բանով քաղաքիս.  
 Մեղքն վարձքին յաղթել է մէ զորեղ ջանով քաղաքիս,  
 Զորս կողմն թափոր տալով, բօմահ է զամով քաղաքիս:

Արդարներ դուք մօտ ելէք Աստուածէմէն սէր ուղեցէք,  
 Փառք տուէք աղօթք արէք, քաղաքի համար խէր ուղեցէք:

Մեռնողներին հետաք չ'կայ՝ կենդաններուն տէր ուղեցէք.  
Քուր ու ախպեր հաւատացէք հալալ սրտով մէր ուղեցէք,  
Ուր է էն զովզու սաֆէն էլ չ'կայ դամով քաղաքիս:

Նաչարա դարիպ տեղն դարտիս համար հաղ եմ ասում,  
Չեմ գիտում ո՞վ է մեռել, ով կենդանի սաղ եմ ասում,  
Մոլորուած քաղքի բանն սրտիս մէջն դաղ եմ ասում,  
Կարօտ եմ ճամբորդէմէն ոնց մի խապար տաղ եմ ասում,  
Քիւչիկ-օղլանը ազատես քեաշքի էս դամով քաղաքիս:

«Նոր հար»

Ոսկ. Տէր-Յովհան. կռճ. 4 տ:

\*  
\* \* \*

54. **Քեչիչ-նովասի.** (քահանայի սերունդ) սրա մասին  
ոչ մի կենսագրական տեղեկութիւններ չ'կարողացանք ժողովել:

### Ե Ր Գ Ը.

Մատաղ էրթամ քու ջաւահիր արևուդ.  
Մէհյանն անեմ հալբաթ գիմ այք սէ.  
Թէպէտ խեղճ եմ՝ լայրղ արա նազանի,  
Մեր սուֆրումն խմիր մի թօ այք սէ:

Արևս խաւարի աստղոս թոթափի,  
Քար ու թոփը յետ դայ սարեր սարսափի.  
Կենդան թաղի վրէս պատան չի չափի,  
Թէք դուն չանես ինձ հետ պէ այք սէ:

Մակեար դու ինսանիս սիրտդ քար ունիս,  
Կնճնից ջոկ էլի շատ սիրական ունիս.  
Ասա դու իմ աղան չե՞ս դու իմ սրարոն չե՞ս,  
Բարովն Աստծու է տիւն այք սէ:

Իմ ու բոլ գիւանք մեր ստեղծողն անի,  
 Ասիր բոլ ջալլաթիդ ինձ թաք չ'սպաննի.  
 Ուսմամբ քրիստոնեայ եմ անհաղորդ ջանի,  
 Խոստովանիմ առնիմ մեն այք սէ:

Չեռնէդ հարայ կանչեմ սուլթան ու խանի  
 Խղձմտանք արա իմ խեղճ քամբախտ ջանի.  
 Քեշիշ-նովասին երբ բարով վաղձանի,  
 Գաս վրէն կսկըծիս լիւն ու այք ու սէ:

«Սոխաչ» գ. երես 133.

55. **Եղբայր-Նաղաշով** <sup>Հոյսի ք. 133</sup>  
~~(Ազամ Նաղաշովի կամ Նեպկար  
 արեանց. եղբ է գարարաղցի, ածել է սազի վայ):~~

### Ե Ր Գ Ը.

Յորժամ եղև գարուն արև ծաղեցաւ

Հարաւ հողմն հնչեց սառն հալեցաւ,

Երկիր կանաչեցաւ ծառն ծաղկեցաւ,

Խմենք եղբայրք գինի մեզ անուշ լինի.

Ածէք խմենք գինի բանն Աստուած շինի:

Ով եղբայրք նստել էք ծաղկեալ ծառի տակ,

Չեռներիդ է գինին կարմիր ու յստակ,

Թասի մէջ անկանի ծաղիկ սպիտակ,

Խմենք եղբայրք գինի մեզ անուշ լինի,

Ածէք խմենք գինի, բանն Աստուած շինի:

Առէք կարմիր գինին և լըրէք շուտով,

Բերէք թազա դառն սինի սարսիուշով.

Ղարու փլաւ ձգէք մեխակով նշով

Խմենք եղբայրք զինի մեզ անոյշ լինի,  
 Աճէք խմենք զինի բանն Աստուած շինի:

Գնա լաց քո մեղքը Նաղաշով-Աղամ.  
 Աշխարհքս անցաւոր է չի մնացական.

Իուք կերէցէք խմեցէք եղբայրք սիրական,  
 Եւ օրհնեցէք զԱստուած այժմ և յաւիտեան:

«Քնար Հայկական» կոճ. 4 տ.

\*

\* \*

56. **Նեազմի.** (խօսքի տէր) իսկական անունը Սիմէոն. եղել է էրզրումցի, զխտեցել է ածել թէ 'ջութակի և թէ սաղի վրայ: Սրա մասին աւելի բան չ'կարողացանք հաւաքել, բացի մի երգից, որ արտատպել ենք այստեղ:

### Ե Ր Գ Ը.

Փողի հետ խելք էլ պիտի ինչպէս սորան մին զարդարանք  
 Թէ ոչ դու չես ստանալ, ոչ խելօք ոչ հարուստ անուանք.  
 Ամեն մի ծառ բարձրանալով պտուղն ծիրան չի լինիլ,  
 Ամեն այբ ու բնն զխտեցող, մարգարէ Յովհանն չի լինիլ:

Իշին թէ տալու լինիս քաղաքական մեծ կրթութիւն,  
 Միշտ կու մնայ չորս ոսնանի բանական ինսան չի լինիլ.  
 Ազոաւին որ զարդարես դու գոյնզգոյն փետուրներով,  
 Այն փոքրիկ անուշաերգ սոխակի նման չի լինիլ:

Բէյանի պատկերն թէ թղթի վրայ լաւ նկարես,  
 Նմանը ըէյհան կ'լինի, ինքը ըէյհան չի լինիլ.  
 Բեադասը մարդուն եթէ արքայական թախտ պարզես,  
 Քան զՍողոմոն արքայն աւելի նրան դու յարզես սիրես.  
 Անօգուտ է եթէ կեանքդ էլ զոհ մատուցանէս,



Նէաղմի բեզ պէս յօգուտ ազգի, պատրաստ պատասխան չի լինիր:

«Սոխաչ» դ. կր. 13.



57. **Քեչիչ-օղի.** (քահանայի որդի) խակական անունը

Մկրտիչ. եղել է թիֆլիսեցի և կոյր է եղել:

### Ե Ր Գ Ը.

Ախ իմ Տէրս իմ Տէրս Քեզ չեն տեսնում աչքերս  
Մոլորուել է մտքերս, սև են դառել օրերս,  
Քեզ յայտնի է ցաւերս ախ իմ Տէրս իմ Տէրս:


Տէր խնդրում եմ մեզ խրատես, մեր սէրն չի անջատես,  
Մեզ հաւատով հաստատես. պարսիկներից ազատես,  
Իմ Հայաստան ազգերիս, ախ իմ Տէրս իմ Տէրս:

Տէր Դու ես իմ դատողս իմ բարի կամեցողս  
Քեզ խնդրեմ Ստեղծողս հասցնես պտուղներս  
Մի չորանայ դաշտերս ախ իմ Տէրս իմ Տէրս:

Եստ ունինք մեզ թշնամի, Տէր Հայոց բարին կամի  
Ամեն յունուար ամիսի վախենում եմ թարշամի  
Ծաղիկներս վարդերս ախ իմ Տէրս իմ Տէրս:

Տէր Դու ես մեզ Դատաւոր ամենքս Քեզ պարտաւոր.  
Ով իմ Յիսուս թագաւոր, Քեչիչ-օղին մեղաւոր.  
Դու ջնջիր իմ մեղքերս, ախ իմ Տէրս, իմ Տէրս:

«Սոխաչ» դ. կր. 29.



58. Մուրաւն. ա. (տէր, իշխան, արքայ) ոչ իսկական անունն է յայտնի և ոչ էլ ով լինելը. դեռ կարծիք էլ կայ որ աշուղ չ'լինի:

## Ե Ր Գ Ը.

Ասա հողիս զի՞նչ առ քեզ մեղանչեցի,  
Արիւն չարի մէկ սէրդ թախանձեցի.

Ես քո սիրոյդ կարօտ եմ քո սիրածն եմ,  
Ես քո ցաւդ առնուլն եմ քո մեռածն եմ.  
Ես քո զլխիդ մատաղն եմ քո զոհածն եմ,  
Ես քո դանքուր զաւիցդ հողով կախուածն եմ:

Արի ման տամ զլսովդ յարածամ փարուանի պէս  
կրեսս փէյանդաղ տամ դու կոխկրտիր խանի պէս,  
Տես իմ հալս խնամք տար էտքան անգութ մի լինիր:

Ափսոս արի բեր 'ի միտ անցեալ սէրդ,  
Միտք արա տես քանի՞ տարուայ դարտերդ.  
Քեզի չի վայելել մի կտրիր էյթիպարդ,  
Ջի դառն է ինձ մահից մի վատ խաբարդ:

Արի համով նազ արա Սուլթանիդ համսազ արա,  
Դիր սիրտդ սրտիս վերայ, թառլանի փարուազ արա,  
Ես զաբալով զուլ դառնամ, դու առ ժլատ մի լինիր:  
«Նոր քնար» Ոսէ. Տէր-Յովհանն. կռճ. 12 տ.

59. Մաշեադ-օղրան. (որսորդի տղայ) սրա մասին ոչ մի բան մեզ յայտնի չէ:

Ե Ր Գ Ը.

Ո՛վ աշխարհ եարար քեզնէն շնորհակալ մարդ կ'լինի,  
 Չեմ կարծում որովհետև ամենումն էլ դարդ կ'լինի.  
 Եթէ մարդ փոքր միջոց մտօքն հանդարդ կ'լինի,  
 Սրտովն կուրախանայ մարմնովն զուարդ կ'լինի,  
 Շուտ կուղարկես հոգսերն կ'գայ հետն շարթ կ'լինի.  
 Խեղճ մարդուն ուրախ սիրտն մին թառամած վարդ կ'լինի,  
 Ամենեցուն պատճառն չարութեան հ'նարլդ կ'լինի:

Ո՛վ եղբարք գիտեմ այժմ դուք ինձի դատաստան կանէք  
 Կասէք թէ ո՞վ է արդեօք երջանիկն կ'հարցնէք.  
 Փառք կ'տաք միշտ Աստուծոյ թէ փոքր բաւական էք.  
 Աշխարհից չէք դանդատիլ ընկերներիդ օգնական էք.  
 Մարմնաւոր նեղութիւնն համբերութեամբ կ'տանէք,  
 Աստուած իմ Սայադ. օղլուն թէ յանցանքն չի հարցնէք.  
 Հարիրից մինն պակաս, մոլորեալ ոչխարլդ կ'լինի:

«Սոխակ» գ. երես 134.

\* \* \*

60. **Զարկեար.** (ոսկերիչ) իսկական անունը Աբրահամ.  
 եղել է շամախեցի. Զարկեարը նշանաւոր աշուղներից մինն է եղել.  
 վերջերս սրա բանաստեղծութիւնները առանձին գրքով հրատակ-  
 ուեց Բազում «Զարկեարի բնարը» վերնագրով:

Ե Ր Գ Ը.

Սէր քեզանից զահլէս գնաց խնդրում եմ ինձ մօտ չի մնաս  
 Մատաղ կ'լինիմ ես այն օրին, ըռատ իլնես կորչես գնաս.  
 Միթէ քեզի խղճմտանք չունիս, քանի՞ մին տաս ինձի վնաս,  
 Է՞ր չես ուզում յիմարի մօտ մնաս նորանից լիանաս  
 Կարողութիւնս հատուել ա եթէ կամիս լաւն իմանաս,

Թէպէտ շատ տարուայ ծանօթ ես, բայց էս մասին չի նեղանաս:

Հաւատիր անկեղծ եմ ասում ձեռիցդ իլել եմ բեզար,  
Աներես աղքատի նման որ դուռն հասար փայ ուղար,  
Որտեղ մեղրի կճուճ տեսար երեւակայութեամբ լզար,  
Քո երեսիդ թուք տեսնալդ ես հարիւր ասեմ դու հազար,  
Մինչի այժմս ինձ խաբէլով չալացած միրուքս խուզար  
Ժամանակս անց ա կացել ուզում եմ պահեմ ծում ու պաս:

Զարկեար բեզի չին հաւատիլ մինչև չ'մեռնիս ու լողանաս,  
Կաթի մտած բնութիւնից հնար չկայ որ նեղանաս,  
Ում գլուխն ես բարձի դնում, ժամանակ ճարես և դողանաս,  
Ծուռ շրջես բոլոր աշխարհն Մայիֆի մօտ չ'կաղանաս,  
Այսքան տարի ինչ չաղացար այսուհետեւ ինչ չաղանաս,  
Հաւկթի համն դիփ մէկ է եթէ կոտրես մէջն բանաս:

«Սոխակ» դ եր. 217!

\*

\* \*

61. **Շամ չի-բարե.** (Շամցի կամ դամասկոսցի) իսկական  
անունը Յովակիմ. որ թուին է եղել և որտեղացի յայտնի չէ:

Ե Ր Գ Ը.

Գիշեր ցերեկ անդադար խնդրեցի Աստուածանից,  
էս անիրաւ խմիչքը ձեռք վեր առնի ինձանից.  
Դրան գործ ածելուցս դիտար չունիմ իմ տանից,  
Որ ընկում էր գլուխս ետ էր գցում իմ բանից,  
Ինձ տեսնողն ասում էր կորի դնա պիանից:

Մէկ օր հարբած գնալիս ցեխի մէջը թաղուեցի,  
Ոտիցս մինչև գլուխ լաւ կարգին շաղաղուեցի.  
Նաուաշ ևաուաշ գնացի ծովումն ողողուեցի,  
Փոքր որ օյաղացայ միտք արի սարսաղուեցի.

Միթէ ձեռ եմ վեր առել իմ զարիպ ջիւան ջանից:

Շամչի-բալէն ստացաւ Տէրիցն համբերութիւն.

Այսուհետեւ չի անիլ նա խմիչքի սէրութիւն.

Որ գոյանում է էն բանից ամէն տեսակ չարութիւն,

Կամենում է աշխատել իւր մեղացն թողութիւն.

Որով զրկուած չ'մնար երկնային օթեանից.

«Սոխակ» գ. երես. 59.

\*

\* \*

62. Քունքար-նաւե. պ. (համրի սերունդ) սրա մասին ոչ մի տեղեկութիւն չեն հասել մեզ. յայտնի է թէ որտեղացի է եղել և որ թուականին:

Ե Ր Գ Ը.

Ես եմ աշխարհումս անպիտան յիմար,

Չուն որ ճշմարտութիւն չունիմ իմ ձեռիս.

Ընկամ էս օրիս:

Ի՞նչպէս խոստովանիմ ես սրուս ասեմ,

Չունիմ մի քրիստոնեայ հասնի հաւարիս,

Նստի իմ վայիս:

Վայ ինձ աշխարհումս մնացել եմ յիմար,

Աստուծոյ պատուիրանքից ես եմ բէխարար.

Ես ի՞նչպէս գտնեմ մի դուզ ճանապարհ,

Պարտելով ռաստ չի գալիս աչքիս,

Կորաւ իմ հոգիս:

Հոգիս կորաւ մարմինս էլ ինչի՞ տէր ա,

Այլ մարդոյ վրէն աւելի բեռ ա.

Քունքար-նաւէն չունքի միշտ էլ անտէր ա,

Խնդրում եմ Տէր Աստուած առնես իմ հոգիս:

Չուն որ ես եմ փիս:

«Առիսի» դ. եր. 72.

\*  
\* \*

63. **Զաքի.** (Զաքարիա) սրա մասին կենսագրական տեղեկութիւններ չեն հասել մեզ. բայց ինչպէս երևում է սա գրել է միշտ Թուրքերէն:

### Ե Ր Գ Ը.

Պէան պիր պաղա պաղպան օլտրմ աղալար,  
Եարմ կէյմիշ տալըոյնա սարասար.

Պէան սէարըմի եար եօլնա ղոյմիշամ,

Նէճա՞ ղոյմիշ Ծահրատ-Նիրին սարասար:

Էյի սուտր էյ դարիա չիմանա,

Այուանձի չակլարն բիր մեշչի մանա.

Պունտա պիր օզկեայ խէր օլմաղ չի մանա,

Հէր սահարն պատի ղոնար սարասար:

Աշըղ-Զաքէ պու դունեատա ջաք էտար,

Նէճա՞սի վար եար էշիննա ջաք էտար:

Բախուպն նայհատտի վար ջաք էտար,

Զիլիֆ եարն գերտանտան սարասար:

(անպիս)

\*  
\* \*

64. **Թեքմիլի.** ա. (կատարեալ անթերի) իսկական անու-  
նը և որ թուականին լինելը յայտնի չէ. միայն եղել է Ալէքսան-  
դրապոլի Բայինդուր գիւղից:

## Ե Ր Գ Ը.

Ասի դիլպար ուրախից կու գաս,  
 Ասաւ՝ արտը հաց եմ տարել.  
 Ասի եակսիդ էդ դիքմէքը,  
 Ասաւ՝ խմ ձեռքով եմ շարել:

Ասի անուշ ես թէ դառն ես,  
 Ասաւ՝ հերիք խօսքդ խառնես.  
 Ասի ինձի եար կը բռնե՞ս,  
 Ասաւ՝ քեզմէն լաւն եմ ձարել:

Ասի դիլպար խօսքդ ինձ եար է,  
 Ասաւ՝ քեզ չառնելս աշքեար է.  
 Ասի Թէքմիլը սաւտաքեար է,  
 Ասաւ՝ թէ պատանքն եմ կարել.

(անտիպ)

\*  
\* \*

65. **Ջեյհունի** պ. (այն գետի անունն է որ բաժանում է Իրանը և Թուրանը) Եղել է Մեծ-Քեափանակ գիւղից, (Ալէքսանդրապոլի գաւառ) և կոյր է եղել:

## Ե Ր Գ Ը.

Յէսօր մէկ դիլպարմ տեսայ զիլիֆները օլրած էր,  
 Բարև տուի բարև չառաւ մակեար ինձնէն խռոված էր.  
 Նա հաղել էր ալի նման սիպտակ բոխախ խալի նման,  
 Տասնըհինգի լուսնի նման էրէսները բլորած էր:

Ունքեր ունէր կամար կամար, բարակ մեջքը ոսկէ քեամար.

Ջէյհունը կերուի նրա համար, խէլքը գլխէն մոլորած էր:  
(Անտիպ)

\*

\* \*

66. **Հագգողի:** (Լէգգու որդի) եղել է Սլէքսանդրապոլի  
Մեջիտի գիւղից: Աճել է սաղի վրայ:

Ե Ր Գ Ը.

Արի նստինք մէջլիսումը,  
Գու ես մուշտայ խաղի դիլպար,  
Մէկ ես ասեմ մէկ դուն ասա.  
Մէջլիսումդ չաղի դիլպար:

Քեզի հետ ունիմ շատ հաւասր,  
Հագել ես ատլասն ու խասր,  
Ձեռդ ես առէ ոսկի թասր,  
Մէջլիսումդ սաղի դիլպար:

Հագգողին եմ վայ անումս,  
Խելքս գլխիցս տանում ես.  
Թէ որ ինձի սպանում ես,  
Քու ձեռքովդ թաղի դիլբար:

(Անտիպ)

\*

\* \*

67. **Բարաջան** (անուն է) Յայտնի չէ որտեղացի և որ  
Թուականին լինելը, բայց կոյր է եղել և սաղ ածող:



## Ե Ր Գ Ը.

Չունքի որ մեռնել կայ մեզի,  
 Սիրուններու խաչն ի՞նչ կանեմ.  
 Չեմ էզնիլ բէկզատա ու բէկ,  
 Վրէս քաշած սաչն ի՞նչ կանեմ:

Եղբայրք աշէք սրտիս ցաւը,  
 Սիրեցի սուֆրէն ու գաւը.  
 Ինձ պէտք ա հինգ գազ կտաւը,  
 Եշիլ զարբապ շաչն ի՞նչ կանեմ:

Դրախտ գնաց աղքատ Նազար,  
 Յոբի դարդն եղաւ հազար.  
 Քեզ օրինակ Յիսուս Նազար,  
 Էս աշխարհի մաչն ի՞նչ կանեմ:

Բարաջանն եմ էս իմ չարէն,  
 Եղբարք աշէք սրտիս եարէն.  
 Մերկ էմ էրթում էս աշխարհէն,  
 Խասն ու զումաշ աչն ի՞նչ կանեմ:

(Ա. Կարսի)

\*

\* \*

68. **Զարարար** (լուսաւոր) Եղել է էրզրումցի. ածել է ջութակի վրայ. սրա երգերը մեծ մասամբ Թուրքերէն են. առաջ ենք բերում Հայերէնը:

## Ե Ր Գ Ը.

Ծոցիդ մէջն երկու գիւլ-ջան բացուել է,  
 Բէյուդար պիտի տայ բէ այբ լի.  
 Սիրոյդ գիրֆաար եմ կերիմ կանցնիմ կը

Սրտիս մէջը վառուի կը նու այբ ըէ:

Աշըգը սրտին մէջ զամէր կ'ըմնայ  
Իրա սրեկանն ինչպէս կ' մոռնայ.  
Գիտեմ որ իմ եարս խօսքէն չի դառնայ,  
Աստըծ ու աչքերէն գնկնի վէ այբ ըէ:

Էս աշխարհը չունիմ քեզ պէս պատուական,  
Առգնին մարգրիտ յունտիկ բերան.  
Կարօտ ունիմ եարիս ես էնիմ մէյման,  
Ռահմ անէր մէրն գիմ այբ ըէ:

Ինձիմէն հէջ չէլէր քու կրակդ էդ,  
Կեւնայ իմ սէրս խօ չես քար ու փէտ.  
Սեֆիլ Ջալալաթն եմ մէռնիմ կը վրէդ,  
Եարս խումար աչքներով լուն այբ ըէ:

(անտիպ)

\*

\*

\*

69. Դեարկեսահի: (դուռ մուտք) սրա մասին ոչ մի բան  
յայտնի չէ:

\*

\*

\*

70. Տաշչի-գադի: (քարտաշի որդի) եղել է մշեցի: Սրա  
մասին կենսագրական տեղեկութիւններ չենք կարողացել գտնել:

Ե Ր Գ Ը.

Քեզանից հարցնեմ վարպետ իմաստուն,  
Ո՛վ եղաւ աշակերտ Սուրբ Կորապետին.  
Հայրն էր Ջաքարիա պապանճուաւ լեզուն,

Մայրն էր Եղիսաբէթ Սուրբ Կարապետին:

Չորս բոլոր բաղան էր մէջը կանաչ է,

Քիւմբէթներու գլուխներ ոսկի խաչ է.

Տասներկու խաչապաշտ դուռդ կ'աղաչէ,

էն Մշու Սուլթանն էր Սուրբ Կարապետին:

Գիշեր ցերեկ ոսկի կանթեղներ վառ ա,

Փակուած դռներ բացուաւ իմ մուրազն առա.

Դարալի Տաշչի-Չադէն գրուաւ Քեզ ծառա,

Յիսուսի կնքայհայր Սուրբ Կարապետին. . .

(անպիտ)

\*  
\* \* \*

71. **Նաղաշ-Յովնարան:** ա. (կարճիկ Յովնաթան)

յայտնի չէ թէ որտեղացի և որ թուականին է եղել: Ունեցել է շատ հայերեն երգեր:

**Ե Ր Գ Ը.**

Ուստի կուգաս քաղցր բիւլբիւլ,

Քեզի բարև ևս քեզի դուլ.

Կիզուդ շաքար սազդ սումբուլ,

Քաղցր լեզուովդ ջուր տուր ինձի:

Վասմդ կասեն շատ աննման,

Քեզմէ զատ ել չունիմ գիւման.

Նս ինչ կանեմ հազար թիւման,

Նրբ դու եար կու լինիս ինձի:

Նաշխուն երես բոլոր սուրաթ,

Մնացել եմ հեյրան ու մաթ.

Ռահմ արա էյ բէմուրուաթ.  
Քանի՞ քարէքար տաս ինձի:

Առաւօտուց բացուել վարդն,  
Դու ես գեօղալներու վարդն.  
Կրակիդ մէջ ընկող մարդն,  
Այլ մեղադիր չ'եղնիր ինձի:

Թուխ ծամ ունիս ղալամ ղաշ ես,  
Ինչ որ հագնիս բարով մաշես.  
Ծով աչքերովդ դամաքաշես,  
Սուր դանակով կու տաս ինձի:

Ատամներիդ սատաֆ ինձի,  
Ծոցդ պաղչայ է թուրընձի.  
Ես էղայ սեֆիլ զարընձի,  
Էլ ի՞նչ խելք կու մնայ ինձի:

Նաղա՛շ կասեն խիստ բեչարա,  
Եկ ինձ մի անիր աջարա.  
Այս չափ բաներս բեզ համար ա,  
Այլ դու երբ կու խղձաս ինձի:

(անսխալ)

\*  
\* \* \*

✓ 72. **Շուքրի.** (չնորհակալիք գոհութիւն) իսկական անու-  
նը Աւետիք. եղել է Տաճկաստանի Տրապիզոն քաղաքից: Շուքրին  
երգել է Թուրքերէն և ածել է սաղի վրայ. սա կոյր էր:

Ե Ր Գ Ը.

Պախտան դիլարմ եար պէնէ մէհման օլա պիր գիւն,  
Մէհման օլատա դարդմա դարման օլա պիր գիւն.

Պաղպանա վարտում գիւլ դիւլատմ վերմատի պիւր գիւլ  
 Գիւն օլաբի գիւլ դիւլնտա խարման օլա պիւր գիւն,  
 Աշխէ մարն չաբտիճաբի աշխրն ուճոււնտան.  
 Եանտի դիւլ բիշտի ջիկեար պիւր եանի՛օլա պիւր գիւն:

(անպիտ.)



73. **Զուլալ-օղի** (մաբուրի որդի) Եղել է Ալէքսանդրապոլի  
 Աւդուբէկ գիւղից: Այս երգը հանելուկ է:

Ե Ր Գ Ը.

Այսօր ես մէկ բանմ տեսայ վերնադասէն կախ չունէր,  
 Ուտել խմել հազնելու մէջ, պակասութեան ան չունէր.  
 Տիւ և գիշեր դուրսը կապրէր հէր ու մէր չը ճանաչէր,  
 Առանց թէպուլ թեաւոր էր մարդկանց մօտէն փախ չունէր:

Հէրն ու մէրը հողեղէն չէր խմացիր եթեր ծնած,  
 Ամեն տարի կ'թաժանայ առանց հողի ստեղծուած,  
 Զուլալ-օղին իւր միւհամէն էս անունը կար գրած,  
 Երկինք գետին բաժանուած էր խօսակցութեան լախ չունէր:  
 (անպիտ.)



74. **Միման-օղի**: (գեղարդի որդի) յայտնի չէ թէ որտե-  
 ղացի և որ թուականին է եղել. ածել է սաղի վրայ:

Ե Ր Գ Ը.

Արարոց աշխարհը մեր Տէրը շինեց,  
 Ամենքը մի բանով գեշնմիշ գլլին.

Գաբրիէլական փողը որ Տէրը փչեց,  
Արդարն ու մեղաւորը սէշնմիշ գլլին:

Ղոմշի զամազ մարդու երեսը սև է,  
Բանական սուտ ասող մարդկային դև է.  
Քիւֆիւր յիշուց տուողը խելքէն թեթև է,  
Գժողբը տեղեցը տաշընմիշ գլլի:

(անորից)

\*  
\* \*

75. \*) **Մէյրանի:** ա. (գբոսանք զուարճու թիւն) թիֆլիսեցի.  
ածել է սազի վրայ:

76. **Դեմիրչի-օղլի** (դարբնի որդի) Յովակիմ:

77. **Աղձօ:** Աղաջան. ախալքալակեցի ածել է սազի վրայ:

78. **Իխրարի:** (խոստովանող) Աւետիս. Երզրու մի Աարա-  
հան գիւղից. ածել է սազի վրայ:

79. **Բումանի:** Յունաստանցի. Հաճի-Ղազար:

80. **Սուրանի.** պ. (երկայնավիզ) Յովհաննէս. Տաճկաս-  
տանի Բաբերդ քաղաքից. ջութակ է ածել:

81. **Նառնիս** Սամուէլ. Հասան-Ղալեցի. ջութակ է ածել:

82. **Քեամքարի.** (տկար թոյլ) իսկական անունը Ղազար.  
Տաճկաստանի Գիւմիշխանից ածել է ջուհուր:

\*) Հետևեալ աշուղներն ոչ երգը և ոչ կենսագրութիւնը չեն  
հասել մեզ:

83. **Շաքիրի:** ա. (գոհացնող). իսկական անունը Ղազար: Բուրսացի ածել է սազ, երգել է միշտ թուրքերէն:

84. **Նիկեանի:** պ. (հայացք) իսկական անունը Գրիգոր: ածել է սազի վրայ:

85. **Փասանդի** (հաւանած) անունը Մարտիրոս. սուսացի. ածել է սազի վրայ:

86. **Հազր-օղան** կամ Հազիրի իսկական անունը Աբրահամ. Թիֆլիսի (Նուրաբեր գիւղից: Ածել է սազի վրայ:

87. **Բամգի** (ծածուկ) իսկական անունը Յարութիւն. սընուսացի:

88. **Նաթրի** ա. (խօսուն) իսկական անունը Նիթար. ածել է սանթուրի վրայ. ախալցխացի:

89. **Լարչի** (գողացող) իսկական անունը Համբարձում. կողբեցի: Նղել է կոյր և ածել է սազի վրայ:

90. **Խրիտոսար** պ: (մուշտէլի այցելու) ածել է սազի վրայ:

91. **Մաւճուրի** կամ Նտիկեար-օղլի. եղել է Թիֆլիսի Գուշէթ գիւղից. ածել է սազի վրայ:

92. **Նիջումի** ա. (աստղ կենդանակերպ) իսկական անունը Յակովբ, Հաճի-Վեղի:

93. **Ղասար-օղլի** (մտազործի ուղի) իսկական անունը Ալէքսանդր. Քեաֆագի. ածել է սազի վրայ:

94. **Սաֆֆի** ա. (գունդ ճակատամարտ) Կ. պոլսեցի:
95. **Թիֆի** (մանուկ նորածին) Կ. պոլսեցի:
96. **Վանի-Քոչար** վանեցի:
97. **Գիքոյ.**
98. **Բեկզարոե** (բէկի ուղի)
99. **Բեչարա** իսկական անունը Մկրտիչ:
100. **Լիսանի** Վույվույի-Մանչ. իսկական անունը Պաբրիէլ. ախլցխացի. ածել է սազի վրայ:
101. **Վաղարի** (առաջնորդ) ախալցխացի: *այդ Կոնյուսի.*
102. **Բադո-Առան-Վերոի** զանգեազուրցի:
103. **Նաջմի** (աստղի անուն է) իսկական անունը Նրիգոր. էրզուրումցի. ածել է սազի վրայ:
104. **Շիքեարի** (չնորհալի) Ալէքսանդրապոլի Մէջեղլի զիւղից. ածել է սազի վրայ:
105. **Մահչուբի** (պատանի) Բաղալ. կողբեցի. ածել է ջութակի և սազի վրայ:
106. **Եանդունի** (հրդէհ) իսկական անունը Յարութիւն. Ալէքսանդրապոլի մեծ-Քեափանակ զիւղից. ածել է սազի վրայ:
107. **Նարանդ-օղի** (պայտառի ուղի)



108. **Չախմախչի-եաղուք** (զինագործ Յակովբ:)
109. **Մեֆիղ-օղլան** ա. (թշուառ խելճ տղայ):
110. **Գիւրջի-օղլի** (վրացու որդի:)
111. **Քեօփաճի** (ժապաւէնագործ:)
112. **Նուրալի** ա (լուսացնող պայծառացնող):
113. **Նարինջ-օղլան** (շառագոյն տղայ:)
114. **Եաղուզ** (մինուճար):
115. **Արուքիւն Բեկում.**
116. **Սատղ** (անխարդախ մտերիմ) իսկական անունը Յակովբ. ալէքսանդրապոլցի. ածել է ջութակի և սաղի վրայ:
117. **Քիւմիյա** ա. (խորամանկ) վաղարշապատցի:
118. **Սարմաստլի Ղուլ-Արուքիւն** սալմաստցի:
119. **Լիսանի** (լեզուագէտ) սրա մասին ոչ մի բան յայտնի չէ: Երզնկանցի է եղել, ածել է ջութակի (3 թել) վրայ:
120. **Լեօն**

\*) Թէև սրա մասին ճիշտ տեղեկութիւններ չեն հասել մեզ, բայց ասում են թէ սա միշտ երգել է ջերմ կրօնական. այնպէս որ սրա մեռնելուց չետոյ, մուլի և նախապաշարեալ ժողովուրդը ուխտագնացութեան փորձեր են արել: Բայց չետոյ քահանայի դրդմամբ չետ են կանգնել: Մեռել է Սալմաստում:

121. **Նարգիզ**
122. **Քեօքաճի-օղան**
123. **Օհաննես**
124. **Յակովբ**
125. **Շոհրաշի** (լուսատու փայլուն) Ղազարի: Հայտարբէկ  
գիւղից. ածել է սազի վրայ:
126. **Զիւնանի-օղի**
127. **Ինճաշի** (ն. ւրբ բարակ) շուշաւերցի:
128. **Սողաք**
129. **Մէշի** սլ. (սէր ցանկութիւն) Սխալցիսայի Սպողոք գիւ-  
ղից. ածել է սազի վրայ:
130. **Սարգիս-օղի**
131. **Զրաղ** (աշակերտ):
132. **Ղազար-օղան.**
133. **Քեամալ-օղան**
134. **Սանամ-նովասի**
135. **Սեֆիլ-Պօղոս**

136. Սեֆիդ-Սիսակ

137. Ասատուր

138. Բերքի

139. Մապրիա

140. Բուդադի

141. Այվազ

142. Զուտանի (Հեռաւոր):

143. Ակեանի (Հասկացող):

144. Մարուարի (գլխաւոր) բուսացի:

145. Գեադանի (աղբատ) Արաւելիայի Ազգոր գիւղից. ածել է սագի վրայ:

146. Զանտի (ջանասէր) կոյր:

147. Զարպի (կտրուկ)

148. Մեթին գովուած

149. Քիւնձի-Յակովր

150. Փափի Ալէքսանդրապոլու Նիւղբեանդ գիւղից:

151. Սիսաչի Ղազար. Ախրքարակու Կարճախ գիւղից:

*Handwritten notes in Armenian script:*  
{ ճակի գովուած  
Տիւրքացի իր քան (Կոյր)

152. Մատաշի

153. Մոշադի

154. Մաթի

155. Ղազար [Թէյրանցի. Մայիֆի հայրն էր:

Արեւելեան ըսած Հայ ռամահական երգիչք  
կամ վիպասանք նոր ատեններս աւելի չաչտ-  
նուեցան կամ հռչակուեցան և ոմանց եր-  
գերն այլ հաւաքուելով տպագրուեցան՝ ի բա-  
նասիրաց Ռուսա-Հայոց, այս վիպասանք ան-  
ցեալ կամ ներկայ դարուս մէջ ծաղկած են  
և աւելի համբաւաւորք են—

«Յոշիէ հայրենայ Հայոց» բ. գիրք  
երես 123. Ղևոնդ Վ. Ալիշան:

### ԲՈՒՆ ԶՈՒՂԱՅԵՑԻՔ.

156. Էգազ

157. Արզունի

158. Բազեր-օղի

159. Ղոշ-Սարգիս (Շիրիշ-կանցի):

160. Ամիր-օղի

161. Վանվան

162. <sup>2</sup>Խոչ-Յովհաննէս

163. Պետրոս ջուղայեցի

1400 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

164. Խաչատուր կեղտեցի

165. Կոստանդին երզնկացի:

166. Միւսա գերջանցի:

1500 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

167. Ամիր-մուսէ Նաղաշ

168. Արթուր (Գրիգոր)

169. Յովասափ սերաստացի:

1600 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

170. Միւսա եւրոկիացի:

171. Մարտիրոս դարաճիսարցի:

172. Եօնուզ

173. Ներսէս-բեխտ մոկացի:

174. Մկրտիչ տարօնեցի:

175. **Թադեոս** սեբաստացի:
176. **Քուչակ** հասկըուանցի:
177. **Սպանդիար**
178. **Ասապով**
179. **Ազարիա**
180. **Զաքարիա** ազուլեցի:
181. **Խաչիկ** կաֆացի:
182. **Ղազար** (կոյր):
183. **Մելքոն**
184. **Մուրատ** Խիկար:
185. **Ներսէս**
186. **Շամս**
187. **Քերովրէ**
188. **Քորան** կամ Քոթնա Խլաթեցի:

### 1700 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

189. **Ասար** սեբաստացի:

190. Արիստակես Վարբերդցի:
191. Խաչատուր բաղիշեցի կամ ջուղայեցի:
192. Սուքիաս
193. Ստեփաննոս Թոխաթցի:
194. Երեմիա Չելեպի Ֆեոմուրճեան:
195. Ստեփաննոս շատախցի:
196. Տատուր էրզրումցի:
197. Դաւիթ սալախորեցի:

1800 Թուականներին, ինչպէս ասում է հայր Ալիշանը գրոց լեզուն աւելի մշակուելով ռամկական երգիչք այլ նուագեցան:

\*  
\* \* \*

198. Հաւես ✓ պ. (իղձ փափագ) իսկական անունը Թաթէոս. ✓  
 ծնունդ է 1830 Թուականին Ալէքսանդրապոլում: Սրա հայրը կտաւագործ Յովհաննէսը փոքրիկ Թաթէոսին տալիս է կարգալու-  
 երբ փոքր ինչ կարգալ է սովորում, սկսում է իւր ժամանակը  
 երգելով անցկացնել. մի ժամանակ էլ գրքերը ձեռքն առած փողոց-  
 ներում ման գալով գրավաճառութիւն է արել: Մի քանի տարուց  
 յետոյ Ալէքսանդրապոլում բաւականութիւն չգտնելով գնում է  
 Տաճկաստանի մայրաքաղաքները իւր փափագը լրացնելու նպա-  
 տակով: Աերջապէս մի քանի տարուց յետոյ Պոլիս և Զմիւռնիա  
 մնալուց յետոյ, վերադառնում է Վարին և բաւականին ժամանակ  
 մնում է այնտեղ: Սա սկզբում երգելիս է եղել Արարական բար-

բառով խառն ճաճկերէն երգեր. բայց յետոյ սկսել է երգել և շատ Հայերէն երգեր: Հաւէսին չ'զիտէ իւր երգերից ձրիապէս սրան նրան տալ. այլ ցանկացողը պէտք է գնէ 25—50 կոպէկով իւրաքանչիւր երգը: \*) Այժմ Հաւէսին կենում է Ալէքսանդրապոլում և պարապում է աշուղութեամբ. աժում է սազի վրայ,

«Առիտէ» Ա. Մխիթար.

### Ե Ր Գ Ը.

Քո նման աշխարհը կը ճարուի սակաւ,  
Գեղեցիկ նազելի հրաշանորոգ ես.  
Սիրոյ նշան բեզմէն չ'տեսայ բնաւ,  
Գու էդ մասին ի՞նչու համար անհոգ ես:

Աղաչում եմ սրտիս վէրքը ցոյց տալով,  
Ձեզ գթալով էդ քո սէրը ցոյց տալով,  
Վարձք առան շատերը ճէրը ցոյց տալով,  
Մարդիկ կ'կարծեն թէ առանց հրոգ ես:

Հաւէսուն թողել էս անդեղ ու անձար,  
Սաղ խօսքս սիրուհի բեզի է յարմար.  
Գլուխ երյայնութեան տասն ու հինգ համար,  
Ոչ պաղ ես, սէրիցը, ոչ ջերմ ու շոգ ես:

(անպիտ)

\*

\* \*

✓ ✓ 199. Մարգար ծնուել է 1830-ական թուականներին, Հին

\*) Ճշմարիտ է ասում պ. Ա. Մխիթարեանը որ Հաւէսը մի տարրինակ մարդ է: Մենք գնացինք նրա մօտ և խնդրեցինք նրա լոյս չտեսած երգերից մէկը, բայց նա մերժեց մեր խնդիրը ասելով «ես չեմ տալ իմ երգը, և ուրիշներին էլ կասեմ որ իրանցը չտան».



Նախիջևանի Նորս գիւղում: Սա երիտասարդ հասակում բոլորովին առողջ և ամուր կազմուածք է ունեցել, բայց ժամանակի ընթացքում սրա կեանքի հետ պատահած հիւանդութիւնները առաջացրել են սրան մէջքի հիւանդութիւն:

Աշու Մարգարը սկզբից ինքնուս կերպով սովորել է սաղածելը և երգել է Աշու-Բաղալի երգերը, ինքն էլ սկսելով հետզհետէ գրել Թուրքերէն երգեր. բայց վերջին տարիներս նա բոլորովին թողել է Թուրքերէնը և սկսել է գրել Հայերէն լեզուով:

Աշու-Մարգարի երգերը ընդհանրապէս եղել են աղօթքներ, կեանքից գանդատներ և այլն:

### Ե Ր Գ Ը.

Այն ինչ ասեմ առաջին ես իմ բաղդից,  
Ինձ թողեց ոտատակ սալերու նման.  
Հանգստութիւն չունիմ գիշեր ու ցերեկ,  
Ինչպէս քամի մտած ծովերու նման:

Աստեղս խաւար է բաղդս կուրացաւ,  
Սիրտս տրտմեցաւ կեանքս մաշեցաւ.  
Կատարեալ բանական խելքս շաղուեցաւ,  
Շիւար եմ վայրենի ձորերու նման:

Ո՛վ Փառաց Թաղաւոր ողորմեա Գու մեզ,  
Ողբով արտասուելով աղաչում եմ Քեզ.  
Այսուհետե ինչու օրինակ եմ ես,  
Ծաղիկն թարչամած սարերու նման:

Գարուն եկաւ ծաղկաւ շուշան անթառամ  
Նատ մարդկանց ճար եղաւ փրկութիւն առան.  
Նս եմ անբախտ անմխիթար Մարգարան,  
Նրջում եմ հաւասար ծերերու նման:

(անսխիւ)

200. **Նիւմայի** պ. (առաջնորդ ցուցանող) իսկական անու-  
նը Իսահակ. ծնուել է 1833 թուականին Երզրուումի մէջ:  
Սրա հայրը եղել է Տաճկաստանում յայտնի Աշղ-Նիսային, որի  
կենսագրութեան մէջ յայտնել ենք Իսահակի յառաջադէմ լինելը:  
Երզրուումի մէջ Նիւմային պարապել է թէ աշուղութեամբ և  
թէ գերեզմանաքարեր փորագրելով:

Նիւմային 1858 թուականին գնում է Պոլիս, այնտեղ թէ  
իւր շնորհքով և թէ հօր անունով բաւականին հռչակ է ստա-  
նում և պալատում սկսում է ածել և երգել մեծ եռանդով: Տաճ-  
կաստանում շատ տեղեր ման գալուց յետոյ Նիւմային գալիս է  
Ռուսաստան, Ալէքսանդրապոլում պատահում է Աշղ-Ջիւանուն  
որի հետ ընկրանում է կարճ ժամանակով: Նիւմային Ռուսաստա-  
նում լսելով որ հայրը մեռել է, շտապում է հայրենիք. Կարին:

### Ե Ր Գ Ը.

Նէ կեօնէ տաւալար կեչրամ սէրտէն,  
Կօյնիւմիւն սուլթանի պուլինճա դէտէր.  
Փէրամուշ օլունմազ խանի ճիկերտէն,  
Մէյլի մուհապպէթի օլինճա դէտէր:

Ահի էնին էյլար կիւնի դէմ օլան,  
Վար մը պէնճիլէյին չէշմի նէմ օլան.  
Սիթարի զիասզ պէղթի քէմ օլան,  
Էօզ կիւնի կեչրըր կիւլինճէ դէտէր:

Էյ Նիւմայի եթէր օլտուն պաղրի խուն,  
Լէյլայի Փարադէթ էյլատի Մէճնուն.  
Աճրէպա պուն պէօյլէ քիմ էթմիշ դէնուն,  
Պիւլպիւլ կիւլի պէքլէր սօլինճէ դէտէր:

(անսխալ.)

\*

\* \*

201. Դուրկեսար պ. (հիւան) իսկական անունը Ստեփան. ճնուել է 1840 թուականին Աստրախանում: Սրա մասին մենք չ'կարողացանք կենսագրական տեղեկութիւններ հաւաքել. միայն աշուղները ասում են որ եղել է Թուրինջի աշակերտը և Աստրախանում պարապում է եղել մանր առևտուրով. ածել է սաղի վրայ:

## Ե Ր Գ Ը.

Տեսնամ մէկ բաղչի միջում մին գեղեցիկ ինչպէս լուսին,  
Զորս կողմում գիւլ սուսամբար մազերն թափուել էր ուսին.  
Աչքերը բորբոքուել էր որպէս ճանճանչները լուսին,  
Մոլորուած տարուած մնացիմ կեանքս դնաց էդ նոր կուսին  
Գլուխս զուրբան կանեմ էսպէս նոր ջիւանի մասին:

Քու պատկերահանդ պիտի գրիչն ալմաղ ունենայ,  
Աչքերիդ ձեռիդ գրողը գրիչը քանց մաղ ունենայ.  
Պելուած մտիկ տայ երեսիդ իր ձեռքին էլ սաղ ունենայ,  
Երգի քեզ գովական բան որ լսողը հաղ ունենայ  
Քեզ տեսնող քն մոլորուին հալուին էշխեցդ նուազին:

Լսեցին քու թարիֆը եկան մեր հին Հայաստանից,  
Գեղեցիկները թաք կացան ամաչեցին քո երեսից.  
Պատկերահանդ եկաւ Եւրոպա Ֆռանդստանից,  
Զարմացաւ պելուած մնաց քու երկու աստղով աչերից  
Դուրկեսարն եմ ես էլ մայիլ մնացի քու խալիդ լուսին:

«Սոխակ» գ. եր. 129.

\*

\* \*

102. Հումաշի (բարձր) իսկական անունը Համբարձում. ճնուել է 1840-ական թուականներին Տաճկաստանի Աան քա-

ղաքում: Նա ածել է սազ և բացի աշուղութիւնը նա պարապել է որմնադիրութեամբ. բայց յետոյ երբ կուրացել է թողել է որմնադիրութիւնը: Եղել է արբեցող և մոլի մարդ. բախտախնդիր կեանք է ունեցել: Վերջին տարիներս եթէ չեմ սխալում 1882 թուականին մեռել է ԱրտաՏանից Ղարս տանող ճանապարհի վրայ: Երգում էր միշտ Թուրքերէն. երգը չեմք կարողացել ձեռք բերել:

\*

\* \*

203. **Հագիրի** պ. (պատրաստի) իսկական անունը Համբարձում: Ծնուել է 1840 թուականին Ալէքսանդրապոլում և վաղձանուել է 1876 թուականին Յունիսի 22-ին 36 տարեկան հասակում: Հանգուցեալի ծնողները քաղաքիս աննշան դասակարգիցն էին և երկրագործութեամբ էին պարապում, որոնց հետ և Հանգուցեալը այնքայն սէր ունէր դէպի ուսումը և այնքան համեստ վարք ու բարք ունէր, որ մի անկիրթ և չլարգացած երիտասարդի համար աներևակայելի իրողութիւն էր: Մի օր ծնողքը բարկանում են նրա վրայ: Նա փախչում է իւր քեռի (մօրեղբայր) տիրացու Յակովբի (այժմ քահանայ) մօտ կարդալու: Նրա համար կարդալն այնքան յաջողում է որ հազիւ կարողանում է բերականը (այբնարանը) և սաղմոսը կարդալ. այնուհետև դարձեալ ստիպում է երկրագործութեամբ պարապել: Տեսնելով որ այլ ևս միջոց չկայ իւր նպատակն առաջ տանելու, նա սկսում է ծածկերէն երգեր յօրինելով, ժամանակն անցկացնել: Վերջին ժամանակներս տեսնելով Հայերէն երգերի ընդհանրանալը, ինքն ևս առանց ոչ ոքին աշակերտելու հետեւում է ընդհանուր կանոնին, Հայերէն երգեր յօրինելով: Հանգուցեալը ժամանակի պահանջին հակառակ վարմունք է ունեցել իւր հեղինակութիւնների իսկական սև սգրութիւնը անխնայարար ուրիշներին է տուել, չմտածելով որ մի ժամանակ իրան կ'հարկաւորուէր: Եւր մահուանից մի քանի օր յետոյ հազիւ կարողա-

ցայ տան անկիւններից մի բանի հատ ու կտոր երգեր ժողովել  
որոնցով հանգուցեալի ինքնակրթութեամբ զարգանալու յիշատակը  
և միանգամայն պարծանքը պիտի համարուին:

«Սոխակ» Ալէք. Մխիթարեան.

### Ե Ր Գ Ը.

Կենսատու Քրիստոսով հիւանդ հոգոյս մեծ դեղ գտայ,  
Դեղը դարման, դարման ու ճար, ճարըդ մաքուր եղ գտայ.  
Ցրուելու ստուերներս մէկէն շնորհեց լոյս ու ջահ,  
Ջահը զամբար, զամբար ու լոյս, լոյսը լի կանթեղ գտայ:

Աղտերս լուանալու իսկ նա շնորհեց երկնացող,  
Ցող ու անձրև, անձրև ու շաղ շաղը միշտ հեղեղ գտայ.  
Գրքերից լաւ հասկացայ ամեն բանից Աստուած է մեծ,  
Մեծ ու իշխան, իշխան ու դատ, դատը խիստ ահեղ գտայ:

Կարդալով Սուրբ գրքերը ամենայն բան քննեցի ճիշտ,  
Ճիշտ ու ստոյգ, ստոյգ ու նոր, նորը ես լաւ շքեղ գտայ.  
Ես տկար Հաղիբին եմ քննեցի շատ տաղանդ ու կիրք,  
Կիրք ու կանոն, կանոն ու վարք, վարքը յոյժ համեղ գտայ:

«Սոխակ» դ. եր. 130.

\*  
\* \*

204. **Եսողութիւն**. տ. (Յակովբի որդի) իսկական անու-  
նը Կարապետ. ծնուել է Ալէքսանդրապոլի Աշլաղ գիւղում. սրա  
մասին ոչ մի բան յայտնի չէ, ունեցել է մի ընկեր որի անունը  
եղել է—

205. **Եսողութիւն**. տ. (Յակովբի որդի) իսկական անու-  
նը Մկրտիչ. սա ինչպէս ասում են եղել է թիֆլիսեցի: Եսողութիւն-  
ը Կարապետի հետ գնացել են Աստրախան: 1847-ին մեռնում

է Կարապետը և հետևեալ օրը Մկրտիչը: Եաղուբ-օղլիքը իրար հետ շատ սիրով են եղել. Թիֆլիսու մ լաւ հռչակ և պատիւ են ունեցել բայց երբ Աշըղ-Նիրինը յայտնու մ է Թիֆլիսու մ, նրանք տեսնում են որ այնուհետև չեն կարող մնալ Թիֆլիս. ուղեցել են ժամանակաւորապէս գնալ Աստրախան, մինչև Նիրինը Թիֆլիսից հեռանայ. բայց նրանք Աստրախանու մ երկուօր մի շարաթուայ մէջ մեռնում են: Թաղու սժ են Աստրախանու մ:

### Ե Ր Գ Ը.

Ինչ մարդ մարդի բարի կուզի,  
Աստուած կ'տայ բարի եղբայր.  
Բարի ուշողն բարի կառնի,  
Չի հանդիպել չարի եղբայր:

Մարդ պէտք է իրան ճանաչի,  
Հէնց բան բռնի չի ամաչի.  
Ատեղծողն սրտով կանչի,  
Նա չի դիպչիլ բարի եղբայր:

Ի՞նչ ասացի ի՞նչ իմացար,  
Բարեկամ ինձէն հեռացար,  
Դու որ ինձի վատ կամեցար,  
Նա բեզի լ՞ոչ արի եղբայր:

Էս աշխարհս ո՞ւ մ է մնալու,  
Էս օր կեանք վայն ենք գնալու,  
Եաղուբ-օղլուն մոռանալու.  
Լաւ բարեկամ ճարի եղբայր:

«Ասխալ» գ. երես 122.

\*

\* \*

206. **Մաղաք.** սրա ճնու սժ թու սկանը թէև մեզ յայտնի չէ. բայց մեռել է 1861 թու սկանին. ածել է ջուժակի վրայ երգել է հայ և թուրք լեզուներով: Մաղաքը եղել է Տաճկաստանի թուշտի գիւ լից և Աշքի-Հայաթու բեռորդին է եղել: Երգը մեզ հասած չէ:

207. **Շաքի** պ. (քաղցր) իսկական անունը Ստեփան. ծրնուել է 1840-ական թուականներին Վաղարշապատի Սմաղարա գիւղում բողոքական ընտանիքից: Սա մանկութիւնից աշակերտել է Շիրինի մօտ: Շայթին վաղուց արդէն զրկուած լինելով իւր աչքերից, պարապում էր աշուղութեամբ և բողոքական լինելով, լուսաւորչականներից շարունակ հալածում էր: Մի անգամ գիւղացիք ծեծում են սրան և խեղճը չարաչար տուն հասնելով շատ չ'անցած մեռնում է: Աճում էր սաղի վրայ. երգում էր Հայերէն կրօնական և ցաւալի երգեր:

### Ե Ր Գ Ը.

Որովհետև աղքատացած ցաւի մէջ,  
Հեռացան ինձանից բարեկամներս.  
Ընկղմեցան բոլոր տղմուտ գաւի մէջ.  
Ագնիւ բիւրեղ շուշան անթառամներս:

Երկնքի լուսինը ծիածան չունի,  
Դառն աշխարհում անկեղծ բարեկամ չունի.  
Առանց վայ կարդալու մէկ վայրկեան չունի,  
Հեծեծանոք անցան բոլոր ժամերս:

Շայթի ո՞վ տեսաւ ձմեռը դարուն,  
Բոլոր շրջանիս մէջ չմնաց արիւն.

Դեռ չը եղած տարիներս երեսուն,  
Սպիտակեց բոլորովին ծամերս:

(անսխիտ.)

\*  
\* \*

✓ ✓ 208. Մալ-ճիւղան իսկական անունը Մկրտիչ. ծնուել է  
1840-ական թուականներին Ալէքսանդրապոլի Ղազանչի գիւղում:  
Ածել է սագի վրայ:

Ե Ր Գ Ը.

Մտածէք աշխարհիս ոչինչ բաները,  
Աշխատեցէք անենք սահմանի նման.  
Սիրով ընդունեցէք զինին ու հացը.  
Իբրև Տէր Յիսուսի կամպանի նման:

Առաւօտուն կենիք ժամը գնացէք,  
Չարուց պաշտօններից հեռու մնացէք.  
Մտածէք մեղքերդ եռանդով լացէք,  
Աշխատեցէք չ'մնանք անբանի նման:

Մալ-ճիւղան աշխարհից փափագս առայ,  
Քսան երկու տարուայ վարքիցս դառայ.  
Դրախտի մէջը կար շատ անմեղ ծառայ,  
Տերեներէն կենի թռչունի նման:

(անսխիտ.)

\*  
\* \*

✓ ✓ 209. Ղեյրաթի պ. (գործունեայ ժրաջան) իսկական ան-  
ունը Յովհաննէս: 4—5 տարեկան ժամանակ բերուել է Տաճ-



կաստանից Ռուսաստան, որը տասը տարու չափ մնացել է Ախալցխայում: Յետոյ ճնողները եկել են Ալէքսանդրապոլ: Յովհաննէսը մանկութիւնից սկսած շատ սէր է ունեցել աշուղութեան և այդպիսով շուտով նա սովորել է սանթուր անել և գրել թուրքերէն երգեր:

Ղէյրաթին կրկին գնում է Ախալցխա և այնտեղ տեսնում է Նիւմայու (Իսահակ) հետ: Մի քանի ժամանակ ընկերանում է նրա և Ջիւանու հետ և երբ որ Նիւմային գնում է էրզրում, Ղէյրաթին էլ գալիս է Ալէքսանդրապոլ: Ղէյրաթին որ բացի աշուղութիւնը պարապում էր և սրճարան բանացնելով, շատ սիրում էր մրցել աշուղների հետ և որտեղ լսում էր որ մի երևելի աշուղ կայ, գնում էր նրա հետ մրցելու:

Ղէյրաթին լսելով որ էրզրումում մի տաճիկ երևելի աշուղ Հասպի կայ, խառնում է Սուրբ Կարապետ գնացող ուխտաւորների հետ և ճանապարհ է ընկնում էրզրում: Երբ հասնում է այնտեղ տեսնում է Նիւմայու հետ: Հասպի աշուղին էլ տեսնելով ծանօթանում է, և մտերմական յարաբերութեամբ գալիս են Ալէքսանդրապոլ, յետոյ Ալէքսանդրապոլից գնում են Քիֆլիս: Ղէյրաթին կարելի է ասել որ լաւ մարդ է եղել և միշտ տրկարների կողմը պաշտպանելով հպարտներին հալածել է. բայց նա վարակուած է եղել մի ախտով. այն՝ որ նա խաղացել է տեղական խաղեր. թխտախաղ, նարտի, տամա և այլն. վերջապէս նա իւր ունեցած չունեցածը բոլորը տանուլ է տուել:

Ղէյրաթին առաջ երգել է միշտ թուրքերէն. բայց իւր վերջին օրերում երբ տեսնում է որ աւելի պահաջ է դարձել Հայերէնը, նա սկսել է գրել ռամկական երգեր աւելի թրքախառն Հայերէն: Մեռել է 1878 թուականին: Ահա Ղէյրաթու երգերից մէկը որ նուիրել է Աշուղ-Չահրուն:

### Ե Ր Գ Ը.

Բարեկամիք դուք իմ մահիս սպասէք,  
Չ'կայ ասող աւանդ աւանդ եալլա հէյ.

Ղաֆիլ խելքին խաֆէ բերէ մի ասէք,  
Դուս է տալիս սաւաղ սաւաղ եալլա հէյ:

Անիրաւ չար գազանի պէս դու կատողէ,  
Տես Աբրահամ, Իսակ որդին կ'մատողէ,  
Խոնարհացիր գլուխ վար բեր ու պտողէ,  
Անպիտան ծառ բարձր դաւաղ եալլա հէյ:

Էս ըսելով քեզի մէյտան կ'տանեմ,  
Ախբէր Զահրի էս քու վրէժ արք ունեմ  
Արխալու շա հին է, ես էլ շերկեզկի չունեմ,  
Ջուխում սափոք ու մէ փափաղ եալլա հէյ:

Քանի դաւողը կայ մեզ հուրն ի՞նչ կանէ,  
Բաւ է օխտը մահչի. ալ ջուրն ի՞նչ կանէ.  
Ղէյրաթը փատ, աթար, արուրն ինչ կանէ,  
Պատում հաց թասըմ արաղ եալլա հէյ:

(Ա. Կոթի)

✱  
\* \*

210. Մեյեսաղ Զէրկեար-օղլի (որսորդ ոսկերչու որդի) Սրա  
մասին ոչ մի կենսագրական տեղեկութիւն չեն հասցրել մեզ. բայց  
ինչպէս սա իւր երգումն ասում է 1844 թուականին դեռ ա-  
պրում էր:

Ե Ր Գ Ը.

Թարգմանեց կանոններով հայոց համար զօրաւոր,  
Տեսութեանդ կարօտ եմ շամսուղամար զօրաւոր  
Հրամայեց զօրքերին կապին սամար զօրաւոր,  
Բղխում է լոյսնի բերնէն ձմեռ ամառ զօրաւոր:

Հայոց մեծ հայրապետն սուրբ Սեբրովբ թարգմանիչն է,  
 Որ Հայկական տառերի միակ հնարիչն է,  
 Յարևելից յարևմուտ ամենին պահպանիչն է,  
 Վահան իշխանն է զօրաւոր, էն էլ մէկ սահմանիչ է,  
 Քառասուն կանգուն հեռի ասեց վէմ առ զօրաւոր:

Հոգին մեծ ու փոքրի ամենն իւր բարումն,  
 Դատաստանին ինչ կանեմ ճար չկայ իմ ճարումն.  
 Թուին հազար ութն հարիւր քառասուն և չորս տարումն,  
 Ձերկեար-օղլի Սէյեաղն շի մնալ աշխարհումն  
 Որ գնում ես առ Աստուած հոգոյս մէկ ճար զօրաւոր:

«Նոր-հնար» Ոսկ. Տէր-Յովհանն. կռճ. 2 տ.

\*

\* \*

211. **Ջիւանի.** պ. կամ ձիւան (երիտասարդ մանուկ) իսկական անունը Սեբովբէ. ծնուել է 1846 թուականին, Ախալքալակ գաւառի Կարծախ գիւղում: Նրա ութնամեայ հասակի մէջ իւր հայրը Ստեփանը մեռնում է և մանուկ Սեբովբէն մնում է իւր հօրեղբոր խնամակալութեան ներքոյ: Սեբովբէի հայրը դեռ կենդանի ժամանակ իւր որդուն Ջիւանիկ անուն է տալիս եղել և այդպիսով մինչև այսօր նրան Ջիւանի են ասում, կգճատած «կ» տառը:

Պատանի Ջիւանին գիւղի մէջ մասնաւոր ուսումն առնելով, դուրս է գալիս գալրոցից բայց նիւթական միջոց չունենալով, չի կարողանում գնալ քաղաք ուսումը շարունակելու այլ որպէս գիւղացի նա պարապում է երկրագործութեամբ: Այդ ժամանակներին ինչպէս հիմա էլ ձմեռ ժամանակ գիւղերը ման են գալիս աշուղներ հեքեաթներ պատմելու և հարսանիքներում ածելու, Կարծախում յայտնուում են մի խումբ աշուղներ: Մի անգամ նրանց երգելու ժամանակ պատահում է Ջիւանին և երբ լսում է այդ աշուղների երգն ու նու սգածութիւնը, յափշտակում է նրանց ձայնից և միևնոյն միջոցին յղանում է պատանու սրտի

մէջ երգի և երաժշտութեան վառ զգացմունքը. այդ ժամանակ նա եղել է 15 տարեկան: Բարեբախտաբար այդ աշուղները վրձում են ամբողջ ձմեռը անցկացնել այդտեղ, յուսալով որ մեծ գիւղ լինելով, երանց գործը յաջող կ'լինի:

Ջիւանին սիրահարուած լինելով իւր մտադրութեան վրայ, մեծ դժուարութեամբ ձեռք է ձգում մի հասարակ ջութակ և մի երկու ամսաչափ մնալով դրանց մօտ, ընտելանում է երաժշտական ելեւջների հետ և սովորում է մի քանի եղանակների անունը: Աերջապէս մի երկու տարուց յետոյ նա ինքնուս կերպով բաւականին վարժ սովորում է անունը. դրա հետ էլ զուգնթաց կերպով նա գրում է երգեր և բանաստեղծութիւններ:

Նոյն ժամանակներին, որ մինչև հիմայ էլ մեզանում գիւղական հասարակութեան մէջ սովորութիւն կայ որ պարսպ ժամանակներին սայլերով գնում են Թիֆլիս այնտեղից զանազան ապրանքներ բրէհով տանելու շրջակայ գաւառական բաղաքները, Կարծախ գիւղից էլ գնում են Թիֆլիս մի քանի գիւղացիների հետ Ջիւանու հօրեղբայրը և մի քանի ազգականները. 'հետները տանելով և պատանի երգչին. նա էլ չի մոռանում հետը վերցնելու իւր անբաժան ընկերոջը ջութակին: Երբ առաջին անգամ մտնում է Թիֆլիս, բոլորովին հիանում և զմայլում է, ինչպէս կարող էր պատահել մի՛ գիւղացի տղայի, որ բացի իւրեանց գիւղից ոչ մի տեղ չէր տեսել: Բարեբախտաբար թէ դրժբախտաբար նրանց բրէհը (տանելու ապրանքը) պատահում է դէպի Ալէքսանդրապոլ: Չնայելով որ սուրհանդակը Թիֆլիսից Ալէքսանդրապոլ հասնում է երկու օրում, բաց մեր խեղճ գիւղացի ճանապարհորդները իւրեանց Հայկական սայլերով (հին ձևի) վեց օրուայ հազիւ են կարողանում հասնել և ապրանքները յանձնել իւրեանց տէրերին. այդ լինում է 1864 թուականին Ջիւանու 18 տարեկան հասակում:

Մինչ այս մինչ այն երբ Ջիւանու հօրեղբայրը և ազգականները պատրաստուում են տան զանազան պիտոյքներ ու հարկաւորութիւններ առնելու որ հետևեալ օրը ճանապարհ ընկնեն,

Ջիւանին իւր ջութակը հետն առած ման էր գալիս այդ ան-  
ժանօթ քաղաքի մի քանի փողոցներով, մէկ էլ կանգ է առնում  
մէկ սրճատան առաջ, լսելով այնտեղից երգի ձայներ, ներս է  
մտնում և տեսնելով որ վարպետ աշուղներ են երգող և ածող-  
ները, մի անկիւն կանգնում և լսում է: Այնտեղի մարդկանցից մի  
քանիսը նրան զանազան հարցեր են առաջարկում «Որտեղացի  
ես» «Եւ ածել գիտե՞ս» «անունդ ի՞նչ է» և այլն: Ջիւանին ամեն  
մինի հարցերին էլ բաւականացուցիչ պատասխաններ է տալիս: Ա-  
շուղները կանչելով նորեկ երգչին իւրեանց մօտ նոյնպէս հարց  
ու փորձեր են անում նրանից:

Մինչև անգամ նրանցից մինը առաջարկում է որ Ջիւանին  
մի երգ երգէ. նա սկսում է երգել Ալէքսանդրապոլում առաջին  
անգամ իւր յօրինած երգը (տես «Աշող-Ջիւանու երգերը» հատ.  
ա: № 30.) Վարպետները հաւանութիւն են տալիս նրա թէ  
ածելուն և թէ երգելուն և իւրեանց սովորութեան համեմատ  
կամենում են Ջիւանուն մի աշուղական անուն տալ և վարպետ  
անուանել, բայց նա մերժում է առաջինի համար ասելով որ  
ինքն արդէն անունը ստացել է իւր հօրից:

Թէ սրճարանատէրը (Վարապետ Տալեանց) և թէ այդ ա-  
շուղները մեծ սէր են ցոյց տուել և սկսել են սրտանց պատու-  
ել: Ջիւանին հետեւեալ օրը գալիս է սրճատուն և իւր մի քանի  
ժանօթներին «մնաք բարով» ասելուց յետոյ իւր հօրեղբոր հետ  
գնում է Վարձախ:

Ջիւանին մի քանի շաբաթ գիւղի մէջ մնալով տեսնում է  
որ այնտեղ ասպարէզը սահմանափակ է և չի կարող առաջ գը-  
նալ, մի ընկեր գտնելով գնում է Թիֆլիս և այնտեղ սկսում է  
երգել և ածել իւր մի քանի գիտեցած Հայերէն երգերը:

Այդպէս նա Թիֆլիսում մնում է մօտ մի տարի: Մի օր  
Ալէքսանդրապոլի իւր ժանօթ սրճարանատէր Վ. Տալեանից մի  
նամակ է ստանում թէ «իմ աշուղների և իմ մէջ վէճ ծագեց.  
նրանք հեռացան և ես գիտենալով որ դուք Թիֆլիսումն էք և  
լաւ յաջող ածում և երգում էք, ուստի հրաւիրում եմ Ձեզ

այստեղ իմ սրճարանում երգելու:

Ջիւանին մի երկու շաբաթից յայտնուում է Ալէքսանդրասպողում և լաւ ընդունելութիւն է գտնում իւր ծանօթներէց. Հետզհետէ ծանօթանում է թէ քաղաքի և թէ տեղական ժողովրդի հետ նոր շրջան է բացւում նրան Ալէքսանդրասպողում: 1871 թուականին նա ամուսնանալով իւր բնակութիւնը հաստատում է այդ քաղաքում և մի խումբ կազմելով շատ անգամ պատահում է հարուստ դատակարգի տներում, և նրանց խնջոյքներում իւր ջութակով ծանօթանում է որպէս բուն Հայ երգիչ:

1875-76-ին Ջիւանին Ալէքսանդրասպողում մի առանձին սեւեռակ է վարձում և հաւաքում է այնտեղ 15-20-ի չափ երկտասարդներ, պատանիներ և սկսում է սովորեցնել նրանց ջութակ ածելը. որոնցից մեծամասնութիւնը կոյր լինելու պատճառով, չէին կարող բացի երաժշտութիւնից մի ուրիշ բանի ձեռք զարնել: Բաւականին յաջողւում է նրա այդ ձեռնարկութիւնը այնպէս որ նրա «չկողայից» դուրս եկած աշակերտները այժմ կատարելագործուել են և առաջնակարգ ածողներն են եղել Ալէքսանդրասպողում:

Աչրդ-Ջիւանին իւր խմբով ման դալով և երգելով Հայկական երգեր, Աովկասի քաղաքներում ինչպէս Քիֆլիս, Բաղու, Բաղում, Ախալցխա, Ղարս և այլն. բաւականին ծանօթ է մեր հասարակութեանը. նա մեր ժողովրդից իբրև յարգանք և անմոռանալի յիշատակ ստացել է զանազան տեղերից «Ուղերձներ» «Գովասանական թերթեր» և այլն և այլն:

Մենք մի բանիար հաւկաւոր ենք համարում այստեղ առաջ բերել: 1883 թուականին Քիֆլիսում եղած ժամանակ ստացել է մի «պսակ» որի ժապաւէնի վրայ գրուած է «Ջիւանուն համակրողներէց» պսակի հետ կայ մի ուղերձ որ հետևեալն է:

## ՈՒՂԵՐԶ

## ԱՌ ԵՐԳԻՉ ՉԻՒԱՆԻ

Ժողովրդեան մարդն է սա՛ ժողովրդից կեանք առած,  
 Ժողովրդի մէջ մեծցած՝ ժողովրդեան մէջ ուսած,  
 Ժողովրդի, որ չունի դպրոց ուսում վարժարան,  
 Ժողովրդեան, որ կարօտ է ծարաւի է կրթութեան:

Արդ ժողովուրդն ճնաւ Ջիւանի երգիչ,  
 Որ խրատովքն լինի իւրեանց քարոզիչ:

Ոհ ինչքան ախորժ եւ քանի քննոյր է,  
 Երգերիդ ձայնը, քնարիդ Հնչիւն.

Նորանք մեզ վերայ քանի՛ խոր ազդէ,

Որքան ներդործէ ամուր սրտերուն:

Թող լուէ՛ ձայն սոխակին,

Քանի երգէ ու նուազէ Ջիւանին:

Եւ ժողովուրդը հեռու ուսմունքից,

Ուշադիր լինի քնարիդ ձայնին.

Որքան խօսք խրատք քաղէ նորանից,

Եւ չարգեցնէ իւր ծարաւ հոգին:

Թող դադրին ձայնք տաւիղին,

Քանի երգէ ու նուազէ Ջիւանին:

Եւ աչդ երգերն սուրբ սրտից բղխած,

Ռամիկ ամբոխը ողևորեցին.

Նորա խանդ տուին սրտերուն մեռած,

Փշաա հարուստի քրակը բացին:

Ո՛վ կ'տքնի ծածկուած,

Արժանի է պսակաց.

Հետ իւր խմբին քնարին,

Կեցցէ չաւետ ՋԻՒԱՆԻՆ

Տիֆլիս.

Արամ Միանսարեան.

Անցեալ 1890 թուականին երբ Ջիւանին իւր խմբով Թիֆլիսից վերադառնում էր ԱրտաՏանով Ալէքսանդրապոլ, այնտեղ նորաբաց ուսումնարանի օգտին երեկոյթ էր տուել և օգուար յատկացրել ուսումնարանին: Այնտեղի երիտասարդութիւնը 'ի պատիւ նրա և իւր խմբի ճաշ էր տուել: Հէնց այնտեղ ճաշի ժամանակ կարդացուել է այս ճառը:

## Պարոնայք

Սրբազան պարտք եմ համարում մի համառօտ բանախօսութիւնով բացադրել այն՝ թէ ինչո՞ւ համար է այս բազմադուժար ահուժքի համախմբութիւնը և նրա նշանակութիւնը:

Այո, այս աւուր այս տեղում մեր խմբելը մեզ ամենիս անսահման հրճուանք է պատճառում, որի նմանը մեր մէջ հազիւ է պատահում:

Պարոնայք, մենք այստեղ կապուտակ երկնակամարի տակ հիւրասիրած ենք մեզ հայերիս չաչտնի և նշանաւոր ժողովրդական երգիչ Ճիւանուն և անշափ չարգանք ենք տածում դէպի նա: Այո՛, այս մի ուրախալի երեկոյթ է մեզ համար և թէ Հայ ժողովրդի չառաջադիմութեան ցոյցերից մինն է: Առաւել ևս ուրախալի է, որ մի այսպիսի փոքրիկ դաղթականական վայրում զանազան երգիչների տեղ կարողանում ենք հիւրասիրել և չարգել մեր հռչակաւոր հիւրին Ճիւանուն:

Այո, Ճիւանին կարելի է ասել որ ըստ այլոց մի հասարակ երգիչ է, բայց և միևնոյն ժամանակ նշանաւոր անձնաւորութիւն է. ահա թէ ինչպէս: Քահանայի խրթին քարոզը, իշխանի սպառնալիքը, ուսուցչի խրատական և իմաստալից խօսակցութիւնը այնքան չէ կարող ազդել ժողովրդի վրայ՝ որքան երգչի երգերը:

Այո՛, Պարոնայք նրա երգերը կենդանի չիշատակներ են թողնում իւրաքանչիւր անհատի սրտում. նրա երգերը ոգևորում գրգռում և կենդանութիւն են տալիս ամեն մի Հայ անհատի:

Ժողովրդական երգիչը երգում է ազգի անցեալը որով չիշեցնում է մեզ մեր հին փառքը. երգում է ներկայ վիճակը, որով մեզ արթնացնում է մեր դարեւոր քնից և ուղեցոյց է լինում զանազան գործերում: Այո՛ սիրելի է մեզ ժողովրդական երգիչը: Նա



երգում է նշանաւոր անձանց կենսագրութիւն. նա երգում է բնութեան սքանչելիքը՝ ձգում է ամեն մի Հայ երեսասարդի սրտում սիրոյ անհանգչելի կայծը և այլն և այլն:

Ահա թէ ինչ է ժողովրդական երգիչը և թէ մենք ինչո՞ւ պարտաւոր ենք սիրել չարդել նրանց, առաւել ևս այս բոպէիս մեզ մօտ գտնւող ձիւանի անուանուած ժողովրդական Հայ երգչին, որը իւր վսեմութեամբ բարձր է բոլոր երգիչներէն:

Նրեակայցեցէք որ ամենահին ժամանակներից ևս ժողովրդական Հայ երգիչները մեծ դեր են խաղացել ժողովրդի մտքի վրայ, և միևնոյն ժամանակ մեծ չարգանք են ստացած նորանցից: Վեր առնենք մեր Հայ թագաւորների ժամանակակից Գոգթան գաւառի հռչակաւոր երգիչներին, որոնց մասին մեծ գովեստով է խօսում մեր ծերունի պատմահայր Մովսէս Խորենացին. որը և նոցա երգերից մեծ օգուտներ է քաղել մեր պատմութիւնը գրելու միջոցին: Ահա այսպէս և ժողովրդական երգերի մէջ պարունակւում և ժամանակից պատմութիւն: 19-երորդ դարի վերջի կիսում բնութիւնը ստեղծեց ժողովրդական երգիչ ձիւանուն, պարգևելով նորան երկնաձիւր չափութիւն որը չայտնի է բազմաթիւ երգերի հեղինակութեամբ և իւր զգայուն և աղգասէր սրտիւ և որը այս բոպէիս վայելում է մեր հիւրասիրութիւնը, և ընդունում մեր չարգանաց հաւաստիքը:

Նս թէպէտ համառօտ բաց բաւականաչափ լուծուած եմ տեսնում վերոյգրեալ հարցերը, թէ ի՞նչու համար է մեր բազմագումար աղումբի համախմբութիւնը և նշանակութիւնը:

Այս վայրկենիս մէջ բնութեան սքանչելեաց տակ թռչնոց դաշլայ իկը, թիթեռների վզվոցը, մարդկանց մեղմ խօսակցութիւնը, երփներանգ ծաղկանց անուշահոտ բուրմունքը, այս սեղանիս վրայ գինու դիւրեկան գոչնը և համը, մեր դաւաթների չխըչխկոցը, մի գմայլուք և անսահման ուրախութիւն է պատճառում մեզ ամենիս, և այսպիսի ուրախ տրամադրութեան ներքոյ, խմենք մեր անգին հիւրի ձիւանու կենացը և մաղթենք առ Ամենաբարձրեալն Աստուած պարգևել ձիւանուն և նրա ընկերակցեաց չաջողութիւն, առողջութիւն, նպատակներին իրադործում, և ամենաերկար կեանք:

Ուրեմն կեցցէ երեսն.

Ի դիմաց մեր սեղանակից խմբի նուիրում եմ սոյն ճառը:  
Ախալցխաբնակ Մկրտիչ Ղ. Վարդապետեանց:

Այս ճառը տուած է ԱրտաՀանում Հայ Երիտասարդների կողմից:

Ի 19 Օգոստոսի 1890 թ.

Արդահան:

Նոյն ճառի ժամանակ մի պարոն Յարութիւն Վաթինեան կարդացել է մի ուղերձ (ոտանաւորով) բայց յարդելի պատճառով չենք կարողանում այստեղ յառաջ բերել:

Սնցեալ տարուայ 1891 թուականին «Արևելք» լրագրում, մի գեղեցիկ յօդուած էր դրուած «Աշխ-ձիւան» վերնագրով որը նոյնութեամբ առաջ ենք բերում այստեղ:

## ԱՅԸԻՍ - ԺԻԻԱՆ

(Կողմնակալ յիշատակ)

Թիֆլիզի մէջ տեսայ զինքը, կամ աւելի ճիշտ կ'ըլլայ ըսել, ըսեցի: Առաջին անգամն էր և գուցէ վերջինը ո՞վ դիտէ: Բայց այն դէմքերէն էր որք չեն մոռցուիր ու այն ձայներէն՝ որք սրտի թելերուն կ'զարնեն: Իւր անունը անձանօթ չէր ինձ արդէն. կարդալով քանի մը շարաթ առաջ Նահապետի սրտադրույցօդուածը «Աշուղք Հայոց» մտքիս մէջ արթնացաւ այդ աշուղին. Կովկասի այդ ժողովրդական երգչին յիշատակը:

Այնքան բաներ կային տեսնելու և մանաւանդ ուսումնասիրելու միակ եօթնեկին մէջ զոր անցուցի ի Թիֆլիզ 1890-Յունիսին, որ կարելի չէր գծել սրտը ուղեցոյց մը կատարելի պտոյտներու և այցելութեանց, գիշերը ցերեկին խառնելով և զոհելով իսկ միջօրէի քունը, որ հազան սովորութիւն մը կամ լաւ ևս ընտելութեան մէկ պահանջը դարձած է այնտեղ ամառուան մէջ, հազիւ կիսովին ճանչցայ Կովկասեան մայրաքաղաքը: Վասն զի հոն հսկակապ շէնքերէն ու նկարգեղ վայրերէն աւելի ընկերական կեանքն ու մարդիկը, բարքերն ու սովորոյթք են ուշադրութեան առար-

կայ ուղևորին համար որ շատ անգամ նիւթական հաճոյքը կը զոհէ բարոյականին: Այսպէս իրիկուն մը կը պատրաստուէի Քիֆլի մօտակայ ջերմուկներն \*) կըթալ, որք կազդուելչ ու առողջարարար են, երբ բարեկամի մը հանդիպեցայ:

— Աշքիս-ձիւանը լամձ ես հարցուց,

— Ա՛չ.

— Աւրեմն մեր տունը եկուք այս դիշեր մեղի հիւր է. կ'արժէ զինքը տեսնել:

Այս հրաւերին վրայ Ասիական ջերմուկը զոհեցի Հայ Աշուղին: Աւ գնացինք:

Քաղաքին պերճ թաղերէն հեռու կ'ընտելէր այդ բարեկամս. փայտաշէն, հին ու խարխուլ բնակարանաց շարքի մը մէջէ անցանք նեղ ու մթին փողոցներէ և հասանք իր տունը: Պատըզգամին վրայ հաւարուած էին հացը, մայրը ու քոյրը որք շքշապատած էին Աշքիս-ձիւանու, ու անոր երկու ընկերները:—

Քիֆլի մէջ մեծ թէ փոքր գրէթէ ամեն տուն ունի իւր պատշգամն որուն շնորհիւ հարուստ և աղքատ, տէր և մշակ, հաւասարապէս կրնան վայելել իրենց մեծագոյն հաճոյքը յթէ լամել:

Պորոյ սրճարանաց մէջ կամ խաներու անկիւնը հազուադիւս կերպով մեր հանդիպած աշուղներն ընդհանրապէս աննշան գէմքեր կըլլան, ողորմելի կերպարանքով. այդ սպաւորութեան տակ կ'մտածէի թէ արդեօք գէմս պիտի ելլէր, քիչ բարեփոխութեամբ վտիտ երիտասարդ մը, կամ կորաքամակ ծերունի մը, գլուխն ուսին գէպի աջ կողմը հակած, ձայնն անսուաղութենէ խուստած կեղտոտ գէմքով և գուցէ մի ախանի: Անակնկալ հաճոյք մը եղաւ ինձ տեսնել քառասուն տարեկանի մօտ անձ մը. բարեձև, բարձրահասակ, աւելի շէկ քան խարտեաշ մաղերով, կարմրորակ աչտերով, բոցավառ աչքերով, հաղած էր սև երկար պարեգօտ մը (չերքեղի) որուն տակին դարձեալ սև ներքնակ մը (արխաղուղ) մէջքը կատարած էր լայն քամար մը, ըստ տեղական սովորութեան ու գլուխը գրած Ռուսական շխաղիս.

Մէկ խօսքով գեղեցիկ մարդ մըն էր Աշքիս-ձիւան:

Եր երկու ընկերները, որոց հետ խումբ մը կ'կազմէր, համեմատաբար տարուօք էին ու ոչ այնքան վայելչատեսիլ. բայց

\*) Բնական ՏՏ-մըջրոյ տաք բաղնիքներ, որոնց գլխաւորներն են Հերակլեանի և Մերզոյեանի կոչուածները:

ներդաշնակութիւնը չբխանդարելու շափ մաքուր Հազուած և բաւական լաւ կ'զարնէին ու կ'երգէին. ասոնցմէ մին քանոնի նման նուագարան մը կ'ածէր ու միւսը ջութակաձև բան մը. իսկ վարպետը իր արուեստին վրայ վստահ՝ երաժշտական էն մեղմ ու էն տկար գործին ընտրած էր սաղը:\*)

— Գալուստդ բարի եղիցի, Պուլսեցի եղբայր, դաւառացիի առողջ ձայնով ու անուշ շեշտով մը: Արտեղից ես դալիս և մեր կը գնաս:

Բացադրեցի թէ Սանասարեանցի չուղարկաւորութեանն էի «դալիս» «Արևելքի» կողմից, և թէ շուտով Պուլիս էի «դառնում»:

— Ա՛, դուք «Արևելքի» խմբակիրներինց էք, ես շատ ս'նդամ կարողում եմ՝ ձեր թերթը, իմ քով պահած ունիմ այն Համարը որի մէջ Հրազդան մի լաւ չողուած էր գրել իմ վերան. ճանաչում էք Հրազդանին:

— Պարոնին եղբայրն է պատասխանեց բարեկամս:

— Աւրեմն մէկ էլ տուր ձեռք գոչեց Աշըխ-ձիւան դոհանանակութեան ժպիտով մը, իր առնական խոշոր ափին մէջ կրկին անդամ սեղմելով ձեռքս որ առաջին սեղմումէն զգացած ցաւը չէր մոռցած տակաւին:

Այս հարց ու փորձ որքան ալ ընական բերմամբ սկսուած չէր Համապատասխաներ մեր այցելութեան նպատակին ու կրնար երկարել. ուստի չաչտնեցի իրեն թէ ջերմ փափագ ունիմ զինքը մտիկ ընելու: Աղաչել չի տուաւ: Այդ ժողովրդական երգիչը ժողովրդական պարզութիւն մը ունէր, թափառացած բանաստեղծ մըն էր, որ քաղաքէ քաղաք, երկրէ երկիր շրջելով, կ'նուագէր ու կ'երգէր: Շիրակաց գիւղերէն միտցն մէջ էր ծնած. կենսագրութեան վրայ չ'կրցայ տեղեկութիւն առնուլ: Յիծաղելի ըլլալ չէի ուղեր փորձելով «Ե՛ր Ե՛ր Է՛ր Է՛ր Է՛ր Է՛ր» ընել զինքը. չէ՞ մի որ իւրամբողջ կեանքը իւր երգերուն մէջ էր դրած: Տպաւորութիւն մը, ներշնչում մը, զգացում մը՝ մէկէն՝ իմէկ իւր շրթանց վրայ կ'ստեղծէին նոր երգ մը. երաժշտապետներու պէս՝ քննադատելու երկիւղ կամ գովելու փափագ չունենալով գէշ աղէկ եղանակի մը կ'չարմարցնէր իր երգին կամ երգը եղանակի մը ու կ'արձակէր զայն, բերնէ բերան կ'տարածուէր ի'գիւղօրէս կ'հասնէր քաղաքները ու այսպէս կը ընդհանրանար: Իւր բանաստեղծութիւններէն երկու հատոր տըպուած են ժամանակաւ, բայց մեծագոյն մասն անտիպ կ'մնան,

\*) Աւղում է ասել ջութակ:

այսինքն աւելի բախտաւոր յանձնուած ըլլալով թէն մամլոյն, որ հիննալ ու մաշուիլ չ'գիտէ. ժողովրդեան բերանը: Այդ հաց երգելը չարգելի է Աովհասն ոչ միայն մերայնոց քով, այլ և Վրացւոց ալ, որք կ'համակրեն անոր:

Մինչ Աշըխ ձիւան և իւր ընկերք կը լարէին իւրեանց նուագարաններ, տանտիկինը պատրաստած էր արդէն պատուական թէյ մը որ կազդուրեց զամենքս: Երկու դաւաթ խմելէ չետոյ, աշուղները ծալապատիկ նստած ու գլուխնին բաց՝ սկսան նուագել հանդարդ մելամաղձիկ նուագածութիւն մը, կես արևելեան և կէս Աովհասեան որ աւելի լալիւնի մը կը նմանի քան երգի. մեղմ օրօր հեշտ եղանակ մը, որուն ազդած թմրութիւնը ցրեց յանկարծ ձիւանի ձայնը, որ բարձրացաւ զօրաւոր ներդաշնակ ու մանաւանդ զգայուն:

Երգած պահուն առաջուան մարդը չէր. ինքն զինքէն դուրս կ'ելնէր կը վերանար հոգեկան բան մը կ'դառնար առանց արուեստի առանց ճիգի կը սահէին երգերն իւր շրթունքներէն, ձայն ու նուագարան քիչ կուգային կարծես իրեն սրտին բոլոր խանգը հոգոյն բոլոր իղձը այտայտելու ճշմտրիտ բանաստեղծի ու ժողովրդական երգչի հաղուագիւտ տիպար մըն էր, արուեստականութիւն բնաւ չկար իր քով: Երգերը երգերուն կը չաջորդէին անընդատ, առանց չոզնութիւն պատճառելու. ընդհակառակն հաճոյք ալ ազդելով իրենց խի: Հիացմամբ կը տեսնէի այդ երեք գեղջուկներն, որք շատ մը քաղաքացիներ է անհամեմատ բարձր էին հոգով ու սրտով կը քրքրէին իրենց չիշատակները մանկութեան և երիտասարդութեան ծննդավայրի ու բնագաւառի և կը յուզէին նախ՝ իրենք յուզումելով:

Պատշգամն ուր հաւաքուած էինք, կը բարձրանար Աուրի ափանց մօտ: Մեր ոտից տակ կ'սահէր դէտը՝ պղտոր ալիքներն յանձնուած իրենց ճակատագրին, որ տեղ տեղ կը թողուր զանոնք հանդարտիկ ու տեղ տեղ կը գլորէր սահանքներն 'ի վար. անհրապոյց, անմարդագետին եղերքներուն մօտ տղայոց համախմբումներ կային որոնց հեռաւոր աղաղակները խառնուելով ջուրց, երբեմնակի խոխոջանքին հետ կը զարնէին մեր ահանջին ու իրականութեան կը դարձնէին զմեզ երգերու ազդեցութիւնէն չոր թողուած էինք: Բառերախտաբար քաղաքին կենդրոնէն հեռու ըլլալով այդ թաղ, օձորին արձագանքը չէր հասներ մինչև 'ի մեզ:

Զ'գիտեմ ինչու տարի մը ետքը չիշելով յունիսի այդ սօ-

Թափէղ իրիկունն ու այդ մեղամաղձոտ տեսարանը, սարսուռի նման տարտամ ըամ մը կ'ըզամ տակաւին: Աշըխ-ձիւանի ճաճնն է որ կ'հնչէ դեռ ահանջիս, թէ Հալւարարի ըստուերները որք կը նկարուին աշացս առաջն: Բայց սա գիտեմ թէ անհուն տխրութիւն մը կար այդ ամենուն մէջ, որ չի մոռացուիր:

Սազերը վար դրին: Սամաւարը կ'եռար, մեր քաջիկ և տանտիկները լեցուց թէյչամանները: Թէյը Ռուսաստանի մէջ կերպով մը նոյն պաշտոնը կ'կատարէ, ինչ որ ունի այստեղ օղին, երկուքն ալ հաւատարապէս հաճոյք կուտան, սա տարբերութեամբ որ առաջինն օգտակար նկատուած էր ու միւսը մնասակար, մէկին գործածութիւնը գոհունակութիւն կ'պատճառէ, իսկ միւսը մութութիւն կ'համարուի: Այն ող'ւորութիւնը որք նուագածուց խումը կ'ստանայ հոս քանի մը օղի կոնծելով, այնտեղ կստանայ երկու երեք գաւաթ թէյ խմելով: Պէթ ընտանեկան համախումբներու մէջ այսպէս է ինչպէս եղաւ մեր հիւրընկալ բարեկամին համետ չարկին տակ: «Անցցէ» ներով ու «շատ ապրիք» ներով չայտնեցինք մեր շնորհակալութիւնը, աղնիւ աշուղներուն որք ժամանակ մը Թէֆլիզ մնալ է ետքը, էջմիածին պիտի ուղևորուէին Միւռոնի օձման հանդիսին ներկայ գտնուելու և այնտեղ համախմբեալ ժողովրդեան մէջ երգելու համար:

Մութը կոխած էր և պարտաւոր էի մէկնել, չուղեցի չարաչար գործ ածել այդ բարի մարդկանց հաճոյականութիւնը քանի մը երգ ալ խնդրելով, բայց Աշըխ ձիւան գուշակեց ներքին իղձս և մեկնելու պահուս ըսաւ:

—Անց, եղբայր, մէկ թէյ էլ խմենք ու ընդ երգեմ Այծեամին երգը:

Իր երգածներուն մէջ ամենէն տխուրն էր այդ: Աւարտիկ քանի մը տողեր զոր չուշատետրիս մէջ կը գտնեմ:

### Ա Յ Ժ Ա Մ Ն.

Անհոգ ես չես դիտեր ինչ կայ քո մասին,

Պատուժ են քո խեղճ լէ լէ լէ լէ անձիդ մնասին.

Գամբռներով բարակներով միասին,

Փախիր, այծեամ, փախիր որսկանն է դալիս

Չագուկներդ տխուր լալիս են լալիս:

Գուրս մի ելեր դու խիտ անտառից ընաւ,

Քեզ կը վերաւորեն կըստանաս մեծ ցաւ.

Գաշտուժը չես ման գար թէ մտածես լաւ.

Փախիր այժեամ փախիր, որսկանն է դալիս,  
Չագուկներդ տխուր լալիս են լալիս:

Որսկանը գուժ չունի կանէ կրակը,

Կամ քեզի կսպաննէ կամ քո զաւակը,

Ձուր չի անցնիր հրացանի գնդակը:

Փախիր, այժեամ, փախիր, որսկանն է դալիս  
Չագուկներդ տխուր լալիս են լալիս. . .

Նոյն գիշերը քաղաքին ամառնային գլիւպը գնացի. . . . կէս գիշերն անցած, երբ կ'հեռանայի ամառնային քլիւպէն, այնտեղի տեսածս Աքացւոց պարն ու զինուորական երաժշտութեան արձագանքը կ'անհետանային ջանկարծ. վայրկենի մը մէջ կ'մոռնայի պարտիզին հրապուրիչ տեսարանը, ու անոնց տեղ կ'ջաջորդէր մտքիս ու սրտիս մէջ Աշոխ-ձիւանի համակրելի պատկերը ու կըկարծէի լսել իր Այժեամին երգը որ Թիֆլիզի լայնարձակ ու ամաչացած փողոցներուն մէջ կը հալածէր զիս իր ողբազին «Լէ Լէ Լէ Լէ» ներով:

Տիգրան Արփիարեան.

«Արեւիչ» 1891 թիւ. հայիսի 18:

Աշրդ-ձիւանին վերջերուսն Ալէքսանդրապոլի աշուղներին և երգիչ-երաժիշտներին նշանակում է արհեստաւորաց զլուխ (ուստապաշի) նա հիմա իւր խմբի մէջ ունի երկու աշուղ՝ Ջամալի և Իւշարի:

### Ե Ր Գ Ը.

Մի աստղ ծնաւ արևելքէն լոյս ունէր առատ,

Բոլոր աստղերի մէջ մէկ էր չունէր համեմատ:

Սե սե ամպեր շուտ պատեցին չ'թողին ազատ,

Խաւարի մէջ անհետացաւ լոկ զիծը մնաց.

Աստղադիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց:

Այդ աստղերը հինգ քոյր էին մէկը չունէր յոյս,  
Զորսը արևի շնորհիւ առան խրատոյս.

Առաջինին ոչ մի տեղից տուող չեղաւ յոյս,

Խաւարի մէջ անհետացաւ լոկ գիծը մնաց,  
Աստղագիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց:

Եթէր փայլուն մեծ մեծ աստղեր ժողովան գու՛մար,  
Լուսնից ասպարէզ ու ղեցին չորս աստղի համար,  
Արևելքէն ծնուող աստղը մնաց ի՛շուսր:

Խաւարի մէջ անհետացաւ լոկ գիծը մնաց,  
Աստղագիտած սրտերու մէջ կսկիծը մնաց:

(անտիպ.)

\* \* \*

212. **Ֆիզահի** պ. (լաց աղաղակ) իսկական անունը Քէորգ. ծնուել է 1847 թուականին Ալէքսանդրապոլում: Քէորգը մանուկ հասակում ընտանեկան շրջաններում սովորում է գրել կարգալը: Աչքերի ցաւը արգելք է լինում շարունակելու իւր աղբատիկ ուսումը. նրա հայրը խեղձ մարդ լինելով տալիս է իւր որդի Քէորգին աշուղների մօտ աշակերտ: Աշուղները Քէորգի անուանում են Ֆիզահ. նա սովորում է ջութակ և սազ անուն և սկսում է գրել բանաստեղծութիւններ:

Ֆիզահը մի ժամանակ էլ Փուրգունձի (կառապան) է դառնում և անցնում է Տաճկաստան. այնտեղ յաջող գործ է ունենում (որովհետեւ Փուրգունը դեռ նոր էր յայտնւում այն կողմերում) Տաճկաստանի մէջ երկար ման է գալիս. գնում է Պոլիս, Տրապիզոն և վերջապէս գալիս է նորից Ալէքսանդրապոլ և մինչև հիմա պարապում է աշուղութեամբ:

Ե Ր Գ Ը.

Զանք արա, օրերդ իզուր չ'անցանի,



Մարդ եղիւր բանական, անբան մի լինիր.  
Անմիտ ընկեր, ես քեզ խրատեմ քանի,  
Միշտ չար է բանական, անբան մի լինիր:

Անբան մարդը որքան որ հարստանայ,  
Բանականի գործից բան չի իմանայ.  
Նա յիմարաց դասի մէջը կը մնայ,  
Գործ ձարէ հիմնական, անբան մի լինիր:

Տեսար որ մի մարդից քեզ կ'զայ վնաս,  
Նրա հետ մի խօսի բարեւոյ էրա պաս.  
Ֆիզահու պէս ստոր օրի չ'մնաս,  
Նղիւր աստանդական, անբան մի լինիր:

(անտիպ)

\*

\* \*

213. **Զամալի.** կամ ձամալ ա. (մարդակերպ, նմանութիւն) իսկական անունը Մկրտիչ. ծնուել է 1848 թուականին, Ալէքսանդրապոլում: Սա իւր սկզբնական ուսումը ստացել է մի մասնաւոր ուսումնարանում և ապա աշակերտել է կօշկակարութեան իւր հայր Յովհաննէսի մօտ: Մի քանի ժամանակից յետոյ ունեցել է գինեվաճառի կրպակ, որին կից և մի սրճարան: Այդ սրճարանում մշտապէս երգելիս է եղել մեր այժմեան Հայերէն բանասիրտ Աշըղ-Ջիւանին: Ձամալին (Մկրտիչը) հետաքրքիր լինելով աշըղութեան արհեստին, սկսում է կամաց կամաց իրանից երգեր յօրինել և միևնոյն ժամանակ սովորում է սազ ածել: Անցնում է մի քանի ժամանակ և բաւականին տեղեկանում է այդ արհեստին: 1872 թուականին, Ձամալին որոշում է հաստատապէս պարապելու աշըղութեամբ և այն օրից մինչև այժմ ընկերացած է Աշըղ-Ջիւանու հետ: Իսկ այժմ ածում է Սանթուրի վրայ:

«Սոխակ» դ. Աղ. Մխիթարեանց.

## Ե Ր Գ Ը.

Համայն աշխարհի մարդիկը, իրանց եսն ու պատիւն ունին,  
 Նա և զոյութիւն պահելու համար վէճ ու կռիւ ունին.  
 Այնպիսիքը բաղդաւոր են, որոնք պաշտպան հովիւ ունին,  
 Կապրին իբրև մարդ կատարեալ, մարդկութեան մէջ հաշիւ ունին.  
 Բայց կան շատերը անպաշտպան, իրանց ցաք և ցրիւ ունին,  
 Եւ երջանիկ կեանքի մէջ չեն իսկ ցաւերը անթիւ ունին:

Մարդը ծնուել է Արարչից, պարգևաճը վայելելու,  
 Աստուածային հրամանով, ճակտի քրտամբ աշխատելու.  
 Բայց շատերը սովորել են ուրիշի հաշուով ապրելու,  
 Բռնի ոյժ կամ խարդախութիւն կամ զրկանքներ գործ դնելու:  
 Համայն աշխարհի և այլն.

Մէկը ազնիւ ճանապարհով հագիւ կարող է հաց ձարել,  
 Իրա տունը գերդաստանը մարդավայել կ սոսաւարել.  
 Միւսը ստոր միջոցներով հարուստ մեծատուն է դառել,  
 Հազարաւոր մարդկանց կապել կաշկանդել է գերի ալել:  
 Համայն աշխարհի և այլն:

Չամալի Աստուծոյ մօտը բոլոր մարդիկ հաւասար են,  
 Ազատ ստեղծեց ամենքին իրանք իրանց զեկաւարեն.  
 Ոչ թէ ուժովը անոյժին զրկեն դռփեն ու աւարեն,  
 Յետոյ օրէնքի անունով ցոյց տան իբրև թէ արդար են:  
 Համայն աշխարհի և այլն:

\*

\* \*

214. Մագաշի (արժանաւոր) իսկական անունը Աղաջան.  
 Ծնուել է 1848 թուականին, Նոր-Բայազէզի Աշխա գիւղում:  
 Մանկութեան հասակից Աղաջանը փափակ է ունեցել երգելու և  
 ածելու և նրա ձայնը եղել է քաղոր: Աղաջանին տեղացիք ա-

տում են Փարոյի Աղաջան. նրա մօր անունը Փարի լինելու պատճառով: Սաղային 1867 թուականին Քիֆլիսում պատահում է Ջիւանուն, որի հետ գալիս է Ալէքսանդրապոլ: Այժմ Սաղային Նոր-Բայազէտումն է բնակւում:

### Ե Ր Գ Ը.\*)

Տասը տարին լրացաւ չունիմ մէկ նամակ ով Ջիւան,  
 Եթէ ճոխարան չկար գոնէ հասարակ ով Ջիւան.  
 Մէկ նայես պանդխտներին ի՞նչնէ նրանց մխիթարիչ,  
 Բացի նամակ ի՞նչ ունին սիրոյ յիշատակ ով Ջիւան:

Մեր բաժանման պատճառը ի՞նչ էր հողով արդար դատէ.  
 Գուցէ իմ մեղս լինի չեմ ես հակառակ ով Ջիւան  
 Երկու եռանդուն սէր երբ յանկարծ իրար հանդիպեն,  
 Այլ նրանց ինչ հարկաւոր լուսին արեգակ ով Ջիւան:

Ես կարօտութեան ցաւակից գիշեր ցերեկ հանգիստ չունիմ  
 Առարէ մխիթարիչ բո յոյս փոխանակ ով Ջիւան.  
 Ձեռ լինում դու Սաղայիս երբէք ցաւակից չես լինուի,  
 Թող մնամ ես մշտական թշուառութեան տակ ով Ջիւան:

(անսխիւտ)

\* \* \*

215. **Գեօգարի** պ. (աղւ ր, գեղեցիկ, չքնաղ) իսկական անունը Նահապետ. ծնուել է 18 . . թուականին Ալէքսանդրապոլի մեծ-Քեափանակ գիւղու Ռե Սճելիս է եղել մաղ և բացի աշուղութիւնից պարապելիս է եղել և սափրիչութեամբ: Ամուս-

\*) Այս երգի ձև նամակը Սաղային 1884 թուականին ապրիլի 17-ին ուղարկել է Աշրղ-Ջիւանուն. ինչպէս մենք գրել ենք թէ աշուղները սովորութիւն ունին իրար նամակ գրելիս, ստանաւորով գրել.

նացել է Ալէքսանդրապոլում մի այրի կնոջ հետ: Գեօղալին մե-  
ռել է 1887 թուականին Ալէքսանդրապոլում:

### Ե Ր Գ Ը.

Չեռքես բռնես քովդ տանես,  
Նոր գիտեմ որ բանական ես.  
Քաղցր լեզու անուշ ջան ես,  
Գու ինձ համար միշտ լացեցիր:

Սրդիդ վրայ շունես խնամ,  
Վատ խօսքերուդ երբ դիմանամ.  
Գեօղալին եմ բան կիմանամ,  
Էդ դօշըդ ինչի՞ բացեցիր:

(անսխիւ)

\*

\* \*

216. **Շահիր-Խաչատուր** (բանաստեղծ-Խաչատուր)  
Այժմ Դէրպէնդումն է: Հակառակ մեր ցանկութեան, սրա մասին  
ոչ մի տեղեկութիւն չ'ենք կարողացել հաւաքել: Բայց լսել ենք  
որ աշուղութեամբ է պարապում:

### Ե Ր Գ Ը.

Առանք ուսում, կրթըրուեցինք զարգացանք  
Որտեղ գնանք ի՞նչպէս անենք ի՞նչ անենք.  
Գորա վերջն ի՞նչ կ'լինի չ'իմացանք,  
Որտեղ գնանք ի՞նչպէս անենք ի՞նչ անենք:

Զարգացումն տուաւ մեզի նուրբ ճաշակ,  
Ուփորցրաւ կեանքի անուշ եղանակ.  
Որի համար չենք գտնու Մ մենք շրջանակ,  
Որտեղ գնանք ի՞նչպէս անենք ի՞նչ անենք:

Մանաւանդ ուսումն էլ որ առանք թերատ  
 Աչ հնից ոչ նորից եղանք հաստատ.  
 Անցեալից էլ վիճակներս եղան վատ,  
 Արտեղ գնանք ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք:

Պէտք է կրթել տղերք, յետոյ աղջիկերք,  
 Կրթան աղջիկերք չը կրթաց տղերք.  
 Շուարել ենք մնացել ենք հիմի մենք,  
 Արտեղ գնանք ի՞նչպէս անենք ի՞նչ անենք:

Լաւն էն ա գնանք մօտ Խաչատուրին,  
 Կարելի է այդ հարցը նա վճռի.  
 Յանձնենք ինչպէս ուզում է որ գրի,  
 Արտեղ գնանք ի՞նչպէս անենք ի՞նչ անենք:

Խաչատուրն ի՞նչ վճիռ տայ այդ հարցին,  
 Անհնար է ճար անել էլ անցածին.  
 Կենդանութիւն տալ չի լինիլ մեռածին,  
 Արտեղ գնանք ի՞նչպէս անենք ի՞նչ անենք:

«Հանդէս գրական. և պատմ.» գիրք դ. կոճ 7 տ.

217. **Խոչարի** ա. (արթուն) իսկական ածուեր Խաչատուր. ✓  
 ծնուել է Ալէքսանդրապոլում 1850 թուականին: Պատանի ժա-  
 մանակ մտնում է մազմանի (թոկ շինող) աշակերտ. այդ տեղից  
 էլ դուրս գալով մտնում է դարբնի գործարանում: Այդ տեղ էլ  
 համարեայ բան չ'հասկանալով դուրս է գալիս: 20 տարեկան էր երբ  
 սովորեց թառ ածելը և սկսեց պարապել աշուղութեամբ: 1876  
 թուականին ամուսնացել է: 35 տարեկան հասակում նա մի  
 մասնաւոր մարդուց սովորել է գրել կարգալը և հէնց այդ ժա-  
 մանակից սկսել է գրել երգեր և ոտանաւորներ:

Իւշարին մինչև այժմ էլ Ալէքսանդրասպողումն է. պարա-  
պում է աշուղութեամբ: Վերջերս մտաւ Աշուղ-Ջիւանու խմբի  
մէջ:

### Ե Ր Գ Ը.

Հազար ութը հարուր սաքսանը հինգ թւին  
Մէկ տունմ ունէինք թուրքի դռները.  
Սխմիշ կեղնէինք ամենս մէ թին,  
Մէկ քեօշէն մէնք էինք մէկը գառները:

Օրմ մարտի ամսուն փուրղուն շատ էկաւ,  
Փուրղունի մէկն էկաւ մեր պատին դիպաւ.  
Տունս էն սհաթը բլաւ վար թափաւ,  
Ձեռքս ծոցս մնացել եմ գռները:

Ախպրտիք չը խնդաք, ըսեմ ընտիրը,  
Տունս բլաւ հողը լցուաւ թնտիրը.  
Գունն է մնացել հացիս գնտիրը,  
Իլլաճ չ' կայ տանիմ էփիմ փռները:

Թէ որ գառնուկներէս գուզիք պատասխան,  
Տունս բլաճ տեսան, կայնան զարմացան.  
Բոռբռացին ճրվճրուացին յետ փախան,  
Թազմիշ էղան մէկ մէկ յելան լեռները:

Աստուած էնքան չառնի Իւշարուս հողին,  
Փուրղունձին յաաստ գայ ամռան էն շողին  
Բեռը ծանար էղնի ձիանը շողին,  
Փուրղունը կոտրտի մնայ բեռները:

(անսխիւտ.)

218. **Խաչար** ա. (դերձակ) իսկական անունը Սուքեաս. ճնուել է 1854 թուականին փետրուարի 7-ին: Դեռ պատանի հասակում Սուքեասը հետևում է իւր հօր Աշըղ-Չահրու գրուածքներին և այդպէս ինքնուս կերպով առաջ է դալիս: 10—12 տարեկան ժամանակ Սուքեասը իւր ցանկութեան համաձայն մտնում է մի դերձակ վարպետի մօտ. կաշի՞ ժամանակից յետոյ իւր սեփական կրպակ է բաց անում և այնտեղ իւր ազատ ժամերին սովորում է մասնաւորապէս սազ ածել և դրա հետ էլ ինչպէս ամեն աշուղ անում է, նա էլ գրել է երգեր բանաստեղծութիւններ. աշուղական ձևերը վաղուց արդէն սովորած լինելով իւր հօրից:

1873 թուականին նա ամուսնանում է Ալէքսանդրապոլում:

Խաչար մի ժամանակ էլ Թիֆլիսում է աշուղութեամբ պարապել և յետոյ էլ «Մեղուի» խմբագրատանը ծառայել է ցրիչի պաշտօնով:

Վերջին տարիներս 1888 թուականին, նա Թիֆլիսում պարապում էր դերձակութեամբ իսկ հիմայ էլ նոյնպէս Ալէքսանդրապոլում պարապում է դերձակութեամբ և մերթ աշուղութեամբ:

### Ե Ր Գ Ը.

Ո՛ւստի յանկարծ, ով դու բաղձ աղէտարեր եկար աւանդ Մեր միջօրեայ լոյսը դու փոխարկեցիր խաւար աւանդ. Թանգազին կորուստների ենթարկուեցանք հալածանքից, Վերստին ձեռք բերելու ոչ յոյս կայ ոչ հնար աւանդ. Վերքերիս մէկը կեղև դեռ չէր կապել, կրկին 'ի քէն Սյնպիսի վերք ստացանք անբուժելի անձար աւանդ. Ո՛վ որոշեց անիրաւ այս երկրի մէջ բո կենդրոնդ, Որ եկար իսկ տանելու կեանքերը մեր աւար աւանդ: Հինգ դար է լրիւ արդէն մեզ հետ հակառակ վարուելդ,

Ո՛հ Խայաթս չեմ տեսած բարիք քեզանից աւանդ:

(անպիտ)

119. Պաշտօնէ հ. իսկական անունը Վարշամ. ծնունդ է 1859 թուականի նոյեմբերի 15-ին Լոռու: Մկրտունք է նոյն գաւառի Գիւլաքեարակ գիւղում Ս. Աստուածածին եկեղեցում: Հայրը ալէքսանդրապոլցի Մարտիրոս Տրդատեանց, մայրը Շահինեաններէց: Վարշամին 7 տարեկան հասակում բերում են Ալէքսանդրապոլ. նա սովորում է գալիլ Պետրոս Մատնիշեանի (այժմ բաճահայ) մօտ: Աչքացաւը արգելք է լինում Վարշամին ուսումը շարունակելու. ծնողները տալիս են նրան դերձակութեան աշակերտ. մինչև 12 տարեկան դառնալը սովորում է այդ արհեստը. բայց հասակի փոքրութեան պատճառով (որ չէր կարող առանձին կրպակ բանալ) մնում է վարպետի մօտ: Վարշամի հայրը իւր որդու հետ խիստ բռնի վարուելու համար, Վարշամը գընում է Ախալքալակ որ այնտեղ բանի իւր արհեստով, բայց երբ լսում է որ իւր Ախալքալակում լինելը ծնողներին յայտնի է, փախչում է Թիֆլիս: Թիֆլիսում նա երկու տարու շափ մնալով, վերադառնում գալիս է մեծ-Աարաքիլիսա գիւղը, 3 տարի էլ այդ տեղ է պարապում դերձակութեամբ: Դեռ 1876 թուականի վերջերից երբ Ռուս-Թրքական պատերազմը դեռ նոր էր սկսում, Վարշամի հայրը գնում է Բայազէդ կամաւոր զինորութեան: Պատերազմի ժամանակ Վարշամի մայրը իւր ամուսնոյ մասին անհանգիստ եղած և ստացած լուրերին նայելով, հաւատում է որ իւր ամուսինը սպանուած կամ գերի բռնուած կ'լինի: Հէնց այդ ժամանակ նա վշտացած կերպով մի նամակ է գրում Վարշամին, յայտնելով նրա հօր ցաւալի մահը և իւր անմխիթար մնալը: Արդին կարգալով մօր ցաւակցական նամակը, չի կարողանում անհետևանք թողնել, ուղղակի թողնում է ամեն բան, և աշխատում է շուտով հաս-



ներ, իւր մօր մօտ մխիթարելու և միասին սգալու իւր հօր մահուան համար: Համարեայ մի ամիս չ'անցած Վարչամի հայր Մարտիրոսը յայտնուում է, որը մի կերպ կարողացել է ազատուել թշնամու հալածանքերից: Նա ա չանցած հայր և որդու մէջ ընտանեկան երկպառակութիւնները նորից տեղի են ունենում: Վարչամը չ'կարողանալով տանել հօր խիստ վարմունքները, նորից ձեռք է առնում պանդխտութեան դաւազանը. գնում է Ռուսաց բանակի յետևից: Այդ ժամանակ Վարչամը 18 տարեկան էր: Հասնում է Ղարս և այնտեղ մի կրպակ վարձելով, շարունակում է իւր ընդհատուած գործը (դերձակութիւնը): Ղարսում նրա գործը յաջող ընթացք է ունենում. բանեցնում է մօտ 10—15 բանւորներ:

Մի օր գործատանից Վարչամը իւր բնակարանը վերադառնալիս յանկարծ մի տան դրռան առաջ տեսնում է մի օրիորդ. նրանք իրար նայելիս օրիորդը ներս է քաշում իսկ մեր Վարչամը ջերմ կերպով սիրահարւում է այդ աղջկայ վրայ: Այդ բանը տեսնում է մի ամբողջ տարի. դարսեցիներից շատերը լսում են այդ բանը բայց Վարչամի Ղարսում եղած ազգականները, որոնց մէկի տանը բնակւում էր նա, արժան չեն տեսել որ Վարչամը իւր մտադիր օրիորդի հետ ամուսնանայ. օրիորդի հասարակ դասակարգից լինելու համար: Աւստի նրանք Վարչամից գաղտնի նամակ են գրում Ալէքսանդրապոլ նրա հօրը ուստա Մարտիրոսին որ երբ իրանք Վարչամին կ'ուղարկեն Ալէքսանդրապոլ, թող նրան արգիլեն: Վարչամը Ղարսից դուրս գալով, հետևեալ օրը հասնում է Ալէքսանդրապոլ. մտնում է իւրեանց տունը բարւում է և հարցեր առաջարկում ծնողներին թէ ինչո՞ւ համար են կանչել իրան: Մի քանի ժամ չանցած յանկարծ Վարչամի միտքն է ընկնում իւր սիրուհին և բաժակը թէյով լի առաջը թողած, դուրս է գնում: Հայրը որդու դիտաւորութիւնը հասկանալով նրա յետևից ուղարկում է իւր փոքր որդուն Յարութիւնին որ երբ Վարչամին տեսնի ասէ թէ «գնանք, քեզ նամակ կայ ստացիր»:

Վարչամի հայրը անմիջապէս պատրաստում է մի նամակ Գիւլաքեարակ գիւղի տէր Յակովբ Շահինեանի ստորագրութեամբ, որը Վարչամի քեռին էր (մօրեղբայր) իբր թէ տէրտէրը նրան կանչել է իւր մօտ մի հարկաւոր գործի:

Վարչամին իւր եղբայրը Ղարսի ճանապարհից յետ է դարձնում յայտնելով որ «քեզ քեզ նամակ է եկել» Վարչամը եղբօր հետ տուն գնալով կարդում է հօր տուած նամակը և տեսնում է որ իւր Գիւլաքեարակ գնալը անհրաժեշտ է, ուստի պատրաստում է և ճանապարհ ընկնում: Վարչամի հայրը հեռագրով իմաց է տալիս տէր Յակովբին որ ինքը Վարչամին ուղարկում է, թող նրան մի գործով պարապացնեն և արդիլն վերադառնալու:

Վարչամը 6 ամիս մնում է այդ գիւղում խիստ հսկողութեան ներքոյ: Մի օր նա խնդրում է իւր քեռի տէր Յակովբին որ թոյլ տայ իրան գնալ գոնէ Ջալալ-Յղլի այնտեղ դերձակութեամբ պարապելու:

Քահանան ուրախանում է իւր քրոջ որդու այդ բարի առաջարկութեան վրայ, և մի քանի տասնեակ մանէթ տալով, ճանապարհ է ձգում դէպի Ջալալ-Յղլի, որ շատ հեռու է. նրա հետ միասին ուղարկելով և իւր որդի Վահանին, որ հոգայ այնտեղ Վարչամի արհեստին վերաբերեալ բոլոր պիտոյքների ծախսերը: Վարչամը այնտեղ էլ մի առժամանակ գործի եղաւ, բայց բոլորովին չ'մոռացաւ Ղարսում իւր սիրած օրիորդին, որի սիրուցը և սովորել էր չունգուր ածելը:

Երկու երեք օր անցած արդէն միամտացել էին Շահինեանները և առաջուայ պէս խիստ չէին վարւում նրա հետ: Վարչամը տեսնելով իւր մասնաւոր ազատ լինելը, անտեղից վախճելու հնար էր մտածում:

Մի օր ձաշն անցած Վարչամը չունգուրը ձեռքն առած ինքնիրան միսիթարեղու համար իջաւ պարտէզ մի քիչ ածելու: Երաժշտութեան ձայնից խորասուզուած, նա կորցնում է իւր քայլերի ընթացքը անցնում է պարտեզի ցանկապատը և հասնում

է անտառ: Երբ ծառերի խառնածիւնը արդելք է լինում նրան առաջ գնալու, Վարչամբ նոր է զգում որ շատ հեռացել է. չորս կողմն է նայում տեսնում է որ մարդ չ'կայ, մտածելով որ լաւ միջոց է փախչելու շտապում է ընկնել ուղիղ ճանապարհը. նա մինչև օրը մութը կոխելը նա հասնում է Համամի կայարանը: Վրչերն այնտեղ չէ մնում այլ բարեբախտաբար արէքսանդրապոլցի մի ճանապարհորդի պատահելով, նստում է նրա կառքին և հետևեալ օրը մտնում է Ալէքսանդրապոլ: Բոլորովին իւրեանց տունը չ'հանդիպելով, ընկնում է ճանապարհ դէպի Ղարս: Վերջապէս կէս հետևակ, կէս բարի մարդկանց կառքերով հասնում է Ղարս և ինչ է տեսնում մեր խեղճ սիրահարը. որ իւր սիրուհուն, արդէն նշանել են մի ուրիշ երիտասարդի հետ: Վարչամբ մնում է խելագարի նման ման գալով և որքան կարելի է աշխատում է մոռանալ իւր սիրուհուն, որովհետև արդէն բանը բանից անց էր կացել: Բոլորովին յոյսը կտրած վերջացնում է այդտեղ իւր խանութը որ առաջ թողել գնացել էր. դուրս է գալիս Ղարսից, և մի բանի երիտասարդների հետ խումբ կազմուելով անցնում է Տաճկաստան, և ո՛վ գիտէ էլի ինչո՞ւ կամ ում վրայ նրանք սիրահարուելով, գնում են Վան և այնտեղից էլ մի բանի տեղեր ման գալով վերդառնում են Ալէքսանդրապոլ:

Երբ Ալէքսանդրապոլում յայտնուում են Վարչամբ և իւր ընկերները, մարդիկ հաւաքվում են նրանց գլխին և սկսում են զանազան հարց ու փորձեր առաջարկել նրանց: Սուքեաս Զահրիեանցը (Աշուղ-Սայաթ) որ Վարչամի վաղեմի մտերիմն էր, նրա հետ միասին մտնում են մի սրճարան: Այնտեղ նստած են լինում Զահրի, Նանդունի և Հաւէսի աշուղները, որոնք Վարչամին բարեկեց յետոյ զանազան հացեր են անում նրան. նա էլ իւր գլխի պատահած նշանաւոր անցքերը որ ոտանաւորի ձեով առաջուց պատրաստած է եղել, ասում է: Աշուղները բաւականին հաւանում են Վարչամի տաղանդին և գիտենալով որ նա էլ լաւ ածել գիտէ չունդուրի վրայ, վճռում են մի աշուղական անուն տալ նրան. մանաւանդ որ Վարչամին էլ շատ ցանկալի է

եղել 'այդ քանը: Նրանք սկզբում առաջարկում են ըստ սովորա-  
կանին մի քանի Թուրքերէն անուններ, բայց նա մերժում է ա-  
սելով որ ես հայերէն անուն կուղեմ: Աշուղները պնդում են թէ  
չի կարող պատահել, որ հայերէն անուն լինի: Բայց Խայաթը  
նկատում է թէ՛ որովհետեւ մեր Վարչամի խօսքերը պարզ են և  
պայծառ, թող սրա անունը լինի «Պայծառ է» Թէ աշուղները և  
թէ Պայծառէն (Վարչամը) հաւանութիւն են տալիս անունին  
և առաջինները օրհնելով վերջինին, ճանապարհ են ձգում:  
Պայծառէն ստանալով «աշուղ» անունը, դուրս է գալիս սրը-  
ճարանից:

Մինչև 1883 թուականը Պայծառէն պարապում էր դեր-  
ձակութեամբ (միւսնոյն ժամանակ ոտանաւորներ գրելով): Այդ  
թուականին ամուսնում է Ալէքսանդրապոլում:

1885 թուականին նա սովորեց թառ ածելը և սկսեց  
պարապել աշուղութեամբ: Նա մինչև հիմայ էլ պարապում է  
Ալէքսանդրապոլում թէ դերձակութեամբ և թէ աշուղութեամբ:  
Նա դերձակութեան լաւ վարպետ է. բայց այն ախտը որ բոլոր  
դերձակներին մանաւանդ «նոր ձևի» կարողներին կարծես ժառան-  
գական բան է դարձել, մի քիչ էլ մեր Վարչամի (Պայծառէի)  
մօտ կ'դտնուի: Այդ ժառանգական ախտը դերձակների համար  
ստախօսութիւնն է:

## Ե Ր Գ Ը.

Իբրև Արաքս ես հոսում եմ,  
Ո՛ւր է պահապանդ պարտէզ.  
Զ'ջրուելուդ ախտսում եմ,  
Ո՛ւր է պահապանդ պարտէզ:

Ահա անգութ արեգակը,  
Քո մէջ լցնում է կրակը.  
Այրում է մինչ քո յատակը  
Ո՛ւր է պահապանդ պարտէզ:

Ծաղիկներդ խոնամում են,  
 Վարդերդ օտարք տանում են.  
 Սոխակներիդ վանդակում են,  
 Ո՛ւր է պահապանդ պարտէզ:

Պտուղդ ծառդ չորացաւ,  
 Մեծ անունդ ստորացաւ.  
 Միթէ՞ բախտը քէզ մոռացաւ,  
 Ո՛ւր է պահապանդ պարտէզ:

Զ՛կար քեզ նման բուրաստան,  
 Բայց ծաղիկներդ օտարք տարան.  
 Սոխակներդ ո՛ւր կ'կարդան,  
 Ո՛ւր է պահապանդ պարտէզ:

Դու մեծահարանչ պարտէզ էիր,  
 Իմ նախնեաց ասպարէզ էիր.  
 Ծառդ միշտ կանաչ կուղէիր,  
 Ո՛ւր է պահապանդ պարտէզ:

Ինձի վարձել է քո տէրդ,  
 Որ ժողովեմ ծառներդ.  
 Նորոգենք հնացեալներդ,  
 Ո՛ւր է պահապանդ պարտէզ:

Պայծառ է ճրդատեանցս մենակ  
 Քո մասին ողբում եմ անյազ.  
 Մինչև երբ մնաս աւերակ,  
 Ո՛ւր է պահապանդ պարտէզ:

(Ա. Նախիկ)

\*

\* \* \*

220. **Ֆերեստի** պ. (աղերսող բողոքող) իսկական անու-  
 նը Խաչատուր. ծնունդ է 1867 թուականին Ալեքսանդրապոլի  
 Գիրեքլէր գիւղում: Նա երեք տարեկան հասակում աղկացաւից  
 կուրանում է: Ծնողները նիւթական կողմից լաւ միջոց ունենա-  
 լով տուել են որդուն Առշափանք գիւղը մի աշուղի մօտ սովո-  
 րելու: Պատանի Խաչատուրը սուր և ըմբռնող ձիրք ունենալով,  
 երկու տարուայ մէջ լաւ սովորում է սապ ածելը. նա դարձեալ  
 իրան անբաւական համարելով ծնողներին թախանձում է որ ի-  
 րան տան մի լաւ վարպետ աշուղի մօտ: Ծնողները տեսնելով  
 իւրեանց որդու յառաջադիմութիւնը, բերում են Խաչատուրին  
 Ալեքսանդրապոլ և տալիս են նրան Աշղ-Ֆիղահու մօտ աշա-  
 կերտ: Խաչատուրը սովորում է թէ սազի և թէ ջութակի վը-  
 րայ և դեռ 15 տարեկան ժամանակից սկսում է գրել աշուղական  
 երգեր ու բանաստեղծութիւններ. այդ ժամանակ ինչպէս սովո-  
 րութիւն է եղել ամեն մի արհեստաւոր վարպետի երբ որ ա-  
 շակերտը կատարելագործւում է արհեստի մէջ, նրան «ուստա» են  
 հանում (այսինքն համբերարի մէջ վարպետ է ճանաչւում): Աշղ-  
 Ֆիղահին տեսնում է որ իւր աշակերտ Խաչատուրը այնուհետև  
 ընդունակ է վարպետ կոչուելու, կարգադրում է այդ մասին ա-  
 մենը ինչ որ հարկաւոր է նրան վարպետացնելու: Հաւաքւում  
 են վարպետ աշուղները, երգիչները և նրան մի վկայական են  
 տալիս աշուղական շրջանի մէջ մտնելու: Սրինակի համար ա-  
 ռաջ ենք բերում այստեղ Խաչատուրին տուած վկայականի պատ-  
 ճէնը առանց փոփոխելու:

**Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն**

Ք հազար ութն հարիւր ութանասուներ չորս ամի 18 ապրելի.  
 Ալեքսանդրապոլում:

Ես 'ի ներքոյ ստորին ստորագրեալս Ալեքսանդրապոլի բնա-  
 կիչ Գեորգ Կարապետեանս (Աշղ-Ֆիղահի) տալիս եմ զայս վկա-  
 յականս սոցն գաւառի Գիրեքլէր գիւղի բնակիչ Խաչատուր Գեորգ-

եանին առ այն զի, նա ծառայելով ինձ մօտ աշուղութեան արհեստին հաւատարմութեամբ, այժմ սովորած լինելով, արժան համարեցինք ուստա հանել և ներկայ եղեալ 'ի ներքոյ գրեալ վարպետներէ հետ, օրհնեցինք մեր ասնաֆական կարգով և տունք աշուղութեան մախլաս Աշըղ-Ֆէրեատի: Այլ և խնդրում ենք Ամենակարողն Աստուած՝ տասցէ շնորհ, համեստութիւն և բարեանուն 'ի պարծանս իւր, և մեր արհեստաւորաց ամեն:

Առ որ ստորագրեմք

Գէորգ Կարապետեանց (Աշըղ-Ֆիղահի)

Սէրովբէ Լեոնեան (Աշըղ-Ջիւանի).

Մկրտիչ Տալեան (Աշըղ-Ջամալի).

Կարապետ Կարապետեան (Աշըղ-Ջահրի).

Լեոն Լուսաւորչեան (Երգիչ),

Խաչատուր Ալէքսանդրեան (Երգիչ).

Յարութիւն Հաշտեան (Երգիչ),

Ներկայ եղեալ Խաչատուր քահանայ Քեաւաշեանց.



Ֆէրեատին (Խաչատուրը) առնելով աշուղներինց իւր ցանկացեալ վկայականը և օրհնութիւնը, 1884 թուականին անցնում է Տաճկաստան: Պատահելով մի քանի հայաշատ քաղաքների, հասնում է Կ.-Պոլիս: Մի քանի ժամանակ Կ.-Պոլսում մնալով, վերադառնում է Ալէքսանդրապոլ: 1885 թուականից նրան ընդարձակ ասպարիէզ է բացւում աշուղութիւն անելու. 1888 թուականին ամուսնանում է. այժմ ունի մի որդի:

Աշըղ-Ֆէրեատին թէև առաջ երգել և պատմել է թուրքերէն լեզուով երգեր, հեքեաթներ, բայց այժմ բոլորովին հեռացրել է թուրքերէնը: Հիմա երգում և պատմում է Հայերէն. և բացի դրանից պատմում է ժողովրդին Րաֆֆիի «Խենթը» «Ջալալէղղիներ» «Սամուէլը» «Կայծերը» և այլն. Մերենցի «Նրկուհի»

բը» Պ. Պառչեանցի «Կռուածաղիկը»: Նա ամեն մի պատմութեան մէջ յարմարցնելով պատշաճաւոր երգեր, երգում է. մենք անցեալներում «Նոր-Բար» ում գրել էինք Ֆէրեատու մասին (տես. «Նոր-Բար» 1890 № 48):

Մինչև հիմա էլ Ֆէրեատին Ալէքսանդրապոլումն է և պարապում է աշուղութեամբ. մերթ այցելելով շրջակայ գիւղերը, ռամիկ ժողովրդի մէջ արծարծելու կենդանութիւն. երգելով և պատմելով ընտիր երգերու պատմութիւններ:

\*

\*

221. **Զուրաշի** (ՎՃիտ) իսկական անունը Յարութիւն կամ Արտեմ. Թիֆլիսեցի. ծնուել է 1865 թուականին. սրա մասին կենսագրական տեղեկութիւններ չեն հասել մեզ:

\*

\* \*

222. **Պատուելի** իսկական անունը Մնովք. ծնուել է 1866 թուականին. Իգտիրու Հախուերիս գիւղում: Սրա մասին ոչ մի բան յայտնի չէ մեզ:

223. **Գիւղեագ-օղի** Մանուկ. Ալէքսանդրապոլ քաղաքի Թէքնելի գիւղից:

224. **Քեանիզի** (զանձարան) Հին-Նախիջև անցի:

225. **Աֆեարի**

\*

\* \*



## Է.

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՁԵՒԵՐԸ ԵՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ:

Ինչպէս որ մեր բոլոր յիշած աշուղների անունները թուրքերէնն, (բացառութիւն են կազմում մի երկուսը Պայծառէ և Պատուելի) այնպէս էլ թուրքերէն են իւրեանց գրած բանաստեղծութիւնների ու երգերի անունները:

Մեր աշուղների անունները թուրքերէն լինելու պատճառը պարզ հասկացում է. այն է՝ որ հին աշուղները սկսած 1600 թուականներից ապրելով թուրքաց երկրում իւրեանց անունները ընդունել են թուրք աշուղներից, թուրքերէն բառեր: Եւ մինչև հիմայ էլ այդպէս շարունակաբար հայ աշուղները մինչև անգամ կովկասցիները իւրեանց մասլախ անունները կնքում են թուրքերէն բառերով: Հարկաւոր չէ զարմանալ որ ռամկական կամ ժողովրդական երգիչները ինչո՞ւ լուսաւոր դարի մէջ էլ դարձեալ հետևելով հին կանոնին և նայելով միւս աշուղներին թուրքերէն անուն են դնում. այդ բանը լինում է և մեր մեծ ուսումնականների մէջ:

Աշուղական երգերի անունները յարմարեցրած է թուրքերէնին նրա համար, որ Ասիական հին եղանակներով երգուի. այսինքն երգերը յարմարեցած են լինում հին եղանակներին: Առհասարակ աշուղական մի սովորութիւն է դարձել այս, որ նրանցից ամեն մինը իւր յօրինած երգի կամ բանաստեղծութեան մէջ անպատճառ յիշում է իւր անունը որպէս զի հասկացուի թէ ում ասածն է:

Աշուղները իւրեանց բանաստեղծութիւնները գրում են 64 տեսակ «վեազին» (չափ կշիռ) մենք առաջ ենք բերում այստեղ նրանցից օրինակներ. մի մի տուն:

## 1. ՄԻԻՍՏԷՉԱՏ.

Երբ որ կը լսեմ իմ նազելուս երգելը մեղմիկ  
Ինձ թւում է բամբիւ.

Չայնը գրաւիչ հրեշտակային խօսերը մեղմիկ  
Սրաիս կուտայ գրգիռ:

Միւստեզատը այսպէս շարունակոււմ է և բացի այն որ ա-  
ռաջին երկու տողերը՝ օրինակի համար սրանը վերջանում է  
«իկ» և «իռ» մասնիկներով, միւս տուներու էլ ա. և գ. տո-  
ղերի վերջի մասնիկները պիտի միակերպ լինին իսկ բ. և դ.  
տողերի վերջաւորութիւնները ա. տան վերջաւորութեան պէս  
«իռ»: Սրա ամեն մի տողը կազմուած կ'լինի 14 վանկից:

## 2. ԱԵԼԷՆՏԵՐԻ ՄԻԻՍՏԵՉԱՏ

Սրա և «Միւստեզատի» մէջ եղած տարբերութիւնն այն  
է, որ սրա բոլոր տողերի վերջաւորութիւնը լինում է մի տեսակ  
վանկից:

## 3. ՄՈՒԽԷՆՄԷՉ.

Այս իմ պապի տանիցը ինձ դուրս արաւ թշնամին,  
եկաւ տեսաւ չը օգնեց իմ սիրելի խնամին.

Ո՛չ, հաւատալ չի լինի հիմիկուայ բարեկամին,

Ինձ այս օրուան հասցրուց նրանից գալած քամին

Մուխէնմէզի ա. բ. գ. տողերի վերջին մասնիկները միա-  
կերպ կ'լինին և դ. տողերի վերջին մասնիկները ևս համապա-  
տասխան կ'լինին միմեանց: Սրա տողերի չափը կ'լինի 11—15  
վանկ:

## 4. ԱԵԼԷՆՏԵՐԻ ՄՈՒԽԷՆՄԷՉ:

Այրդ վարդ ասելով կեանքը գնացել է սոխակին,  
Մէկ օր մէկ ժամանակ չէ հասել իւր նստատակին.

Ափսոս հազար ափսոս նրա սիրելի փափազին,

Որ չէ խնայում խղճալի պատանի հասակին.

Դարձեալ աւաղ ասեմ նրա երգի եղանակին,

Ունայն սիրովը ծաղրատեղ է դառել թութակին:

Ղէլէնտերի մուխէնմէզի ինչ վերջաւորութեամբ որ վերջանում են ա. տան տողերը, նոյն տեսակ են վերջանում և միւս տուների վերջին տողերը: Իսկ նրանց առաջին 3 տողերը լինում են ամեն տունը մի տեսակ ոտանաւորով: Սրա ամեն մի տունը լինում է 6 տողից, իսկ ամեն մի սողը 14 վանկից:

### 5. Ս Է Մ Մ Ա Յ Ի.

Առանց ցաւ աշխարհը երբէք չի լինի այնպիսի մէկ մարդ, Ամենայն մարդ ունի մէկ ցաւ թէ ծերուկ թէ երիտասարդ. Սա աշխարհն է ցաւերու զբաղանքի հողսի զանձարան, Սորա ընծաներուն անշուշտ կ'հանդիպի ամենայն մարդ:

Սէմմայու ա. տան ա. բ. և դ. տողերի վերջաւորութիւնը միատեսակ են, իսկ միւս տուներու բ. և դ. տողերը նոյն վերջաւորութիւնն ունին ինչ որ ա. տունը. միայն ամեն տան դ. տողի վերջաւորութիւնը ինչպէս կուզէ լինի: Սրա ամբողջ սողը կազմուած է լինում 15-16 վանկից: Սէմմային հաղարացի ձգնաւորների պարերգն է. այդ եղանակը այնտեղից է ծնունդ առել ժողովրդի մէջ:

### 6. ՄԻԻՍԷՏՏԷՍ ՍԷՄՄԱՅԻ.

Արի իմ նապելի բամբիշ գեղեցիկ քաղցրախօս լեզու, Դրախտից դուրս եկած յաւերժահարսի պէս սիրուն ես դու Հոտոտելով հոտով լցուաւ հոտաւէտ մուշկ ծծերդ քու, Վառած սիրտս զովացուցիր նման պայծառ առաւօտու. Պառնկներէդ կ'կաթէ միշտ օշարակ կենդանի քաղցու, Յարածամ ընթերակայ ես թէ ժամու և տարածամու:

Միւսէտտէս Սէմմային կ' լինի ամեն տունը 6 տող, առաջին տան վերջի երկու տողերը կ'ըկնւում են միւս տուներու հետ. իսկ միւս տուներու չորս տողերն էլ վերջանում են

միատեսակ մասնիկով: Ամեն մի տողը կազմուած է լինում 15 վանկից:

7. Գ Ա Ջ Է Լ.

Այս պիտի ես շատ սպասեմ իմ սիրելոյս զալստեանը, Խնդրում եմ, ոչ որ չի տալ այս խօքերիս պատասխանը, ե՛րբ կուզայ ինձ ասացէ՛ք վազեմ առաջ երթամ նրան, Ընդունելութեան համար պատրաստել եմ օթեանը:

Գաղէլի բացի այս որ իւրաքանչիւր տան վերջը պէտք է միատեսակ վանկով լինին, և պէտք է ա. տան ա. բ. տողերի վերջերն էլ միակերպ լինին: Սրա ամբողջ տողը կազմուած կը լինի 15 վանկից:

8. Ղ Օ Շ Մ Ա Յ.

Այլոց տունը քեզ օթեան չի լինիլ,  
Աշխատիր քեզ համար օթեան ճարէ.  
Օտարը շատ ունի հաց անուշ գինի,  
Քեզ ի՞նչ օգուտ որ քո բանը դժուար է:

Ղօշմայի ա. տան ա. և գ. տողերը միատեսակ բառով կամ վանկով են վերջանում. միւս տուներու ա. բ. և գ. տողերը իրար նման մասնիկով են վերջանում, բայց նրանց դ. տողերը ա. տան, դ. տողի վերջաւորութեան պէս: Ամբողջ մի տողը կազմուած կ'լինի միշտ 11 վանկից:

9. Գ Ի Ի Պ Է Ի Թ.

Ազգ իմ որքան նկուն մնաս,  
Սիրտս քեզանից չի զատուի.  
Հազար տեսակ չարչարանք տաս,  
Սիրտս քեզանից չի զատուի:

Իւրպէիթի ա. տան բ. և գ. տողերը լինում են միւսնոյն

Նախադասութիւնը, այդ յիշեալ նախադասութիւնը կրկնուած է  
 և միւս տուներու վերջում (գ. տողը) միւս տուներու ա. բ. և  
 գ. տողերի վերջաւորութիւնը համանման մասնիկով կ'լինի: Դիւ-  
 պէիթը լինում է ամեն մէկ տողը միշտ 8 վանկ:

#### 10. ԳԱԶԷԼ ԴԻԻԱՆԻ.

Անպակաս շողշողում է արտիս վերայ սուր ամեն օր,  
 Կսում են ականջներս բոթալի վատ լուր ամեն օր,  
 Օր չեղաւ որ ննջէի հանգիստ խաղաղ առանց ցաւի,  
 Տրվչական է ինձ մնալ տրտում ու տխուր ամեն օր:

Գազէլ-Դիւանու ա. տան ա. բ. և գ. տողերի վերջաւոր-  
 ութեամբ են վերջանում միւս տուներու բ. և գ. տողերը: Բա-  
 ցի այդ, յիշեալ վերջաւորութիւնների վերջի բառերից նախ-  
 ընթացք վերջանում է միւսնոյն մասնիկով, օր. այս ցոյց տուած  
 Դիւպէիթի մէջ «ուր» բառը «ամեն օրից» առաջ: Սա կազմը-  
 ուած է լինում ամեն մի տողը 15 վանկից:

#### 11. ՔԻԻՆ՝ ԱԹ ԴԻԻԱՆԻ.

Աշխատիր կեանքիս հատոր աշխարհի մէջ պայծառ լինիս,  
 Պայծառ արփի արփի արև, արևի պէս վառ լինիս.  
 Սրբութեան պարկեշտութեան կեանքին հետևիր պատուելի,  
 Պատուելի մարդ մարդ կատարեալ, կատարեալ ու գառ լինիս:

Ինչպէս այս տունն է, այսպէս կազմուածքով կ'լինին և միւս  
 տուները. նրանց բ. և գ. տողերն էլ նոյնպէս միատեսակ բառով  
 են վերջանում ինչպէս մեր ցոյց տուած օրինակու Դ «. . . առ  
 լինիս»: Քիւնիաթ-Դիւանու ամեն տան բ. և գ. տողերի մէջ  
 մի բառը 2 անգամ է կրկնու Դ և ինչ բառով որ վերջանում է գ.  
 տողը, նոյն բառով էլ սկսու Դ գ. տողը մեր օրինակ բերած Քիւ-  
 նիաթ-Դիւանու մէջ պարզ յայտնի է այդ ամենը: Սրա ամեն  
 մի տողը կազմուած է լինում 16 վանկից:

## 12. ԸՆԴՈՒՄԻ ԳԻՒԱՆԻ.

Իսկ Արարչից ամեն մարդու մէկ բնութիւն տրուած է,  
 Որը ազատ որը գերի ցաւերու մէջ խրուած է.  
 ձշմարիտ խօսողներու գազաթները ծակ պէտք է միշտ.  
 Որովհետեւ ստի ձեռքից կեղծաւորուած մրուած է:

Բուպայի-Նիւանին շատ նման է Գաղէլ-Նիւանուն, միայն  
 նրա տողերի վերջինի նախնիթաց բառերի պէս միատեսակ վեր-  
 ջաւորութիւն չունին այլ վերջանում են զանազան տեսակ:

## 13. ԹՈՓԻՍԱՆԱՅ ԳԻՒԱՆԻ.

Քո փափաղով վառւում եմ արի սիրական ուրտեղ ես.  
 Երկնային ամպերու մէջ նստող ծիածան ուրտեղ ես.  
 ձանապարհդ նայելով աչքերումս լոյս չ'մնաց,  
 Եկ երևոյթ տեսանեմ ազնիւ սիրական ուրտեղ ես:

Թոփիսանայ-Նիւանին էլ իւր կազմութեամբ Գաղէլ-Նիւ-  
 անի է, միայն սրա եղանակը ջոկ է նրանը ջոկ: Թոփիսանայ-Նի-  
 ւանու եղանակը դուրս է եկել տաճկաց ամրածիզ զօրքերի ե-  
 ղանակներից:

## 14. ՄԻՒՍԷՏՏԷՍ-ԳԻՒԱՆԻ.

Այն կորաւ հայրենիքիս փառքը բոլոր յատկութիւնը,  
 Շարժուեց տեղից տունը. կործանուեցաւ հաստատ սիւնը,  
 Գաղթելով ամբողջ ժողովուրդը օտարաց անկիւնը.  
 Թողնելով կալուածքները առւտուրը ողջ արգիւնը,  
 Այլազունք չեն մեղաւոր մեզնից եղաւ դառնութիւնը.  
 Մեր ձեռքով մեր աչքերը հանել տուեց մեր արիւնը:

Միւսէտտէս-Նիւանին՝ ամեն տունը լինում է 6 տող. վեր-  
 ջի 2 տողը կրկնում է միւս տուներու հետ. իսկ միւս տուներու  
 ա. բ. գ. և դ. տողերի վերջաւորութիւնը լինում են նոյնա-

Նման ինչպէս առաջինն է: Ամեն մի տողը կազմուած է լինում 15 վանկից:

15. Դ Ա Ս Ի Թ Ա Ն.

Առակախօս նախնի հեղիակները,  
 Ինչ ասել են իրաւ արդար են ասել.  
 Քննելով մարդկանց նպատակները,  
 Արին խելօք որին յիմար են ասել:

Դասիթանը շատ նման է Աօշմային, միայն առաջինը հիւսուած է լինում սովորարար երկար. 10-100 տուն: Դասիթանի բոլոր տուների դ. տողերը վերջանում են ա. տան ա. և դ. տողերի պէս և ինչպէս այս օրինակի մէջ երևում է, միշտ «ար» մասնիկը «են ասելից»-ից յառաջ: Դասիթանը առ հասարակ լինում է առական, իրատական խօսքեր և այլն:

16. Ք Ե Օ Ի Օ Ղ Լ Ի:

Քեօրօղլին էլ միւսնոյն Աօշման է, միայն կազմուած է լինում քաջութեան ոգի ունեցող մտքերով. Քեօրօղլի ասում են նրա համար, որ յայտնի Պարսիկ Քեօր-Օղլին այդ եղանակով է երգելիս եղել իւր դիւցազնական երգերը:

17. Ղ Է Լ Է Ն Տ Ե Բ Ի.

Ով մարդ հեռացիր խաբերայ խարդախ սիրականից,  
 Օգուտ չի լինիր խեղճ սիրահար ձախ սիրականից.  
 Քեզ պէս քանի՞ անձինք խաբելով զրկել է փառքից,  
 Փախիր ուրեմն անամօթ անվախ սիրականից:

Ղ էլէնտերին ինչպէս որ ա. տան ա. բ. և դ. տողերը միատեսակ են վերջանում, օրին. «. . . ախ սիրականից» այնպէս էլ միւս տուներու վերջին տողը լինում է . . . ախ» մասնիկը «սիրականից» առաջ: Իսկ միւս տուներու ա. բ. և դ.

տողերը միատեսակ են լինում վերջացած: Սրա ամեն մի տողը բաղկացած է լինում 14 վանկից: Այլէնտերին մի տեսակ դէր-վիշներ կան նրանց եղանակն է:

18. Թ Է Ճ Ն Ի Ս:

Իմ տուած յարգանքս պատուելի ընկեր,  
Անկեղծ սիրելի պատիւ համարէ,  
Իմացիր քո սէրդ սրտումս է ընկեր,  
Այրիլս քո տեսոյդ, քեզի համար է:

Թէճնիսն էլ միևնոյն Առշմայի տեսակ է, միայն սրա ամեն տան ա. բ. գ. տողերի վերջերը թէև մի բառով են վերջանում, բայց տարբեր նշանակութեամբ. օրին. այստեղ ա. տան մէջ «ընկեր» բառը և «համարէ» բառը: Թէճնիսի միւս տուներու ա. բ. գ. տողերի վերջերը լինում են միասնական բառերով, բայց ջոկ նշանակութեամբ. իսկ դ. տողերը միևնոյն ա. տան, դ. տողի վերջաւորութեան պէս, դարձեալ ամենը մի նշանակութեամբ:

19. Գ Ե Ա Փ.

Ասիր սիրելի իմ աղաչանքս,  
Արժան համար է լուր պաղատանքս.  
Կեղծ մի համարիր իմ գովասանքս,  
Սրտով սիրում եմ քեզ բարի կեանքս:

Գեաֆի ա. տան տողերի վերջաւորութեան պէս են վերջանում միւս տուներու դ. տողերը, իսկ ա. բ. գ. տողերը իւրաքանչիւր տան մէջ մի տեսակ են վերջանում: Սրա ամբողջ մի տողը կազմուած է լինում 10 վանկից:

20. Է Վ Է Լ Ա Խ Բ:

Կատարեալ լինելու համար գեղեցիկ,  
Կարդա բարոյական գրքերը յատուկ.



Կարող ես նրանով լինիլ երջանիկ,

Կենարար Փրկիչը յիշելով ծածուկ:

Սա էլ միևնոյն Ղօշմայ է միայն «Էվէլ-ախր» նշանակում է  
(առաջ և վերջ) այսինքն որ սրա տողերը ինչ տառով որ սկսւում  
են, նոյն տառով էլ վերջանում են. ինչպէս մեր օրինակում «կ» տառը:

21. Ս Ե Լ Ի Ս.

Մի լինիր ով բնութիւն կեանքիս դաւաճան մի լինիր,

Մի լինիր ինքնահաւան մարդուն սիրական մի լինիր.

Աշխատիր առաքինի նիւթեր ժողովէ անօթդ,

Մնտի անօգտաւէտ, բառի օթեան մի լինիր:

Սեւիսի ա. բ. և դ. տողերը որ ինչ տեսակ են վերջա-  
նում, այստեղ « . . . . ան մի լինիր» այս պէս էլ վերջանում են  
միւս տուներու բ. և դ. տողերը: Սրա ամբողջ տողը լինում է  
15 վանկից:

22. Շ Է Ք Ի.

Ով մարդ արևելեան, բոյս կենդանութեան,

Խրախոյս Հայկական, ցոյց տուր քո տերև.

Կսպասէ քո դարնան, ծառայ և իշխան,

Քեզնից ողջ Հայաստան, ինդրում է պարզև:

Շէքիի ամեն մի տողը բաժանուած է լինում երկու մասի,  
մի տեսակ ոտանաւորով. և ա. տան բ. և դ. տողերի վերջա-  
ւորութեամբ վերջանում են միւս տուների դ. տողերը. իսկ նը-  
րանց ա. բ. դ. տողերը, նոյնպէս երկու մասի բաժանուած, լի-  
նում են ջոկ ոտանաւորով: Ամբողջ մի տողը կազմուած է լինում  
11 վանկից որոնք. բաժանում են 6 և 5:

23. Ս Ա Թ Ի Ա Ն Ճ.

Գլտութիւնը մշտապէս ով մարդ առանձին թե կուտայ,

Մշտապէս ո՛վ մարդ առաձին թե կուտայ պարզե կուտայ.  
 Ո՛վ մարդ առաձին թե կուտայ պարզե կուտայ լաւ ձե կուտայ,  
 Թե կուտայ պարզե կուտայ լաւ ձե կուտայ իսկ և կուտայ:

Սաթրանձ կ'նշանակէ աղուսեակաձե, սրա կանոնը լինում է այս տեսակ. բ. տողը լինում է ա. տողի բառերը միայն առաջից մի բառ թողած և վերջից աւելացրած. յետոյ երկրորդ, երրորդ, այնպէս որ ա. տողի վերջին բառը ընկնում է դ. տողի սկիզբը: Սաթրանձի միւս տուներու վերջերն էլ լինում են ա. տան վերջաւորութեանց պէս. օրին. « . . և կուտայ»: Սրա ամբողջ տողը կազմուած է լինում 15 վանկից:

#### 24. Զ Ի Ն Ճ Ի Լ Լ Ա Մ Ա Յ.

Զինձիլլամայ, այսինքն շղթայակապ. սրա օրինակ բերելը աւելորդ համարեցինք, որովհետեւ սա ոչ այլ ինչ է եթէ ոչ կամ Ղոշմայ կամ Դիւանի, կամ ինչ որ լինի, միայն ա. տան վերջին բառով սկսւում է բ. տունը. իսկ բ. տան վերջինով դ. տունը, այսպէս շարունակաբար մինչև վերջը:

#### 25. Բ Ա Հ Ր Ի - Թ Ա Ի Ի Լ

Բահրի-Թաւիլ. այսինքն ծովի տեսակ ալիքաւոր, Սրանից օրինակ բերելը աւելորդ համարեցինք. Բահրի-Թաւիլը լինում է մի գրուածք որի տողերի կազմութիւնը լինում են մինչև 160 կամ աւելի վանկերից, միայն մէջ տեղերը մանր ոտանաւորներ:

#### 26. Գ Ի Ի Զ Ա Լ Լ Ա Մ Ա

Գիւզալլամայ, սա էլ ինչ տեսակ ուղում է լինի գրուած, միայն թէ սիրահարական լինի:

#### 27. Ա Լ Ի Ֆ Լ Ա Մ Ա.

Այս էլ լինում է այբ ու բնական կարգով. առաջին տու-

նը կ'սկսուի ա. տառով. երկրորդը բ. տառով մինչև վերջը: Այդպէս է գրել Ներսէս Ծնորհալի հայրապետը իւր «Առաւօտ լուսոյ» գիշերային երգը:

### 28. ՂԱՓՈՒԼ ԼԱՄԱՅ.

Այս էլ լինում է այնպիսի երգ որ հարցասական մտքով (հանե-  
ուկի ձևով) է յօրինուած, որ շատ հարցեր կ'պարունակէ իւր մէջ:

### 29. ԴՕՏԱԽ-ԴԷԿՄԷՁ.

Դօտախ-Վէկմէզ, այսինքն շրթունքները չ'դիպչող. ինչպէս  
ասել ենք արդէն մեր գրքի նախընթաց գլուխներում այս երգը  
գրում են այնպէս, որ ասելու կամ երգելու ժամանակ ամենուին  
շրթունքները չ'դիպչին իրար:

### 30. Դ Ի Լ-Թ Ա Փ Ր Ա Մ Ա Ձ.

Դիլ-Թափրամազ (լեզուն չ'շարժւող) այս էլ լինում է այն-  
պիսի բառերով կազմուած, որ կարդալու կամ երգելու ժամանակ  
լեզուն չի շարժուիլ տեղից:

### 31. Ի Յ Ձ Ա.

Իսկան լինում է ամեն մի տունը երեք տող. այդ երեք տո-  
ղերի վերջերն էլ միատեսակ են լինում և վերջինի նախնթաց  
բառերն էլ միատեսակ մասնիկներով են վերջանում, ամեն ասույլ  
լինւմ է 15 վանկ:

Մենք ասացինք որ մեր աշուղները իւրեանց բանաստեղ-  
ծութիւնները գրել են 64 տեսակ կանոններով. մենք ցոյց տը-  
ուինք միայն 31 հատը. իսկ մնացածները մեզ յայտնի չեն: Դուցէ  
մինն էլ այս լինի, որ աշուղները մի տեսակ սովորութիւն ունին  
որ երգի ամեն տան առաջին տառերով կ'կազմեն մի որեւիցէ մար-  
դու անուն. օշինակ մի երգ նուիրւած է լինում Արամ անունով  
մի մարդու. այդպէս այդ երգը կ'լինի չորս տուն. առաջին տու-

նը կ'սկսուի «Ա» տառով բ, տունը «բ» տառով գ. տունը «ա»  
տառով և գ. տունը «մ» տառով:

## Ը.

## ԱՇՈՒՂԸ ՈՐՊԷՍ ԳՐՈՂ.

Մեր յիշած աշուղների մէջ կան այնպիսիները որոնք գրել են բաւականաչափ երգեր, բանաստեղծութիւններ և բազմ են ունեցել նրանց լոյս աշխարհ հանելու: Մենք յիշում ենք այն աշուղների գլուխները որոնք լոյս էն ընծայուել կամ առանձին գրքով կամ մի որ և է հրատարակութեան մէջ:

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅ. սրա բանաստեղծութիւնները առանձին գրքով լոյս են տեսած 1852 թուին. Պ. Գէորգ Ախվերտեանի հրատարակութեամբ. տպուած է Մոսկուայում Վլադիմիր Գոսեէի տպարանում: Բացի այդ Սայեաթ-Նովի երգերից մի բանիսը տպագրուած են «Քնար-Հայկականի» մէջ: (Ժողոված. Մ. Միանսարեան):

ՉԻՐՔԷՉ-ՅՂԼԻ: Սրա երգերը տպագրուած են Բաղում, բարեկրօն Գրիգոր քահանայ Գրիգորեանի հրատարակութեամբ լոյս տեսած «Սոխակ-Հայաստանի» լիակատար երգարանի գ. հատորում:

ԻԻԱՆ: Սրա երգերը նոյնպէս վերոյիշեալ հրատարակութեան մէջ:

ԹՈՒՐԻՆՁ: Սրա երգերը նոյնպէս վերոյիշեալ հրատարակութեան մէջ:

ԱԶԲԱՐ-ԱԴԱՄ. Սրա երգերը «Քնար-Հայկականի» մէջ և Յով. Տէր-Ոսկանեանցի «Նոր, Քնար» հրատարակութեան մէջ:

ՄԷԼՔԻՍԷԹ. Սրա երգերը «Սոխակի գ. հատորում:

ՋԱՀԵԼ-ՅՂԼԱՆ. Սրա երգերը վերոյիշեալ հրատարակութեան մէջ:

**ՄԱԼԻԻԼ:** Սրա երգերը առանձին գրքով լոյս տեսան Բազում 1884 թուականին «Սիոնի երգեր» վերնագրով. տպագրուած է Ալէք. Ղասապեանի տպարանում: Մալիւլի երգերը տպագրուած են և «Սոխակի» հատորներում: Ունի և նոր երգեր անտիպոր մտադրութիւն ունի տպագրելու:

**ՇԻՐԻՆ:** Սրա երգերը թէև մի ժամանակ տպագրուած են եղել, բայց բոլորովին հետքերը կորելու մօտ էր երբ վերջերս Շուշում Զ. Սարգսեանը հրատարակեց «Նոր Քնար» վերնագրով. տպագրութիւն Միրզ. Մհտս. Յակովբեանի, 1891 թ: Բացի այդ Շիրինի երգերը տպագրուած են և «Քնար-Հայկականի» մէջ:

**ՇԱՀԻՐ-ԽԱՉԱՏՈՒՐ:** Սրա երգերը անցեալներում լոյս տեսան «Շահիր-Խաչատուրի երգերը» վերնագրով:

**ՉԱՐԿԵԱՐԻ-ՔՆԱՐ:** Սրա երգերը անցեալներում Բազում լոյս տեսան «Չարկեարի-քնարը» վերնագրով հրատ. Գր. քահան. Գրիգորեանի:

**ՍԱԶԱՅԻ:** Սրա երգերը եթէ չեմ սխալում պէտք է որ տպագրուած լինի առանձին գրքով. սա ունի և մի ճաճկերէնից փոխադրած հեքեաթ «Ամրահ և Սալի» վերնագրով. տպագրուած «Արօր» տպարանում:

**ՖԻԶԱՀԻ:** Սրա երգերը լոյս է տեսած 1889 թուականին «Աշղ-Ֆիզահու երգերը» վերնագրով, Թիֆլիս Ռօտինեանցի տրպարանում:

**ՋԻԻԱՆԻ:** Սրա երգերը «Աշղ-Ջիւանու երգերը» հատոր ա. վերնագրով տպագրուած է 1882 թուականին Ալէքսանդրապոլում, Գ. Սանոյեանցի տպարանում:

«Աշղ-Ջիւանու երգերը» 1886 թուականին նոյն տպարանում, հրատարակութիւն Տ. Թումանեանցի:

«Աշղ-Ղարիբ հեքեաթը» փոխադր. ճաճկերէնից, տպագրուած է Ալէքսանդրապոլում 1887 թ. նոյն տպարանում:

«Աշղ-Ղարիբ հեքեաթը» Թիֆլիս Մ. Վարդանեանի տր-

պարանում 1889 թ. բ. տպագր. ինքնուրոյն երգերի յաւելու-  
ածով:

«Քեարամի և Ասլիի հեքեաթը» փոխադր. Տաճկերէնից  
տպագրուած է Ալէքսանդրապոլ Գ. Սանոյեանցի տպարանում,  
տպարանատիրոջ հրատարակութեամբ:

«Զորս երգ» (բրոշուր) տպագրուած է Թիֆլիսում Մ. Վար-  
դանեանցի տպարանում. հրատարակութեամբ Յ. Կապլանեանցի.  
1890 թ.

Մամուլի տակ են «Աշըղ-Ղարիբի հեքեաթը» գ. տպագր.  
Ալէքսանդրապոլ Գ. Սանոյեանցի տպարանում և

«Զայնագրեալ երգարան» Ս. Էջմիածնում. Ասիական եղա-  
նակներով ձայնագրեց Արշակ Բրդեան:

«Զութակ» բոլորովին լոյս չ'տեսած երգեր. պատրաստ է  
տպագրութեան համար:

«Աշըղ-Ջիւանու (անտիպ) երգերը» մի յարգելի պատճա-  
ռով առ ժամանակ յետաձգուած է:

Շահ-Իսմայիլի հեքեաթը» փոխադր. Տաճկերէնից պատ-  
րաստ է տպագրութեան:

Բացի սրանցից Աշըղ-Ջիւանու երգերից շատերը շարու-  
նակաբար տպագրուում են «Սոխակի» հատորներում:

ՋԱՄԱԼԻ. Սրա երգերը տպագրուած են «Սոխակի» գ. հա-  
տորում: Կարծեմ մտադրութիւն ունի լոյս ընծայելու: Յանկա-  
նում ենք յաջողութիւն:

ԽԱՅԱԹ. Սրա երգերը Ալէքսանդրապոլում լոյս է տեսած  
1890 թւին Գ. Սանոյեանցի տպարանում. «Անձայն Կիթառ»  
վերնագրով: Տպագրութեան պատրաստ ունի ևս մի աշխատու-  
թիւն «Արբեցութեան հետեանքը»

Մենք այստեղ յիշեցինք այն աշուղների գրուածքները որոնք  
կամ առանձին գրքով և կամ մի ուրիշ հրատարակութեան մէջ  
թուով շատ երգեր են ունեցել. թողնենք նրանց, որոնք մի կամ

մի երկու երգ բաղդի բերմամբ ունին տպագրուած մի որև է  
հրատարակութեան մէջ:

## Թ.

## ԱՇՈՒՂԸ ՈՐՊԵՍ ԵՐԳԻՉ-ԵՐԱԺԻՇՏ.

Ինչպէս գրքիս առաջին գլխում նշանարանը ցոյց է տալիս  
որ «ամեն աշուղ երգիչ է» մենք այդ մասին կարող ենք մի քանի  
խօսք ասել թէ ինչ կ' նշանակէ երգ և երաժշտութիւն.

Ազդումն երաժշտական եղանակին . . .  
ընդօստուցեալ զարթուցանէ զմիտս ամե-  
նեցուն առ ի տենչումն շնորհին, քանզի  
չիք ինչ որ զկամս մեր չեղաչքէ ուրախու-  
թիւն կամ ի տրտմութիւն, որպէս զերգոցն  
ձայն չորժամ որպէս պարտն է լինիցի վա-  
սըն աչնօրիկ և եկեղեցական աւանդութիւն  
ընկալաւ զայն:

Ներսէս Լամբրոնացի.

Թէ ինչ մեծ օգուտ են տուել ժողովրդական երգերը մեր  
պատմագիրներին այդ մենք գիտենք և թէ մի քանի դար ա-  
ռաջ երգիչները ինչ են եղել որ ժողովրդի ծէսերը աւանդու-  
թիւնները շարունակ երգելով և բերնէ բերան տալով այժմ հա-  
սել են մինչև մեր ժամանակը: Նրգ և երաժշտութիւնը շատ մեծ  
ազդ ունի ոչ միայն մարդու, այլ մինչև անգամ կենդանիների  
վրայ: Մենք շատ օրինակներ լսած կամ կարդացած կ' լինինք այդ  
մասին. մի շատ լաւ յօդուած գրուած կայ «Սոխակի» ե. հատո-  
րում արժ. Ղազարոս քահանայ Յովսէփեանի «Երաժշտութեան  
ազգեցութիւնը» վերնագրով. որտեղից մենք միայն քաղում ենք  
հետեւեալ կտորը. «Նրք որ բանաստեղծ Արփէոսը երգում և նու-  
ազում էր տաւղի վերայ, ծառերը, գետերը, ծովի կատաղի ջը-  
րերը, և վայրենի անասունները դադարում էին շարժւելուց և  
հիացած Արփէոսի գեղեցիկ նուագածութիւնն էին լսում»: Ինչ-

պէս յայտնել է «Սօխակ» ում որ այդ մասին աւելի ընդարձակ տեղեկութիւն տպուած կայ 1884 թուի «Նոր-Նար» ամենօրեայ թերթի № № 167-198 համարներում բանասիրական բաժնում «Երաժշտական բնաստական (Ֆիզիոլիական) ազդեցութիւնը»:

Աւելի զեղեցիկ օրինակ մենք տեսանք գրքիս 2. գլխում թէ Աշղ-Նիտային երգի և երաժշտութեան ազդեցութեամբ ի՞նչպէս շարժեց զազանարարոյ Սուլթանի խիղճը, որ այդ աճականը կարծես Տաճիկ Սուլթանների համար մի առանձին յատկութիւն է:

Մեր գրքում յիշած աշուղների մէջ եղել են լաւ ձայն ունեցողներ և լաւ աճողներ, որոնք կարելի է ասել որ եղել են բուն երգիչներ և երաժիշտներ:

## Ժ.

### ՄԻ ԹԵԹԵԻ ԱԿՆԱՐԿ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐԻՆ.

Մենք յիշել ենք աւելի քան 200 աշուղներ, բայց ցաւօք սրտի պէտք է ասենք որ նրանցից կէս մասի երգերը հազիւ կարողացանք ձեռք բերել: Բայց պէտք է խոստովանել որ մեր աշուղների մէջ եղել են այնպիսի գրողներ, որոնց երգերի վրայ արժէ առանձին ուշադրութիւն դարձնել: Բայց մենք ընդհանրապէս կ'իսուենք բոլոր այն աշուղների վրայ, որոնք մեր հասարակութեանը և մասամբ էլ գրականութեանը յայտնի են եղել իւրեանց երգերով:

Աշուղական երգերը մենք կ'բաժանենք երեք մասի. Ա. կան մի տեսակ երգեր, որ թէև կէս ուամկական կամ զաւառական բարբառով և աշխարհարար ոճով ու դարձուածքնրով են գրւած, բայց շատ սահուն է և «համով» է կարողացուում: Բովանդակութեամբ մեծ մասամբ կրօնական, սիրահարական և մասամբ խրատական, բարոյական, փորձեր և այլն: Այդպիսի երգերի հեղինակներին պատկանում են Սայեաթ-Նովէն, Ազրար-Աղամբ,



Միակին-Բուրջին, Նաղաշ-Յովնաթանը, Քեշիշ-Նովասին, Շամցի-Բալին, Նաշխունովը, Սէֆիլ-Գեօֆթարին, Զարկեարը, Մելքիսէթը, Զահել-Օղլանը, Իւանը, Շիրինը, Մալիւլը և Ֆիզահը:

Բ. Կան մի ուրիշ տեսակ երգեր էլ որ հետզհետէ յարմարեցրած է գրականական և գրարան ոճին. թէև թողել են ռամկականը, բայց էլի բուն ժողովրդական բովանդակութեամբ մեծ մասամբ խրատներ, փորձեր, առակներ, յետոյ ազգային և մասամբ սիրահարական: Այդպիսի երգերի հեղինակներին պատկանում են. Աղամ-Նաղաշովը, Բլբուլիկը, Մայիֆը, Ղարիբ-Օղլանը, Զիւանին, Զամալին, Խայաթը, Ֆէրեատին, Սազային, Շահիր. Խաչատուրը Պայծառէն:

Յիշեալ աշուղները թէ աշուղական հին կանոնի ձևերով են գրում իրանց երգերը, թէ հետզհետէ նոր տեսակ (ուսումնական) ձևով:

Գ. Կան մի ուրիշ տեսակ երգեր էլ, որ հեղինակներն աշխատել են միայն սողերի վերջաւորութիւնները տեղը բերելու իսկ ինչ վերաբերում է երգի նիւթին, բովանդակութեանը այդ մասին ամենևին ուշադրութիւն չեն դարձրել. մինչև անգամ ոտանաւորը տեղը գալու համար այնպիսի բառեր են գործ ածել որ այդպիսի բառ ամենևին չկայ:

Իովանդակութեամբ աւելի սիրահարական են քան մի ուրիշ բան: Այդպիսի երգերի հեղինակներին պատկանում են: Խարաղ-Օղլանը, Ալուան-Օղլանը, Ղարան, Արել-Օղլին, Շամցի-Մելքօն, Զուլալ-Օղլին, Ղէյրաթին:



## ԸՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Սկզբից մի տեղից տեղեկացանք որ Գերասուզակ և պատուարժան Հայր Աւոնդ Ալիշանը հայ աշու ընդրի մասին տեղեկութիւններ ունի հաւաքած: Յայտնեցինք նրան մեր մտադրութիւնը և խնդրեցինք նրանից որ մեզ նիւթեր ուղարկէ. շատ չքանցած Յարգելի Հայրիկից ստացանք հետևեալ նամակը:

Վենետիկ Ս. Ղազար 7 Հոկտ. (25 Նոյեմբերի) 1891

### Ազնիւ Պարոն

Քսան .եջ աւելի տարիներ առաջ՝ իմ հրատարակած Յուշիկը Հայրենեաց՝ գրոց երկրորդ հատորին մէջ կայ «Վսպասանութիւնք Հայոց» վերնադրաւ յօդուածմ ալ որոնց վերջերը յիշած եմ քանի մի ինձ յանուանէ ծանօթ Աշուղներ, այն է՝ ձեր յիշածն: Առանձին տպագրուած չէ այդ. կ'յուսամ որ կրնար այդ տեղ գտնել մէկու քով այդ գիրքը եւ քննել. եթէ այդ անկարելի ըլլայ գտնել 'ի տեղդ կամ 'ի Թիֆլիզ իմացուցէք եւ եթէ հարկ համարէք իսարեմք երկու հատորներն ալ վասն զի առանձին չեն .զատուիր:

Այս առթիւ կ'ողջունեմ պատուական հայրդ եւ յուսամ որ Շիրակայ դաշտերն եւ մերձաւոր Արագածն երկար տարիներ ալ ներշնչեն իրենց անուշակ եւ աջողակ երգեր: Եւ մնամ քու գեղեցիկ մտածութեանդ կատարելութեամբ տեսնել տպագրութեամբ:

Հ. Աւոնդ Մ. Ալիշան.

Յարգելի վարդապետի այս նամակը մենք ստանալուն պէս,  
խակոյն ձեռք բերինք «Յուշիկք Հայրենեաց Հայոց» պատուական  
գիրքը և բաւականին նիւթեր կարողացանք օգտուել:

Մեր խորին շնորհակալութիւնը յայտնում ենք և հետևեալ  
անձանց որոնք մեզ նիւթեր հաղորդելով կարելոյն չափ օգ-  
նեցին մեր գրքի հարուստ նիւթեր ունենալուն:

Աշղ-Մալիւլին.

Աշղ-Ֆիզահուն.


Աշղ-Ֆէրեատուն.

Երզիչ պ. Տիգրան Զաքարեանին.

Ուսուցիչ պ. Շմաւոն Յովսէփեանին:







264

824